Azg
Ազգ
7 ԱՊՐԻԼ 2007 ՇԱԲԱԹ 64 (3716)

Հայաստանի Ազգային Գրադարան

Ամենայն հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հայ կանանց

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Սուրբ Ավետման տոնը տարիներ առաջ հռչակվել է իբրեւ Մայրության օրհնության օր: Ապրիլի 7-ին հանրապետության բոլոր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության հատուկ կարգ: Ինչպես տեղեկացրին Մայր աթոռի մամլո դիվանից, Սուրբ Աստվածածնի ավետման եւ Մայրության տոների առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել հայ կանանց: Հայրապետական ուղերձում ասվում է. «Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին՝ Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի եւ կանանց՝ Մայրության տոնի առիթով: Ամենօրհնյալ Սուրբ Աստվածածինը առ Աստված իր մեծ հավատով կատարյալ օրինակ է կանանց համար՝ արժեւորելու իրենց վեհ առաքելությունը ազգային եւ ընտանեկան կյանքում:

Թող Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ Բարին Աստված օրհնի բոլոր մայրերին՝ ապրելու բարօր ու երջանիկ, դաստիարակելու արժանավոր զավակներ եւ երկնառաք բյուր շնորհներով զարդարի տիկնանց եւ օրիորդաց իր ամենախնամ սուրբ աջի հովանու ներքո»:

Իբր Ֆրանց Վերֆելը խաբվել է...

Թուրքերի հերթական ապակողմնորոշումը հրեական ղաբբիի միջոցով

ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆ
Պրահա

Ապրիլի 24-ից առաջ թուրքերը կրկին անցնում են հարձակման, ցանկանալով միջազգային հանրությանը ապակողմնորոշել հայոց ցեղասպանության հարցում:

Չեխական ազդեցիկ «Մլադա Ֆրոնտա Դնես» օրաթերթը ապրիլի 5-ին երկու ուշագրավ թղթակցություններով անդրադարձել է հայոց ցեղասպանության խնդրին: Մասնավորապես առաջին հոդվածում հեղինակ Լյուբոմիր Հեգելը վերլուծել է Միացյալ Նահանգների կոնգրեսի կողմից հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման հնարավորությունը եւ դրա հավանական ազդեցությունը թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: «Ինչպես մխիթարել հայերին եւ չվիրավորել թուրքերին» այսպես է վերնագրել իր հոդվածը «ՄՖ Դնեսի» թղթակիցը:

«Զարդեր, անսահման ողբերգություն, աղետ, զանգվածային սպանություններ: Այս բոլոր բառերը հնչել են Ջորջ Բուշի շուրթերից, երբ նա նկարագրել է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում 1.5 միլիոն հայերի մահը»: Սակայն, ըստ հեղինակի, ամեն անգամ Բուշի խորհրդական-հեղինակները զգուշացրել են, որ նա չարաստանի չորս վանկանոց բառը՝ գենոցիդա (չեխերեն այսպես է գրվում):

Այս տարի էլ, Բուշը կրկին պետք է այնպիսի բառախաղի դիմի, որ խոսի ցեղասպանության մասին առանց այդ բառը ասելու, եզրակացնում է հեղինակը:

Այնուհետեւ նկարագրելով Կոնգրեսի եւ Սպիտակ տան հարաբերությունները, հոդվածագիրը ներկայացնում է Ներկայացուցիչների պալատի խոսնակ դեմոկրատ Նենսի Փելոսիի հաստատակամ դիրքորոշումը ցեղասպանության մասին բանաձեւ ընդունելու մասին, Միացյալ Նահանգների արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների հորդոր-դիմումները՝ բանաձեւ չընդունելու մասին, թուրքական լոբբիստական պատվիրակությունների Միացյալ Նահանգներ կատարած այցերը:

Տես էջ 2

Ֆրանսիան դեսպանատուն է բացելու Իրաքյան Քուրդիստանում...

Այդ մասին Հյուսիսային Իրաքի վարչական կենտրոն Էրբիլում բրդական իշխանությունների հետ վարած բանակցություններից հետո երեկ հայտարարել է Իրաքում Ֆրանսիայի դեսպան Ժան-Ֆրանսուա Ժիրոն: Հանդիպելով բրդական վարչակարգի արտաքին գերատեսչության ղեկավար Ֆալահ Մուստաֆայի հետ, դեսպանը նշել է, որ իրենք անհամբերությամբ են սպասում Էրբիլում Ֆրանսիայի դեսպանատան բացմանն ուղղված նախնական քայլերի կատարմանը:

Դեսպան Ժիրոն, ինչպես նշում է «Զաման» թերթը, ընդգծել է, որ Էրբիլում դեսպանատան բացումը «շրջադարձային» նշանակություն է ունենալու բրդական վարչակարգի հետ Ֆրանսիայի հարաբերություններում, ինչպես նաեւ լուրջ գործոն է լինելու իրական Քուրդիստանի եւ Եվրամիության երկրների փոխհարաբերությունների զարգացման ճանապարհին:

Քանի որ որեւէ պետություն նույն երկրում երկու դեսպանություն չի ունենում, ուստի Բաղդադից հետո նաեւ Էրբիլում ֆրանսիական դեսպանատան բացումը պետք է վերագրել Իրաքի մոտալուտ մասնատմանը:

Հ. Ջ.

ՕՐՇՆՅԱԼ ԼԻՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ

Սուրբ Հարություն. Զատկական տոն

Ապրիլի 8-ին Հայ առաքելական եկեղեցին տոնում է Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Սուրբ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե՛ Հին եւ թե՛ Նոր կտակարաններում համարվում է մեծագույն տոներից մեկը:

Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահվանից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ նրա մարմինն իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, փակելով մի մեծ քարով: Երրորդ օրը՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը եւ Սողոմեն գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքից քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երեւացին երկու հրեշտակ եւ ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ. ԻԴ 4-9): Հարության լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո Հիսուս երեւում է նրանց:

Քրիստոսի հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության եւ հավատի հիմքը:

Զատկի տոնին մարդիկ ձու են ներկում: Ձուն համարվում է հարության եւ նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մեր փրկության համար: Ս. Գրիգոր Տաթեւացին ձուն կարմիր ներկելու մասին ասում է. «Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրինակ է աշխարհի, եւ ինչպես իմաստուններն են ասում, «դրսի կեղեւը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հռչակում ենք մեր փրկությունը»:

Ս. Հարության տոնին նախընթաց երեկոյան՝ այս տարի ապրիլի 7-ի երեկոյան, եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի պատարագ, որի ընթացքում պահք պահողները հաղորդություն ստանալով, դուրս են գալիս պահքից, եւ սկսվում են զատկական տոնակատարությունները: Այդ օրվանից հավատացյալները միմյանց ողջունում են՝ «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց» ավետիսով, պատասխանն է՝ «Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի»:

Ապրիլի 7-ին՝ ժ. 18.00-ին, Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում կմատուցվի Ճրագալույցի Ս. Պատարագ, որից հետո մարդիկ դուրս կգան պահքից եւ կսկսեն տոնել Ս. Հարության տոնը:

Ապրիլի 8-ին՝ ժ. 11.00-ին, Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը տոնական Ս. Պատարագ կմատուցի:

Արարատյան Հայրապետական թեմի Մամլո դիվան

ԵԱՀԿ հրդեհների մասին զեկույցը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում

Ղարաբաղին հարակից տարածքներում հրդեհների մասին զեկույցը կքննարկվի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ապրիլյան նիստում: Զեկույցը քննարկելուց հետո ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան կներկայացնի իր առաջարկությունները: Ամեն դեպքում, «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, ԵԱՀԿ հրդեհների մասին զեկույցը պետք է քննարկվի մինչեւ ապրիլի 30-ը: Իսկ ինչ վերաբերում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստում՝ ՎՈՒԱՄ (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա) երկրների «սառեցված հակամարտությունների» առնչությամբ նախագծի քննարկմանը, ապա այն եւս ակնկալվում է այս նստաշրջանում մինչեւ օգոստոս:

ԱՊՀ երկրների սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի նիստ Ծաղկաձորում

Ապրիլի 10-13-ը Ծաղկաձորում տեղի կունենա ԱՊՀ անդամ պետությունների սահմանապահ զորքերի հրամանատարների խորհրդի հերթական նիստը: Հայաստանի ազգային անվտանգության ծառայության հաղորդագրության համաձայն, նիստին մասնակցելու հայտեր են ներկայացրել ԱՊՀ գործադիր կոմիտեի, ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարությունների կազմակերպության, Եվրասիական տնտեսական համագործակցության, ինտեգրացիոն կոմիտեի քարտուղարության, ԱՊՀ անդամ պետությունների հակահաբեկչական կենտրոնների ներկայացուցիչները: Նիստում քննարկվելու են միջազգային ահաբեկչության եւ ծայրահեղականության դեմ պայքարի ԱՊՀ ծրագիրը, փոխգործակցության սահմաններում ճգնաժամային իրավիճակների կարգավորման, ապօրինի միգրացիային, թմրաբիզնեսին, մախանենգությանը, ԱՊՀ երկրներում զենքի ապօրինի փոխադրմանը հակազդեցության հարցեր:

Կովկաս-Փոթի լաստանավի փորձարկում

Կովկաս-Փոթի լաստանավային գծանցման առաջին փորձարկումը նախատեսված է օրերս, ինչի հիման վրա գծանցման առաջին ուղերթը տեղի կունենա ապրիլի 9-ին: «Ինտերֆաքս» գործակալության տեղեկացմամբ, լաստանավը Կովկաս նավահանգստից դուրս կգա ապրիլի 7-ին եւ Փոթի կհասնի մոտավորապես ապրիլի 9-ին: Այդ փորձնական ուղերթին, հաջող ելքի դեպքում, կհետեւեն սովորական ուղերթերը՝ շաբաթական մեկ անգամ մինչեւ երկրորդ լաստանավի ներմուծում, որից հետո ուղերթերի քանակը կկրկնապատկվի:

Ա. Հ.

ՎԱՐՊԵՏԻ ՀԱՐՎԱԾ

Քըրքորյանն ուզում է հետ գնել «Կրայսլերը»

Միլիարդատեր Քըրք Քըրքորյանին պատկանող «Թրեյսինդա» ֆիրման պատրաստ է 4,5 մլրդ դոլարով ձեռք բերել «Կրայսլեր» ավտոմոբիլաշինական ընկերությունը, որը գերմանա-ամերիկյան «Դայմլեր-Կրայսլեր» կոնցեռնի վնասաբեր ստորաբաժանումն է:

Կալիֆորնիական «Թրեյսինդա» ֆիրման իր անվանումը ստացել է Քըրքորյանի դուստրերի՝ Թրեյսիի եւ Լինդայի անուններից: Ֆիրմային է պատկանում հյուրանոցների եւ խաղատների սեփականատեր MGM Mirage ընկերության բաժնետոմսերի զգալի մասը: Անցյալում «Թրեյսինդան» «Կրայսլերի» գլխավոր բաժնետերերից մեկն էր: Սակայն 1998 թ. «Դայմլեր-Բենցի» եւ «Կրայսլերի» միաձուլումից հետո Քըրքորյանը կորցրեց վերահսկողությունը: 2000 թ. նա դատի տվեց նորաստեղծ խմբին, պնդելով, որ գերմանական ընկերության կազմակերպած միաձուլման հետեւանքով ինքը միլիարդներ է կորցրել: Բայց դատական դատավորը մերժեց նրա հայցը:

Ներկայումս ամերիկահայ միլիարդատերը 89 տարեկան է: Նա հայտնի է կինոբիզնեսում իր եռանդուն գործունեությամբ, բայց քանիցս հետաքրքրություն է հանդես բերել նաեւ ավտոմոբիլաշինական արդյունաբերության նկատմամբ: Անցյալում նա «Զեներալ Մոթորսի» բաժնետոմսերի 10 տոկոսի սեփականատերն էր: Դրանց մնացուկները նա վաճառեց անցյալ տարվա վերջերին: Հենց Քըրքորյանի նախաձեռնությամբ, ձեւավորվեց ամերիկյան «Զեներալ Մոթորսի», ճապոնական «Նիսսանի» եւ ֆրանսիական «Ռենոյի» դաշինքը:

1995 թ. նա «Կրայսլերի» դիմաց առաջարկեց 22,8 մլրդ դոլար, բայց այն ժամանակ գործարքը չկայացավ: Քըրքորյանի ֆիրմայի նոր առաջարկության գումարը 200 մլն դոլարով պակաս է կանադական «Մագնա ինտերնեշնլ» ընկերության առաջարկած գումարից: Սակայն «Թրեյսինդան» պատրաստ է 100 միլիոնանոց գրավ մուծել:

Փորձագետները նշում են, որ «Կրայսլերը» Քըրքորյանի համար կարող է ամոթ կաղին դառնալ, նկատի ունենալով նրա ընկերության ներկայիս ֆինանսական դժվարությունները:

«Դայմլեր-Կրայսլերի» նյույորքյան ստորաբաժանման հաղորդակցությունների բաժնի պետ Հան Տյանը նշում է, որ գերմանա-ամերիկյան կոնցեռնը բանակցում է գործընկերների հետ եւ գոհ է իրադարձությունների ընթացքից:

Որոշ տեղեկությունների համաձայն, «Կրայսլերի» նկատմամբ, «Թրեյսինդայից» եւ «Մագնայից» բացի, հետաքրքրություն են հանդես բերում նաեւ Cerberus Capital Management-ը եւ ներդրումային «Բլեքսթոն» ֆիրմաները:

Պ. Ք.

Ընթացիկ

Այսիսի 12-ին կայանալիք ՀՀ խորհրդարանական ընտրություններն ունեն 4 կարեւոր առանձնահատկություն: Դրանք 1990 թվականից հետո Հայաստանում առաջին անգամ են դրսեւորվելու՝ ընտրությունների արդյունքում հնարավոր է իշխանափոխություն արձանագրենք, խորհրդարանական ընտրությունն ընթանալու է նախագահի լիազորությունների երկրորդ ժամկետի սպառմանը զուգընթաց, ընտրվելու է իշխանություն ձեւավորելու իրավասություն ունեցող խորհրդարան, միջազգային հանրությունն էլ այս անգամ առդեն ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերելու ընտրությունների որակի առնչությամբ: Այս նկատառումները երեկ «Փաստարկ» ակումբում ներկայացրեց ԱԺ անկախ պատգամավոր Վիկտոր Դալլաքյանը: Այդուհանդերձ, նրա գնահատականով, իշխանությունն այսօր հոգեբանորեն պատրաստ չէ զիջելու զբաղեցրած դիրքերը եւ ազատ, արդար ընտրությունները կարեւորելու բարձրաձայնումները հիմնականում անկեղծ չեն. «Այդ մասին բարձրաձայն խոսում են մարդիկ, որոնք մասնագիտացել են խորհրդարանական, նախագահական ընտրությունները եւ հանրաքվեները կեղծելու մեջ»: Բանախոսի կարծիքով, քաղաքական կամքի երկու կարեւորագույն բաղադրիչները՝ թե իշխանությունը թողնելու, թե ընտրական հանձնաժողովները հավասարակշռված կազմավորելու կամքը բացակայում են, բայց առկա է «Ռոբերտ Քոչարյանը հեռանում է, իսկ Սերժ Սարգսյանը չի կարողանում գալ» իրավիճակը: Վիկտոր Դալլաքյանի դիտարկմամբ՝ Սերժ Սարգսյանի վարչապետ նշանակվելը կարելի է մեկնաբանել որպես վարչական լծակները ընտրությունների ընթացքում օգտագործելու հնարավորություն եւ որպես դանայան նվեր՝ ընտրությունների նախօրյակին, ամբողջ ընդդիմադիր էլեկտորատն ու ընդդիմադիր կուսակցությունները կարող են իրենց ճնշադատությունն ուղղել նախագահական հավակնություններ ունեցող նորանշանակ վարչապետին: Վերջինը, բնականաբար, ավելի վտանգավոր է Սերժ Սարգսյանի համար, ըստ բանախոսի, եւ անկախ դրանից նվազագույն են Սերժ Սարգսյանի շանսերը. «Հիմնական պրոբլեմը, կարծում եմ, ներսում է, որովհետեւ արտաքին աշխարհը ուսումնասիրում է, թե ներքին ինչ պրոցեսներ են տեղի ունենում ՀՀ-ում: Եվ ուզում եմ ընդգծել, որ հայ ժողովուրդն ինքը պետք է որոշի, թե ովքեր են ձեւավորում իր իշխանությունը, հակառակ դեպքում մենք կունենանք խամաճիկային իշխանություն»: Սերժ Սարգսյանի նախագահ դառնալու հեռանկարի մասին հարցը Վիկտոր Դալլաքյանը պատասխանեց. «Նախագահ կդառնա այն անձը, ում ազատ, արդար եւ թափանցիկ ընտրությամբ կընտրի ժողովուրդը, եթե ինչպես ասել է ԱՄՆ նախագահներից Աբրահամ Լինկոլնը. «իրադարձություններն են դարձնում պրեզիդենտ»:

Բանախոսի տեսանկյունից ՀՀ նախագահ Քոչարյանն ազատ, արդար ընտրություններին նպաստելու եւ որպես ռեֆորմատոր հեռանալու հնարավորություն ունի: «Խորհրդարանի ընտրության կեղծումը կարող է հանգեցնել նախագահի պատասխանատվության: Չեմ կարծում, թե Քոչարյանը կցանկանա հեռանալ ժողովրդի բացասական գնահատականին արժանանալով: Գուցե, դա արդեն նրա խնդիրն է, նա կարող է ցույց տալ, որ ինքը հեռանում է որպես ռեֆորմատոր»: Բացի այդ, Վիկտոր Դալլաքյանը կարեւորեց, որ չի անտեսվի նաեւ ընտրությունների կեղծման դեպքում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցում լուրջ ճնշումների հեռանկարը: Ձերձ մնալով մինչեւ այսօր Ռոբերտ Քոչարյանի կատարած քայլերի ազատ, արդար ընտրություններին ուղղվածությունը գնահատելուց, բանախոսն ընդգծեց, որ ԼՂ հիմնախնդրի լուծման բանալին Հայաստանի օրինական ընտրություններն են. «Գուցե Քոչարյանն առաջնորդվի նաեւ հայրենասիրական մղումներով: Այլ մոտիվացիաներ նույնպես կարող են լինել, բայց ուզում եմ ընդգծել, որ այդ շանսը ես տեսնում եմ»:

Իսկ եթե իրադարձություններն ընթանան խորհրդարանական ընտրությունների կեղծման ուղիով, ապա ընտրությունները տեղի կունենան մայիսի 13-ից հետո, ըստ Վիկտոր Դալլաքյանի, եւ ժողովուրդն ու միջազգային հանրությունը կցուցաբերեն համարժեք արձագանք. «Այն կարծիքին եմ, որ հիմա նույնպես, եթե ընտրությունները կեղծվեն, ժողովուրդը դուրս կգա եւ կպաշտպանի իր իրավունքը: Ժողովրդի մոտ 75-80 տոկոսն ունի ընդդիմադիր մոտեցումներ, եւ արդեն ընդդիմության վարքագծությունից եւ գրագետ քայլերից է կախված, թե ինչպես կարող է ընդդիմությունը առաջնորդել ընդհանուր 70-80 տոկոսանոց զանգվածը»: Միջազգային հանրության արձագանքի համարժեքության ակնկալիքն էլ Վիկտոր Դալլաքյանը բացատրեց Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման հնարավորությունների մեծացման եւ խորհրդարանի ընտրությամբ իշխանության հարցը առաջիկա 10 տարիների նկարագիրը որոշելու հանգամանքներով: Վերջինը բանախոսի հավաստմամբ նաեւ մի շարք լուրջ երկրների դեսպանատների ներկայացուցիչների գնահատականն է: Իշխանություններից դժգոհ զանգվածին առաջնորդելու զորու ուժերն էլ Վիկտոր Դալլաքյանին հայտնի են. «Ընդդիմադիր ուժեր կան, որոնք կարող են առաջնորդել՝ «Արդարություն» դաշինքի բոլոր կուսակցությունները, ՕԵԿ-ը, «Ազգային Միաբանությունը», «Ժառանգությունը», «Նոր Ժամանակները»:

Վիկտոր Դալլաքյանը մրցակցության սկզբունքով եւ լուրջ քաղաքական ուժերի պատասխանությամբ առաջադրվել է Վանաձորի թիվ 30 ընտրատարածքում եւ բացի 32 էջից բաղկացած ծրագրից, ներկայացրել է նաեւ «Մեր ապագայի բանալիները» գիրքը, որ երեկ բաժանվեց նաեւ լրագրողներին:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վիկտոր Դալլաքյան. «Քոչարյանը հեռանում է, Սարգսյանը չի կարողանում գալ»

Իբր Ֆրանց Վերֆելը խաբվել է...

1-ին էջից

Չնայած այս ամենին, հեղինակը կանխատեսում է, որ կոնգրեսի կողմից բանաձեւի ընդունման հավանականությունը մեծ է, քանի որ ուժեղ է Հայաստանի բնակչությունից երեք անգամ ավելի մեծ հայկական սփյուռքի ազդեցությունը: Միաժամանակ հեղինակը հանգստացնում է թուրքերին, գրելով, թե ամերիկյան բանաձեւը սիմվոլիկ բնույթ կկրի եւ չի ունենա Ֆրանսիայի կողմից ընդունված օրենքի ազդեցությունը:

Ավելի անհավասարակշիռ բովանդակություն ունի «ՄՖ Դնեսի» երկրորդ հոդվածը՝ Լոս Անջելեսից ուղարկված անստորագիր թղթակցությունը, որն ըստ էության թուրքերի կողմից համացանցում դրված մի սուտ հոդվածի կարճ արտատպումն է՝ «40 օր. Վերֆելը հավանաբար խաբվել է» վերնագրով:

Հիմնական գաղափարն այն է, որ Ֆրանց Վերֆելն իր հրեա ընկերներից մեկին՝ ռաբբի Ալբերտ Ամաթյուին խոստովանել է, թե ինքն իրեն խաբված է զգում «Մուսա լեռան 40 օրը» գիրքը գրելուց հետո: Վերֆելը գրքում նշված փաստերի համար հիմք է ընդունել Վիեննայի ինչ-որ հայ եպիսկոպոսի պատմությունները, իսկ երբ տարիներ անց ինքն իր ծանոթացել է անկախ հետազոտողների գործերին, հասկացել է, որ եպիսկոպոսն իրեն խաբել է եւ ամաչում ու ափսոսում է իր գրած գրքի համար: Այս մասին 1989 թվականի հոկտեմբերին ռաբբին նոտարի մոտ վկայություն է տվել, բայց վախեցել է բարձրաձայնել, վախենալով հայկական ահաբեկչական կազմակերպություններից: Ահա սրանով էլ ավարտվում է թղթակցությունը: Նախ, եթե նման բան լիներ, Վերֆելն ինքը կգրեր այդ մասին կամ գոնե ինչ որ գրառում կթողներ իր հուշերում, որը չի եղել եւ չկա: Վերֆելի կենդանության օրոք հայերը նման կազմակերպություններ չունեին, որ նրան վախեցնեին կամ ահաբեկեին: Եվ հետո վեպը սիստեմատիկ չի գրվում, դա երկար տարիների աշխատանք է, որի ընթացքում Վերֆելը բազմիցս ճշտել է իր ձեռքի տակ եղած փաստերը: Ավելին, 1929 թ.-ին Վերֆելը եղել է Սիրիայում եւ այցելել է գաղթական հայերի վրանաքաղաքները, այրիանոցներն ու որբանոցները, լսել ու տեսել է ամեն ինչ անձամբ: Ինչպես վկայում են Ավստրիայի մեր աղբյուրները, հրեա ռաբբիի վկայության մասին որեւէ փաստ հայտնի չի, ավելին՝ նմանատիպ սուտ վկայությամբ տարիներ առաջ հանդես է եկել մի թուրք պատմաբան, որի ասածներին, սակայն, ոչ ոք ուշադրություն չի դարձրել: Ուստի հիմա էլ փորձում են Վերֆելին վերագրվող սուտը հրեա ռաբբիների միջոցով տարածել, շատ լավ հասկանալով, որ «Մուսա լեռան 40 օրը» վեպի ազդեցությունը Եվրոպայում շատ ավելի մեծ է, քան տարբեր երկրների կողմից ցեղասպանության ճանաչման մասին բանաձեւերը: Դրա վառ վկայությունն է Չեխիան, ուր ողջ մտավորական վերնախավը հայոց ցեղասպանության թեմային ծանոթ է Վերֆելի գրքով: Չեխական ռադիոյով ժամանակին նույնիսկ հնչել է «Մուսա լեռան 40 օրը» ռադիոբեմադրությունը: Այս իմաստով, հայկական սփյուռքի եւ լոբբիստական կազմակերպությունների համար ամենակարեւոր աշխատանքներից մեկը կլինի արագ ֆինանսավորել եւ եվրոպական տարբեր լեզուներով հրատարակել նմանատիպ գրքեր:

Սերժ Սարգսյանը փոփոխություն չի նախատեսում

ԵՐԵՎԱՆ, 6 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանն ապրիլի 6-ին մասնակցել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին, որտեղ քննարկվել են ՀՀ ԳԱԱ-ի 2006 թ. գիտական եւ գիտակազմակերպչական գործունեության արդյունքները: Ինչպես հայտնեցին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, վարչապետը առաջիկայում ծրագրում է հանդիպել Ակադեմիայի գիտնականների եւ հանրապետության մտավորականների հետ՝ նրանց հուզող հիմնախնդիրներին ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով:

Ժողովից հետո, պատասխանելով ՀՀ կառավարության եւ վարչապետի հետագա գործունեության հետ կապված լրագրողների հարցերին, Ս. Սարգսյանը, մասնավորապես, նշել է. «Չեմ կարծում, որ տիտի հիմա լուրջ փոփոխություններ լինեն կառավարության կազմում, որովհետեւ մնացել է համարյա 40 օր աշխատելու, եւ մեր կարեւորագույն խնդիրը պիտի լինի ապահովել կառավարության աշխատանքների շարունակականությունը: Որեւէ փոփոխություն, համենայն դեպս, այս պահին նախատեսված չէ»:

Ս. Սարգսյանը չի կարծում, որ կառավարության գործունեության ծրագրում ինչ-որ փոփոխություններ պետք է լինեն: Համենայն դեպս, ըստ նրա, կառավարությունը ծրագիրը պետք է ուղարկի Ազգային Ժողով: Վարչապետը նշել է, որ ընտրություններից հետո այն քաղաքական ուժը, որը կկազմի կառավարություն, արդեն նոր ծրագիր պետք է ուղարկի ԱԺ:

Անդրադառնալով Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի եւ պաշտպանության նախարարի նշանակումների հարցին, Ս. Սարգսյանը ձեռնպահ է մնացել կանխատեսումներ անելուց:

Ավիաընկերությունները պետք է պարտադիր ապահովագրեն ուղեւորներին

ԵՐԵՎԱՆ, 6 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ապրիլի 7-ից ուժի մեջ կմտնեն «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, համաձայն որոնց ավիաընկերությունները պարտադիր պետք է ապահովագրեն ուղեւորներին, ինչը չի ազդի տոմսերի արժեքի վրա: Այս մասին ապրիլի 6-ի ասուլիսում հայտնեց ՀՀ քաղավիացիայի գլխավոր վարչության պետ Արսյոմ Մովսիսյանը: Ըստ նրա, կատարված փոփոխություններով լուծվել է նաեւ ուղեւորների իրավունքների պաշտպանության խնդիրը: Մասնավորապես, չվերթի երկու ժամ ուշացման դեպքում ավիաընկերությունը պետք է ուղեւորներին ապահովվի սնունդով, 4 ժամից ավելի ուշացման դեպքում՝ հաղորդակցության միջոցներով, իսկ 8 ժամից ավելի ուշացման դեպքում՝ կացարանով:

Ա.Մովսիսյանի խոսքերով, բազմաթիվ են դեպքերը, երբ տոմս ունեցող ուղեւորի համար օդանավում տեղ չի լինում: Դա հիմնականում պայմանավորված է ավիագործակալների գործունեության նկատմամբ վերահսկողության բացակայությամբ: Ըստ վարչության պետի, այս խնդիրը նույնպես կարգավորվել է. այսուհետ ՔԱԳՎ-ն օրինական կհամարի միջազգային ավիափոխադրողների կազմակերպությանը (IATA) անդամակցող գործակալի գործունեությունը: Մնացած ավիագործակալների գործունեությունը կուսումնասիրվի վարչության կողմից, որից հետո նոր կտրվի համապատասխան լիցենզիա:

Ա. Մովսիսյանը նշեց, որ «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում մեծացվել են անցագրային եւ ներօբյեկտային վերահսկողության, ինչպես նաեւ հատուկ վերահսկելի գոտի մուտքի կանոնների խախտման համար պատժամիջոցների չափերը. աշխատավարձի 10-30%-ի չափով տուգանքի փոխարեն այսուհետ այն կկազմի նվազագույն աշխատավարձի 50-պատիկից մինչեւ 1000-պատիկը (1 մլն դրամ, կամ մոտ 2,7 հազար ԱՄՆ դոլար):

Ավելացվել է նաեւ ուղեւորների կողմից օդանավում ռադիոտեխնիկական սարքավորումների օգտագործման համար տուգանքի չափը: Իսկ օդանավում ծխելու դեպքում վայրէջքից անմիջապես հետո ՔԱԳՎ-ն նույնպես կկիրառի տուգանք:

Ա. Մովսիսյանը հայտնեց նաեւ, որ այսուհետեւ ավիաընկերությունները ոչ կանոնավոր չվերթերի իրականացման համար 10 մլն դրամը չեն վճարի: Դա, ըստ նրա, կնպաստի հայաստանյան շուկա նրանց մուտք գործելուն:

Նշվեց նաեւ, որ Հայաստանում ինքնաթիռ շահագործելու իրավունք ունեն 12 ավիաընկերություններ: Իսկ ընդհանուր առմամբ հայաստանյան շուկայում գործում են 20-ից ավելի ավիաընկերություններ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մե տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Լրագրողների սենյակ / հեռ 581841

Համակարգչային ծառայություն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայություն / հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօստւում ու չեն վերադարձւում

Գ տառով յոդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ
ԻՍՏՈՐԻՐՔԵՐ
www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

Ազգային փոքրամասնություններին անարդարությունների այնման բաժին է հասնում, որքան մեզ

Մեր երկրում ապրում են 60-ից ավելի այլազգի ներկայացուցիչներ, որոնց բաժին է ընկնում մեր երկրում եղած անարդարությունների այն բաժինը, ինչը եւ տարածվում է մեզ վրա: Երեկ «Տեսակետ» ակումբում այս կարծիքը հայտնեց կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության պետ **Հրանուշ Խառատյանը,** որը գիտության, կրթության, ազգային փոքրամասնությունների եւ կրոնի գծով նախագահի խորհրդական **Սերգո Երիցյանի** հետ խոսում էր խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ներկայացվածության մասին:

Հրանուշ Խառատյանի խոսքով, մեր երկրում ազգային փոքրամասնությունները բազմազանությամբ շատ են, բայց քանակով փոքր են, ուստի նրանցից խորհրդարանում պատգամավոր ունենալու հարցն էլ դժվարություններ է առաջացնում: Նա ներկայացրեց Ազգային ժողովում ազգային փոքրամասնություններից պատգամավոր ունենալու բարդությունները, ապա նշեց, որ իրենք, համայնքների հետ քննարկելով, էթնիկ համայնքների ներկայացուցիչների խնդիրներն իշխանություններին հասցնելու մեկ այլ տարբերակ են ընտրել: Պատրաստվում է օրենքի նախագիծ՝ ըստ որի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից նրանց խնդիրները քննարկելու եւ երկրի ղեկավարությանը հասցնելու համար պետք է կազմվի ընտրովի մարմին: Իսկ այն բնակավայրերում, որտեղ որեւէ ազգային փոքրամասնություն կազմում է բնակչության 15 տոկոսը, նախատեսվում է ներկայացուցիչ ընդգրկել տեղական ինքնակառավարման մարմնում, որտեղ էլ վերջինս կներկայացնի համայնքի խնդիրները: Հրանուշ Խառատյանը հավելված է, որ օրենքի նախագծի մշակումը արտացոլում է երկրի ղեկավարության քաղաքականությունը իր երկրում ապրող փոքրամասնությունների նկատմամբ:

Սերգո Երիցյանն էլ, համաձայնելով իր գործընկերոջ հետ, ընդգծեց, որ աշխարհի շատ երկրներում, որտեղ փոքրամասնությունները փոքր են, չեն ընդգրկվում խորհրդարանում, այլ կառավարման մարմիններում ներկայացուցիչ են ունենում: Հանրապետության նախագահի խորհրդականը վստահեցրեց, որ իրենք Հայաստանում ազգային փոքրամասնությունների հետ քաղաքական խնդիրներ չունեն, սակայն անելիքներ կան համայնքներին իրենց կրթամշակութային ծրագրերն իրականացնելու հնարավորություն ընձեռելու իմաստով: Խորհրդականը նշեց, որ 2008 թ. բյուջեով այս խնդիրների լուծման համար կազմված ծրագրի ֆինանսավորում է նախատեսվում:

Ակումբի երկու բանախոսներն էլ համակարծիք էին, որ մեր երկրում ապրող փոքրամասնությունները մեր երկրի ժողովրդի պես ապրում են գրեթե նույն կենցաղում, հնարավորություն ունեն մեզ հետ սովորելու, իսկ իրավունքների ոտնահարման հարցերում նրանց իրավունքներն էլ ոտնահարվում են այնքան, որքան բոլորինս. «Ցավոք, այսօր մենք դեռ չենք հասել երկրի քաղաքացիների իրավունքների փաստական պաշտպանության, այն դեռեւս միայն իրավական է»: Հրանուշ Խառատյանի խոսքով, էթնիկ համայնքներում այլ է իրավունքների հարցը, մեկ այլ բարդություն է իրավունքների իրացման հնարավորությունը: Նա հավաստիացրեց, որ իրենք համայնքներին պատշաճորեն տեղեկացնում են իրենց իրավունքների մասին, սակայն դրանց իրագործման որակը կախված է համայնքի կառուցվածքից, ներքին համախմբվածությունից եւ այլ հարցերից:

ԳՈՌՇԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Թուրքերը չեն կարողանում ձուլվել քաղաքակիրթ ժողովուրդներին»

Հայոց ցեղասպանության հարցը միջազգային իրավունքի դիտանկյունից է քննվում «Հայկական հարցը միջազգային դիվանագիտության ակունքներում» վերնագրով համառոտ ձեռնարկում, որի հեղինակը Հայաստանի փորձագետների միության վարչության նախագահ, պատմական գիտությունների թեկնածու, Երեւանի դասական փորձաքննության եւ հոգեբանության ինստիտուտի հիմնադիր ռեկտոր **Ազատ Թադեւոսյանն** է: Գրքի հրատարակումը, ինչպես նա նշեց Ազգային գրադարանում երեկ տեղի ունեցած շնորհանդեսից հետո, ժամանակի պահանջն էր, քանի որ 2 շաբաթ հետո աշխարհի առաջադեմ մարդկությունը նշելու է Մեծ եղեռնի 92-րդ տարելիցը: Ցեղասպանության թեմային անդրադառնալու հիմնական դրդիչ գործոններն են նաեւ պատմության ու գրականության նկատմամբ անտարբեր ներկայիս երիտասարդությանն արթնացնելն ու հայրենիքի իրական տերը դարձնելը:

«Մենք երբեք չպետք է մոռանանք, որ օսմանյան Թուրքիան նպատակ ուներ ոչնչացնելու ու բնաջնջելու հայ ժողովրդին ամբողջապես: Մեր սերունդները պետք է իմանան պատմական իրականության ողջ իմաստն ու ճշմարտությունը:

Այսօր Թուրքիան քրիստոնեական կոթողներ է բացում, սակայն չի տեղադրում դարեր շարունակ Սուրբ Խաչ եկեղեցու վրա եղած հայկական խաչը: Մեր թուրք բարեկամները որքան էլ ձգտում են իրենց նորովի ցույց տալ, միեւնույն է, չեն կարողանում ձուլվել քաղաքակիրթ ժողովուրդներին», ասաց Թադեւոսյանը:

«Վերջին ահազանգ ենք հնչեցնում միջազգային հասարակայնությանը, Հայոց ցեղասպանության հարցին անտարբեր տերություններին ու կառավարություններին հասկացնելով, որ ցեղասպանությունը համաշխարհային ծանր հանցագործություն է՝ խստագույնս քննադատվելու արժանի: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ապագայում կանխել ցեղասպանության երեւույթն ընդհանրապես»:

Գրքում հեղինակն այն միտքն է հայտնում, որ միջազգային իրավունքի պրոֆեսորներ Սաստրյանի եւ Սմբատի պայքարը օգտաբեր կլինի Հայաստանի ազգային անվտանգության ամրապնդման եւ արեւմտյան տերությունների հետ Հայաստանի բարեկամական լայն կապերի զարգացման համար:

Հայաստան-Թուրքիա-Գերմանիա հարաբերությունների վերաբերյալ նա նշում է, որ այսօրվա Գերմանիան Թուրքիայի նկատմամբ պահպանում է «կրիտիկական հեռավորություն: Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական դաշինք ունեցող Թուրքիան Գերմանիայի համար ավելի կարեւոր է Հայաստանից: Այս իրադրությունը նրան որոշ չափով հիշեցնում է Բիսմարկի եւ Վիլհելմ 2-րդի ժամանակները, միակ տարբերությունն այն է, ինչ գոյություն ունի վելիելմյան ռեյխի եւ ներկայիս Գերմանիայի միջեւ: Մինչ օրս դաշնակիցներ ընտրելիս առաջնորդվում են պատմական գերակշռող հատկանիշներով: «Նախկին Հարավսլավիայի իրադարձություններն ակներեւ դարձրին մեծ տերությունների, առաջին հերթին պատմական դաշնակիցների նկատմամբ Գերմանիայի կողմնորոշումները, որ ուղեկցվում են «պատմական բշնամիների հրեացմամբ»:

Հաջորդ տարի լույս կտեսնի գրքի երկրորդ հրատարակությունը՝ ավելի հարստացած նոր փաստերով ու մեկնաբանություններով: Գիրքը հրատարակվել է «Գասպրինս» հրատարակչությունում՝ սրբագրական, ուղղագրական ու շարահյուսական թերություններով, ինչը, ցավոք, նվազեցնում է ընթերցելու ցանկությունն ու հետաքրքրությունը: Ժամանակն է ի վերջո, որպեսզի մեր հրատարակիչները պահանջեն գիտական ու ոչ գիտական գրքերի բծախնդիր սրբագրում, ելնելով եթե ոչ հայոց լեզվի հանդեպ պատասխանատվության զգացումից, գոնե իրենց հրատարակչության հեղինակությունը բարձր պահելու մղումից:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մելգոնյան վարժարանի վերաբացումն արդեն միֆ է

Երեւանի Նոր Նորք թաղամասում նրան «փոխարինող» նոր վարժարան է հիմնվում

ՀԲԸՄ-ի կրթական առաքելությունը աշխարհի տարբեր անկյուններում բեկորների պես ցրված հայկական դպրոցների վիճակի բարելավումն ու դրանց սաներին հայ իրականությանը, ակունքներին, լեզվին ու մշակույթին կապելու բարդ խնդրի իրականացումն է: Համենայն դեպս, միության կրթական բանաձեւն այսպես է բնութագրում ՀԲԸՄ կրթական բաժնի տնօրեն **Արքուն Հասանյանը:** Նման առաքելության տրամաբանության մեջ ոչ մի կերպ չի տեղավորվում Կիպրոսի Մելգոնյան վարժարանի հետ կապակցությունը: Նրանք, ում զավակներից կամ մերձավորներից որեւէ մեկին բախտ է վիճակվել ուսանել բարձրակարգ այս կրթարանում, այսօր միայն երախտիքով ու ծայր ափսոսանքով են տալիս նրա անունը: Ինչո՞ւ փակվեց համբավավոր վարժարանը:

Այս պահին եւ ԱՄՆ-ում, եւ Կիպրոսում միաժամանակ դատավարություններ են ընթանում վարժարանի փակման կապակցությամբ: Կիպրոսի կառավարությունը վստահաբար հայտարարել է, որ շենքը չի կարելի հանդել, քանի որ պատմական արժեք է: Հիշենք, որ շենքը կանխավ կառուցվել է որպես կրթարան՝ հայ որբերի համար: Կիպրոսի բնակիչներն էլ վճռականորեն ընդդիմանում են դպրոցի կանաչ ցուրակը ոչնչացնելու հեռանկարին: Եթե շենքը չի հանդվում, ապա հողի արժեքը, որի վրա կառուցվել է, ամբողջությամբ ընկնում է: Այսինքն, այլեւս ձեռնտու չի լինի գնել կամ վաճառել: Ուրեմն, դպրոցը վերաբացելուն խոչընդոտող հիմնական հայտանիշներից մեկն արդեն չկա: Բայց այսօր Մելգոնյանի փակմանն ընդդիմացողները, ցավոք, այն բացելու իրավասություն չունեն: Որոշողն ու իրավասուն դարձյալ ՀԲԸՄ-ն է: Իսկ ՀԲԸՄ-ն որոշել է որպես «փոխհատուցում» Երեւանում նոր վարժարան հիմնել: Իսկ Մելգոնյան վարժարանի կալվածքի վերաբերյալ, ինչպես նշում է Համալյանը, «որեւէ որոշում կայացված չէ տակավին, բայց պիտի ըլլա կարգադրություն, որ լավագույն ձեւով օգտագործվեն այդ կալվածքի կարելիությունները»:

ՀԲԸՄ կենտրոնական խորհրդի անդամ **Քերոլ Ալպանյանը** Մելգոնյանի փակումը բացատրում է այն հանգամանքով, որ դպրոցի համար ՀԲԸՄ-ի կատարած ծախսերը չեն արդարացվել ոչ ոսման արդյունավետությամբ, ոչ աշակերտների քանակով: Եվ դա է, որ կենտրոնական վարչությանը մղել է որոշում կայացնել, թե անիմաստ է դպրոցը պահել ներկա վիճակով: «Այդ հաստատությունը թեեւ շատ մեծ դեր է կատարել մեր հայ գաղութների համար, բայց միայն անցյալի արդյունավետության համար չէր կարող գոյատեւել: Անհրաժեշտ է, որ այն ներկա իրականությանը համապատասխանեցվի, եւ կենտրոնական վարչության կողմից «լուրջ սերտողությամբ» ինչ-ինչ միջոցառումներ արվում են: Հարցը դպրոցը փակելը չէ, այլ լավագույն միջոցառումը գտնելը, որ պիտի ապահովի դպրոցի արդյունավետությունը»:

Հողահատկացում արդեն արվել է Երեւանի Նոր Նորք համայնքում, եւ այսօր ՀԲԸՄ-ի տնօրեն Պերճ Սեդրակյանը հողահատկացման չափերի վերաբերյալ վերջին ճշգրտումներն է անում: Նախատեսվում է ստեղծել մի համալիր՝ սփյուռքի աշակերտների եւ ուսանողների համար բոլոր հարմարություններով: Հիմնական սկզբունքը հետեւյալն է լինելու՝ սփյուռքում, ասենք, ճարտարագիտություն, բժշկություն կամ այլ առարկա սովորող ուսանողը, եթե ցանկանում է հայրենիքում կրթական փորձառություն անցնել բարձրագույն մակարդակով, կարող է այստեղ շարունակել «1 կամ 2 դասընթաց»: Եվ ամենակարեւորը, այստեղ ստացած կրթության «արժեչափերը» կընդունվեն Հայաստանի համապատասխան համալսարաններում: «Մեր նպատակն է ստեղծել մի համալիր, որ կգան բազմաթիվ ուսանողներ սփյուռքից, կշփվեն հայ իրականության եւ սփյուռքի տարբեր շրջանների ուսանողների հետ», ասում է Արքուն Համալյանը:

Նույն բանն արդեն իրողություն էր Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, եւ ամենեւին պետք չէ հին հեծանիվը ջարդել, նմանակը սարքելու համար: Հայաստանում արդեն ունենք շուրջ 1400 դպրոց: Կարելի էր դրանցից մեկը կամ երկուսը «որդեգրել»: Ի դեմ, ոչ մի կերպ չհաջողվեց ավելի մանրակրկիտ տեղեկություններ ստանալ Մելգոնյան վարժարանի ճակատագրի վերաբերյալ: Ինձ հաղթավարի մերժում էին՝ ասելով, որ օրվա քննարկման խնդիր չէ:

ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻՊԵՅԵՆ

Սփյուռքի հայկական դպրոցներում նվազում է աշակերտների թիվը

Այս գիտաժողովը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) 100-ամյակին նվիրված միջոցառումների վերջին եւ ամենակարեւոր ակորդներից է, որ միության տարբեր մասնաճյուղերի ներկայացուցիչներին հնարավորություն է տալիս ծանոթանալու կրթական ասպարեզում իրենց խնդիրներին ու փորձին: Երեկ ամերիկյան բիզնես կենտրոնում շարունակվում էին քննարկումները սփյուռքի կրթական հարցերի վերաբերյալ:

ՀԲԸՄ-ի հովանու տակ այսօր գործում են 5300 աշակերտներով 16 դպրոցներ Հարավային Ամերիկայում, Կանադայում, Սիրիայում, Լիբանանում, Հունաստանում: Սակայն այս վերջին տարիներին Բարեգործականն արձանագրում է չափազանց ցավալի մի փաստ՝ սփյուռքի հայկական դպրոցներում հետզհետե նվազում է աշակերտների թիվը: Որքան էլ տարօրինակ թվա, գլխավոր պատճառներից մեկը սովորական տրանսպորտային փոխադրման խնդիրն է: Բանն այն է, որ Բարեգործականը դպրոցներ հիմնում է հիմնականում հայախիտ թաղամասերում ու բնակավայրերում, եւ եթե դպրոցը հեռու է բնակատեղից, այսինքն, տեղաշարժի ու տեղափոխման խնդիր կա, բոլորը չէ, որ որոշում են իրենց զավակին հայկական դպրոց ուղարկել: Ի դեմ, գիտաժողովի երեկվա նիստում հիմնական զեկուցողներից **Երվանդ Զորյանը** ներկայացրեց էլեկտրոնային միջոցներով եւ հեռակա ուսուցման նախագիծ-ծրագիրը, որի դեպքում տեղաշարժի խնդիրը մեջտեղից դուրս կգա: Էլեկտրոնային ուսուցումն իրականացվելու է 6 լեզուներով՝ արեւմտահայերեն, արեւելահայերեն, անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, ֆրանսերեն, ռուսերեն: Պատմություն ուսուցանելու նախագիծն արդեն մշակվել է, ընթացքի մեջ են հայոց լեզու եւ արվեստ դասավանդելու ծրագրերը:

Կրթական արդյունավետության կարեւոր չափանիշներ նշեց Հայաստանի ամերիկյան համալսարանի նախագահ **Հարություն Արմենյանը:** Նրա համոզմամբ պետք է կարողանալ աշակերտների մեջ նոր կրթական մտածողություն դաստիարակել, կարողանալ նրանց պոկել հնից: Այսինքն, աշակերտն ու ուսանողը չպետք է վախենան փորձարարությունից: Եթե որեւէ ասպարեզում ձախողում են կամ զգում են, որ այն իրենցը չէ, անհապաղ պիտի փոխեն, ոչ թե սպասեն տասը տարի՝ համոզվելու համար: Երկրորդ կարեւոր պայմանը Հարություն Արմենյանը համարում է ստացած գիտելիքը նոր ծրագրի, նոր նախագծի, նորության բացահայտման համար կիրառելու փիլիսոփայության արմատավորումը:

Սփյուռքի հայկական դպրոցները հյուծող մյուս խնդիրն իրենց բնական հայրենիքից հեռու հայտնված հայ երիտասարդության՝ օտար երկրում տնտեսական հաջողության հասնելու, հաջողակ լինելու բնական մղումն է, իսկ դա, բնականաբար, շատերին դդում է, որ ոչ միայն իրենք, այլեւ հետո իրենց զավակներն էլ ոչ հայկական դպրոցներում ուսում ստանան:

Մյուս կարեւոր պատճառը դպրոցներից շատերը նաեւ ծնողական տուրքերով պահելու հանգամանքն է: Ստացվում է այնպես, որ շատ ընտանիքներ պիտի վճարեն, նույնիսկ եթե իրենց զավակն արդեն չի սովորում տվյալ դպրոցում: Դա հավելյալ եւ ոչ հաճո ծախս է ընկալվում:

Անցած 5-6 տարիներին հայ աշակերտների թվի նվազման պատկերը մոտավորապես այսպիսին է՝ յուրաքանչյուր 100 աշակերտի հաշվարկով 15 աշակերտ կրճատվել է սփյուռքի հայկական դպրոցներից:

Ն. Պ.

Կինը քաղաքական ասպարեզում

Պատրանք, թե՞ իրականություն

Տղամարդու եւ կնոջ հավասարությունը հասարակական-քաղաքական կյանքում շարունակում է մնալ թերի: Տղամարդկանց մի մասը թերագնահատում է կանանց ընդունակությունները, նրանց համարելով «զգացմունքային էակներ»: Իսկ կանայք համոզված են, որ կարող են աշխատել պետության կառավարման յուրաքանչյուր օղակում եւ այլի ընկնել բարձր արդյունավետությամբ: Մեր զրուցակիցը՝ Ջեմմա Հատաբյանը, համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահն է: Ասոցիացիան ստեղծվել է 1995 թ. դեկտեմբերի 13-ին՝ Պեկինի 4-րդ համաշխարհային խորհրդաժողովից հետո, երբ մի խումբ բարձրագույն կրթությամբ կանայք հասկացան, որ պետք է կարողանան իրենց տեղը գտնել նոր ձեւավորվող հասարակարգում: Տարիներ անց ասոցիացիան ոչ միայն ձեւավորվեց որպես կառույց, այլեւ գտավ իր տեղը հասարակական-քաղաքական կյանքում: Ներկայում ունի 32 մասնաճյուղ:

- Շատերը պնդում են, թե չկան ուժեղ կամքի տեր ու վճռական հայուհիներ՝ քաղաքականությամբ զբաղվելու համար:

- Դա սխալ կարծիք է: Հայաստանում յուրաքանչյուր 5-րդ կինը ունի բարձրագույն կրթություն: Դա լուրջ հայտ է: Անհրաժեշտ է միայն օգտագործել այդ փաստը: Չէ՞ որ հրաժարվելով կանանց օգնությունից երկիրը կորցնում է մեծ ներուժ: Իսկ գուցե դա մրցակցության վտանգ է:

- ՀՀ ԱԺ-ում կանայք կազմում են 5 տոկոս:

- Հայ կանայք ունեն գիտելիքներ, բայց չունեն քաղաքական պայքարի կայուն փորձ: Սա հայ կնոջ համար նորություն է: Եթե սկանդինավյան երկրներում իրավահավասարության պայքարը սկսվել է 20-30-ական թվականներին, ապա Հայաստանում այդ պայքարը ավելի ուշ է սկսվել: Խանգարող գործոնները շատ են: Բացի տղամարդկանցից հայուհիներին խանգարում են գենդերային կարծրատիպն ու հասարակության կարծիքը:

- Ի՞նչ ակնկալիներ կան մոտակա ընտրություններից: Կարո՞ղ են կանայք մեծ տոկոս կազմել ԱԺ-ում:

- Հավանականությունը զրոյական է: Մեծամասնական ընտրական համակարգում առաջադրված է 10 կին՝ 8 ընտրատարածքում: Կուսակցությունները կանանց չեն աջակցում: Օրինակ՝ Շվեդիայում ընտրական թերթիկներում տղամարդու եւ կնոջ անունները գրվում են հերթականությամբ: Հայաստանում հակառակ պատկերն է:

- Կինը կարո՞ղ է մենակ հաղթահարել խոչընդոտները, թե՞ նրան անհրաժեշտ են տղամարդու վստահությունն ու աջակցությունը:

- Հայ տղամարդիկ քաղաքականության մեջ էլ պետք է լինեն ջենթլմեն: Նախ կանանց պետք է աջակցեն իրենց ամուսինները: Կան տղամարդիկ, ովքեր չեզոք են մոտենում կին քաղաքական գործիչներին: Նրանք չեն խոչընդոտում, բայց չեն էլ աջակցում: Անհրաժեշտ է աջակցել եւ համատեղ ջանքերով հասնել արդյունքի:

ՀԱՄԱՐԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

70 դեղին վարդեր Օդեսա Բազիլին

Արդեն մի քանի օր է, ինչ անգլիահայ գաղութի հայտնի դեմքերից տիկին Օդես Բազիլը կրկին Երեւանում է: Այս այցի ընթացքում նա կրկին կհանդիպի Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանի, Դիլիջանի քաղաքապետ Արմեն Սանթրոսյանի հետ եւ կմշակվեն այն ծրագրերը, որոնց սկիզբը դրվել է դեռ 2005 թ. դեկտեմբեր ամսին Անգլիայից Տավուշի մարզ ժամանած պատվիրակության հետ: Այս անգամվա այցի նպատակն է Անգլիայի Հայ-ուիքմբ համայնքի Վայքմբ քաղաքի եւ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի նոր կարգավիճակը՝ քույր քաղաքներ դառնալը: Օդես Բազիլին Հայաստանում լավ են ճանաչում: Նա է լորդ Շանքնի հետ հիմնադրել «Բրիտանա-հայկական համակուսակցական խորհրդարանական խումբը, որի անդամների թիվը 39-ից այսօր հասել է 106-ի, որոնցից 56-ը ընտրվի դահլիճից են, 50-ը՝ լորդերի պալատից: Խումբը 15 տարվա պատմություն ունի ու լուրջ գործունեություն է ծավալում: Անգլիայի Բարինգհամշայր մարզի Վայքմբ քաղաքում տիկին Օդեսի նախաձեռնությամբ հիմնվել է 39 անդամից կազմված մի կազմակերպություն՝ Childeren Armenian Society, նպատակ ունենալով համախմբել հայերին, ծանոթացնել հայկական մշակույթին ու պատմությանը նաեւ նրանց հուզող ազգային հարցերին ու խնդիրներին: Անդամներից գրեթե բոլորը՝ կամ ամուսինը, կամ կինը հայ են եւ նրանց թիվը գնալով շատանում է, պատմում է տկն Օդեսը: Բրիտանա-հայկական առաջին խորհրդարանական խումբը, որին անդամակցում է նաեւ բարոնուհի Քերոլայն Քոկսը, հիմնադրվեց Մեծ Բրիտանիայում մեր այն ժամանակվա դեսպան Արմեն Սարգսյանի նախագահությամբ: Տկն Օդեսը 34 տարի անընդմեջ հիմնադիր ղեկավար անդամ է նաեւ «Անահիտ» միության, որի անդամ հայ կանանց միջոցով հայոց լեզվի, մշակույթի պահպանման խնդիրներ են լուծում: Իսկ Անգլիայի թագուհու կողմից հիմնադրած «Անգլերեն խոսողների միության» մասնաճյուղը Օդես Բազիլի ջանքերով 15 տարի առաջ հիմնադրվեց Հայաստանում: Հինգ տարի հետո ԵՊՀ-ում հիմնվեց «Բայրոն» միությունը, որի միջոցով Բայրոնի եւ անգլիական գրականության հետ ծանոթացնում էին ուսանողներին: Անգլիայում տարին մեկ օր կազմակերպվում է հայկական օր, պատմում է տկն Օդեսը, որի ընթացքում հնչում է միայն հայկական երաժշտություն, հայկական մշակույթի հետ ծանոթացում եւ հայկական ճաշատեսակների համտեսում: Տկն Օդեսից տեղեկացանք, որ այս այցի ընթացքում Երեւանից արդեն ընտրվել են «Նոր անուններ» խմբի այն անդամները, որոնք մի քանի ամսից հյուրախաղերով հանդես կգան Անգլիայում:

Ապրիլի 3-ին տիկին Օդեսի ծննդյան 70-րդ տարեդարձն ու «Անգլերեն խոսողների միության» 15-ամյակը նշվեցին Սարյանի անվան տուն-թանգարանում, համագործակցությամբ Բրիտանական խորհրդի: Անգլիայում արդեն պատվավոր կերպով Լորդերի պալատում մեծարել են անվանի հայրենասեր հայտնուն ու նրան նվիրել 70 դեղին վարդեր: Ներկաների թվում էին ՔԴԿ նախագահ Խոսրով Հարությունյանը, Դեմոկրատական նախագահ Արամ Սարգսյանը եւ շատ ուրիշներ: Շնորհավորանքի ու ողջույնի խոսքեր ասացին «Անգլերեն խոսողների միության» նախագահ Կարինե Հակոբյանը, տնօրեն Նատալի Չրյանը, ԱԺ պատգամավոր Հրանուշ Հակոբյանը, կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանը, արտգործնախարարությունից Կարինե Խուդավերդյանը, Արցախից Լետն Մելիք-Շահնազարյանը: Բոլորի շնորհավորանքի խոսքում հատուկ ընդգծվում էին հայրենասեր ու նվիրյալ հարգարժան տիկնոջ՝ Օդես Բազիլի իրականացրած ծրագրերն ու գործերը: Իսկ փոխարտգործնախարար Արմեն Բայբուրդյանը ներկաներին եւս մեկ անգամ տեղեկացրեց, որ Օդես Բազիլի ջանքերի շնորհիվ Մեծ Բրիտանիայի խորհրդարանականներից 114-ն ստորագրել են Տեղասպանությունն ընդունելու փաստաթղթի տակ: Հոբելյարին իրենց համերգ-նվերը մատուցեցին «Նոր անուններ» խմբի անդամներն իրենց հրաշալի կատարումներով: Տկն Օդեսին առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց ՀՀ-ում Բրիտանական խորհրդի ուսումնական ծրագրերի ղեկավար Մարկ Աշֆորդը, նշելով, որ «Օդես Բազիլն սկսեց կառուցել կամուրջ, որը հիմք հանդիսացավ հայ-բրիտանական եւ խորհրդարանական, մշակույթի ու ժողովուրդների համար»: Հուզված էր տկն Օդեսը եւ իր շնորհակալական խոսքն այսպես ձեւակերպեց. «Այն ամենն, ինչ այստեղ արվեց ու ասվեց, ինձ համար որպես մի ոսկե օղակ կկախեմ վզիցս ու ծերության օրերին նորից կհիշեմ: Շնորհակալ եմ իմ հայ ժողովրդից, որ մնաց ու պահեց իմ հայրենիքը, որ ես այսօր ամեն տեղ հպարտորեն ասում եմ՝ ունեմ հայրենիք՝ Հայաստան աշխարհ»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐՏԻՐՅԱՆ

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

«Ես հայուհի եմ... »

«Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատս, իմանալ զբանս հանճարոյ», Երեւանի Աղասի Խանջյանի անվան թիվ 53 միջնակարգ դպրոցի աշակերտներն ամեն անգամ այս խոսքերով են ողջունում իրենց պատմության ուսուցչուհուն, երբ նա մտնում է դասարան: **Զինաիդա Մնացականյանը** քառասունյոթ տարվա աշխատանքային փորձ ունի: 1960 թվականին, ավարտելով Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, սեպտեմբերի մեկից աշխատել է թիվ 59 դպրոցում: Այնուհետեւ տարբեր տարիներ, աշխատելով տարբեր դպրոցներում, եղել է թե՛ պատմության ու հասարակագիտության ուսուցչուհի, թե՛ առաջին ուսմասվար, թե՛ արտադպրոցական գծով տնօրենի տեղակալ եւ թե՛ դասվար. ի դեպ, նա համարվել է քաղաքի առաջատար դասվարներից մեկը: Տիկին Մնացականյանն աշխատանքի վետերան է եւ մանկավարժության ու այլ ասպարեզներում բազմիցս արժանացել է տարբեր մրցանակների: Նա միեւնույն ժամանակ ակտիվ գործունեություն է ծավալել նաեւ հասարակական ոլորտներում՝ ժամանակին լինելով գերագույն դատարանի ատենակալ, աշխատել է քաղկոմում եւ այլն:

1994 թվականից Զ. Մնացականյանը դասավանդում է թիվ 53 դպրոցում, որտեղ եղել է ուսմասվար, բայց իր ցանկությամբ թողել է այդ պաշտոնն ու զբաղվել միայն ուսուցչությամբ եւ այժմ տասներորդ դասարանի դասղեկ է: «Երեւի Աստված ի ծնե է ինձ տվել մանկավարժ լինելու ձիրքը», ասում է ուսուցչուհին: Աշակերտները գիտեն, որ նա խիստ է, բայց միեւնույն ժամանակ՝ չափազանց բարի: «Եթե աշակերտին անգամ պիտի վիրավորեմ, գիտեմ՝ ինչպես անել, որ նա դրանից ազդվի, այն էլ ինչպիսի՛ բացառիկ դեպք պետք է լինի, որ երեխային վիրավորեմ: Իսկ եթե նման բան լինում է, ու վիրավորում եմ աշակերտին, անկեղծ ասած՝ այդ գիշեր չեմ քնում,- խոստովանում է նա,-ինձ դնում եմ նրանց տեղը եւ պատկերացնում, թե ի՞նչ են մտածում տվյալ պահին»: Այսպիսին է Զ. Մնացականյանը՝ մանկանում է աշակերտների հետ... Իսկ իր խոսքերով՝ փորձում է թափանցել յուրաքանչյուր աշակերտի հոգու խորքը եւ հասկանալ նրա հոգեբանությունը. «Եթե մանկավարժը հոգեբան չլինի, դպրոցում աշխատել չի կարող»:

Ավագ սերնդի ներկայացուցիչները հաճախ են ասում՝ մեր ժամանակներն ուրի՞շ էին, մեծերի նկատմամբ հարգանք կար: Նույնիսկ երիտասարդ ուսուցիչներն են բողոքում նոր սերնդից՝ պատճառաբանելով, թե դարը փոխվել է, երեկվա արժեքներն այսօր գին չունեն, երեխաների վարքուբարքն աղճատված է, ուսուցչի դասարան մտնելիս անգամ ոտքի չեն կանգնում, ո՛ւր մնաց, թե դասին լուռ նստեն: Սակայն ընկ. Մնացականյանը երբեք այսպիսի խնդիր չի ունեցել: «Ես գտել եմ դասարանը, այսպես ասած, պահելու գաղտնիքը. ուսուցիչն ամեն օր պիտի իր գիտելիքները հարստացնի: Նույնիսկ այս տարիքում չկա մի օր, որ ես չփորձեմ որեւէ նոր բան իմանալ, որեւէ նոր տեղեկություն ստանալ: Հոգեբան լինելուց բացի ուսուցիչը պիտի նաեւ ամենագետ ու դերասան լինի»: Սակայն հարգված ու սիրված լինելու համար ամենից կարեւորը, ըստ ուսուցչուհու, երեխաներին ուրանց սիրելն է. մանուկներին չսիրողը, նույնիսկ եթե ծով գիտելիքներ ունենա, չի կարող մանկավարժ լինել. «Ես սիրում եմ երեխաներին. սա է ամբողջ գաղտնիքը»: Նրա հետ համաձայն է **Սեդա Զիլավյանը**, որ երկար տարիներ աշխատել է նրա հետ թիվ 51 դպրոցում. «Նա շատ բանիմաց ու կազմակերպված ուսուցչուհի է, նրա դասարանների կարգապահությունը դպրոցում միշտ էլ ամենաբարձրն է եղել: Ընկ. Մնացականյանը ամենուրեք մեծ հարգանք է վայելել, դա վախ չէր խիստ ուսուցչուհու հանդեպ, այլ իսկական հարգանք՝ օբյեկտիվ ու անաչառ մանկավարժի նկատմամբ»: Աշակերտների կարծիքով՝ ընկ. Մնացականյանը յուրաքանչյուր հարցում՝ թե՛ իրենց գնահատելիս, թե՛ պատասխանները լիարժեք կամ թերի համարելու ժամանակ եւ թե՛ այլ դեպքում արդար ու անկողմնակալ է: Ճշտապահ ուսուցչուհին երբեք դասերից չի ուշանում, բացակայում է միայն ծայրահեղ անհրաժեշտ դեպքերում՝ օրինակ ծառայելով ոչ միայն աշակերտների, այլեւ ուսուցիչների համար: Նրա ուսուցողական հմտություններն ու մարդկային հատկանիշները բարձր են գնահատում թե՛ այսօրվա աշակերտները, թե՛ շրջանավարտները: Նրանցից շատ-շատերի հետ Զինաիդա Մնացականյանը մինչեւ օրս լավ հարաբերությունների մեջ է: «Երբեմն տղաս դրսում նախկին աշակերտներիս է տեսնում, գալիս է, ասում՝ մայրիկ, այսինչը քեզ բարեւում էր: Դրանից մեծ պարգեւ կա՞ ուսուցչի համար», ասում է Զ. Մնացականյանը:

Նրա համար հաղթանակ է, երբ մաքվում է հատկապես պատմության դասագիրքը, եւ չնայած դասը՝ դաս, բայց ուսուցչուհին երեխաների հանգստի կազմակերպման մասին նույնպես մտածում է: Աշակերտներին էքսկուրսիաների է տանում՝ Սարդարապատ, Էջմիածնի եկեղեցիներ, պատմության ու արվեստի թանգարաններ, Մատենադարան, Եղիշե Չարենցի տուն-թանգարան, Զոհված ազատամարտիկների հուշարձան-համալիր եւ այլուր, կազմակերպում է ինքնաշխատ միջոցառումներ: Այս ամենի նպատակը երեխաների մեջ հայոց պատմության ու գրականության նկատմամբ սեր արթնացնելն է, ազգասեր ու հայրենասեր, իսկական հայ դաստիարակելը: «Ես սիրում եմ իմ Մասիսը, իմ հողը, իմ հային, ես իմ ազգը սիրում եմ», ասում է ուսուցչուհին եւ արտասանում իր գրած բանաստեղծություններից մեկը, որի համար նախանցյալ տարի ասմունքողների մրցույթում պարգեւատրվել էր:

Պատմության դասն այսօր ավարտվեց, իսկ վաղը աշակերտները կրկին քառասունհինգ րոպեով «կգնան» Անի ու Վան, «կկռվեն» Ավարայրի դաշտում կամ, ո՛վ գիտի, գուցե «կտեսնեն» Մխիթար սպարապետին: Բայց այս ամենը միայն ողջույնից հետո՝ ճանաչել զիմաստութիւն եւ զխրատս...

ԱՍՏՂԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7 ԱՊՐԻԼ 2007 ԷՋ Ա

ՀԱՎԵԼՎԱԾ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 7(26)

ՀԻՇՏԸ ԿՅԱՆՔՆ Է

ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

Բավական է: Ունեմ այն զգացողությունը, թե այս գիրս պետք է ավարտեմ այստեղ: Վերջին տաս-տասնմեկ տարիները, օրագրային դեռ հայոտավոր էջեր, թող մնան ձեռագիր տեսրերում: Տարօրինակ է գուցե, բայց ինձ թվում է, որ դրանք մի ուրիշ աշխարհ են արդեն՝ այս երկու հատորներում պատկերված հիսնամյա կյանքից անդին, մի ուրիշ գիրք...

Հալեպում եղա երկու ամսից ավելի՝ Թոռոսի այն հավերով: Բազում հեռաբրական հանդիպումներ, մենավոր թափառումներս քաղաքի հին ու նոր թաղամասերում, ճամփորդություններ ընկերովի՝ Լաթաքիա, Քեսաբ, հնավայրեր՝ Սեն-Սիմոն, Պալմիրա, ու եղեռնի ճամփաներով անապատում՝ Ռաքքա, Եփրատ գետ ու մինչև... մինչև Տեր-Զոր. չասեմ աղբումներս ճանապարհին, երբ անընդհատ նայում էի ավտոբուսից դուրս՝ ահա գուցե այնտե՞ղ, կարավանում քայլելիս, փլվեց ընկավ ու մնաց Կարաղես պարս, կամ գուցե այնտե՞ղ՝ Շողակաթ տաս, կամ գուցե այնտե՞ղ՝ Ռուբեն պարս, իսկ ինչ կատարվեց իմ հոգում, երբ Տեր-Զորի հայոց հուշարձան-եկեղեցու ներքնահարկում տեսա նահատակների մասունքներ՝ այդ գանգերն ու ոսկորները անապատից... չասեմ, չասեմ... Թոռոսի հետ եղա Դամասկոսում էլ, որտեղից անցանք Բեյրութ՝ Մելգոնյան սանուց միության հավերով: Նախ ցնցեցին այն քաղաքացիական երկարամյա պատերազմի ավերները Բեյրութում: Հետո երկու շաբաթ բազում հանդիպումներ դարձյալ, հարաբակային դասախոսություններս, ճամփորդություններ՝ Այնճար, Բաալբեկ, Բիբլոս եւ այլուր, միջին սերնդի նվիրյալ մելգոնյանցի Սերոբի հոգածությամբ միշտ, որի հետ ծանոթացա այնտեղ ու բարեկամացանք:

Այդ երեք ամիսներին (փետրվար-մայիս, 1994), երբեմն հանկարծ տարօրինակության մի զգացում «կանգնեցնում» էր ինձ որ էլ լինեի, ասես շվարած նայում էի շուրջս՝ միջավայրին, մարդկանց: Զարմանք՝ ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես: Ժամանակին սա է եղել ի ծնե ինձ ճակատագրված աշխարհը, միեւնույն է՝ Աթենք կամ Կիպրոս, Հալեպ կամ Բեյրութ: Ազատ մարդ եմ կրկին, ինչպես այն ժամանակ, սակայն վաղուց «հայաստանցի», թեպետ ոչ սովետական քաղաքացի այլեւս ու չկա ինձ հետեւող աչք, բայց ուրիշ եմ ինձ զգում այստեղ, իմ ներսում սովետական քառասունութ տարիների երկարությամբ կյանքիս աշխարհն է նայում իմ տեսից: Ասես անկշռության վիճակ հոգեկան անջրպետում՝ աշխարհների միջեւ: Ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես...

Հայաստան վերադառնալուց հետո հրավիրվեցի Լոս Անջելես, երբ կինս արդեն այնտեղ էր քրոջ մոտ: Գնացել էի մեկ ամսով, բայց ինքս պնդմամբ մնացինք հաջորդ ձմեռն անցկացնելու իրենց մոտ՝ մի առանձին հարկաբաժնում իրենց երկհարկանի հոյակապ տանը, որ Հոլիվուդի վերեւում բլրակողին էր, չնաշխարհիկ ծառ ու ծաղիկներով մենատների լոտ, անդորր մի թաղամասում, ուր կոկիկ, մաքրազարդ փողոցներում գրեթե մարդ չէի տեսնում օրն ի բուն, ոչ ցերեկը, ոչ էլ գիշերը մանավանդ, եւ ուր մշտապես շրջում էր ոստիկանական հսկիչ մեքենան: Այդպիսով՝ ութ ամիս ապրած եղա Լոս Անջելեսում:

Դա էլ բոլորովին ուրիշ մի աշխարհ էր, որը կարելի է կոչել՝ այլակեցություն: Խաղաղ օվկիանոսի ափամերձին փռված այդ վիթխարի մեգալոպոլիսում՝ կազմված առանձին քաղաքներից ու շրջաններից, ուր մեքենայով միայն կարող ես գնալ, հազվադեպ էին հանդիպումներս, որոնց, ճիշտն ասեմ, շատ չէի էլ ձգտում, գրեթե միայն իմ սերնդի հին մելգոնյանցիների հետ, այդ հոծացած, ինքնաիրոնիկ շեշտով «Լոս Առմենիոս» հորջորջվող հայ նորագույն խայտաբղետ, ցրքնված գաղթօջախում: Մերթ ընդ մերթ իրենք էին գալիս այդ սերնդակիցներից ոմանք ու տանում ինձ, առիթ էի լինում հավաքվելու մեկի կամ մյուսի մոտ: Երբեմն էլ կնոջս ազգականները, իրենց week-end*-ին, մեզ տանում էին ծովափ կամ ուրիշ զբոսավայր, կամ մի թանգարան, մի քանի անգամ էլ ավելի հեռու՝ Լաս Վեգաս կամ Սան Դիեգո, ոչ միայն հաճելի ժամանց, այլեւ հետաքրքրական շատ բաներ էի տեսնում: Իսկ առօրյայում ինքս էի ժամանակիս տերը այդ երկար ամիսներին: Սիրում էի ժամերով թափառել Հոլիվուդի կենտրոնում գրախանութից գրախանութ, կամ երբեմն խորանում առանձին մի թաղի մեջ՝ կոչված այն ազգի անունով, որին պատկանող ամերիկացիներ ապրում են տվյալ թաղամասում: Դիտում էի ամերիկյան այդ այլակեցության բարերը՝ շատ լավ բաների հետ նաեւ տարօրինակ, աչքիս խորթ, մերթ նույնիսկ երկյուղ ազդող երեւույթներ: Ավելի սիրում էի, սակայն, ռեսթորանում երկար փողոցով ջրել տան ընդարձակ բակի ու առաջամասի ծառերը, ծաղիկները ու մարգերը, նստել բակում կիտրոնենու տակ ու կարդալ եւ կամ, ավելի, պարզապես «ճանճռանալ» հենց, մտքերս փակած, երանավետ զգայությունների միայն հանձնված: Եվ անշուշտ՝ հաճախ իրիկունները, պայծառ լուսավոր մեր սենյակում մենակ նստած, էջերով ու էջերով օրագիր էի լցնում:

Ինչքան ավելի երկարում էին այդ անհոգ ամիսները Լոս Անջելեսում, թափառումներիս ընթացքում աչքիս ավելի էր բացվում այդ պերճագեղ այլակեցության ասպառը՝ տիաճ երեւույթներով: Հաճախ մտնում էի բուկինիստական այն ճոխ գրախանութը, ուր հաճախորդներ չէի տեսնում, բայց որ տարեց տիրոջ ասելով՝ մտավորական այցելուների համար «ակումբի նման» էր եղել ժամանակին, մոտ երեսուն տարի առաջ: Ու մերթ այնտեղ հանդիպում էի անցյալի այդ «ակումբից» մնացած մի երկու այցելուների, բուն ամերիկացի ծերունի մտավորականներ, բարձրահասակ ու լրջադեմ, որոնք, հարցիս պատասխանելով, իրենք իսկ խորանոով էին խոսում իմ նկատած այն երեւույթների մասին եւ ասում էին, որ անցյալի «ամերիկյան երազանքի» վերջին մոհիկաններն են իրենք: Երբեմն, հանկարծ, նույն այն տարօրինակության զգացումը «կանգնեցնում» էր ինձ զարմանքով՝ ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես: Ու դարձյալ, ասես, անկշռության վիճակը հոգեկան անջրպետում աշխարհների միջեւ: Նույնիսկ այն կիտրոնենու տակ: Ու երանավետ զգայությունների հանձնված «ճանճռանալն» իսկ, հանկարծ, վերածվում էր այն տսկ տաղտուկին, որ միշտ էլ առկախ վիճակներին է հատուկ, երբ մեկ էլ կարծես դադարկվում է կյանքիդ տվյալ պահը եւ չգիտես՝ ակնկալո՞ւմ ես մի բան, ի՞նչ մի ճանփի է աչդ...

Ստացվել էր այնպես, ուրեմն, որ ներգաղթելուց հետո առաջին անգամ այնքան երկար ժամանակ, փաստորեն մի ամբողջ տարի, եղել էի Հայաստանից դուրս, իսկ իմ ներսում՝ խանմեկ տարեկանից հետո կյանքիս քառասունութ տարիներում երկարած այն սովետական փակ աշխարհը, որ նայում էր իմ տեսից: Ամենազարմանալին, բոլորովին անսպասելին եղավ այն, որ երբ 1995-ի ապրիլին տուն վերադարձանք, նույն այն տարօրինակության զգացումը «կանգնեցրեց» ինձ, երբ նայում էի շրջապատին, մարդկանց. ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես: Հենց այդ մեկ տարում, թվում էր աչքիս, այնքան բան է փոխվել: Ղարաբաղյան պատերազմը վաղուց դադարել է, ու կարծես թե Երեւանն էլ սկսել է դառնալ մի ուրիշ, դեռ չգիտես ինչպիսի աշխարհ՝ աչքիս ծանոթ-անծանոթ: Ու թեպետ յոթանասունն էլ ահա լրանում էր, բայց բոլորովին այդ տարիքի չէի զգում ինձ, միտքս լրիվ բաց՝ դիտում էի, դիտում, իսկ ուրիշ ու մտքիս մեջ՝ խռովք...

Արդեն ասացի, սակայն, մի ուրիշ գիրք է հետագա տասնամյակը, ներառյալ նախորդ մեկ տարիս էլ Հալեպում, Բեյրութում, Լոս Անջելեսում, օրագրային բազում էջերով ու չգրառված բազում հուշերով: Երկարացող կյանքիս մի ամբողջ շրջան, երբ կարծես երկու դարաշրջան փոխվեց սարսափ ընթացող, համայն մարդկության կեցությունը «գլոբալացնելու» ձգտող, մարդկային ժամանակն ու տարածությունը սեղմամփոփող, հակասություններ նորաբակ վայրիվերումներ ալեկոծող, առավելապես նյութապաշտ ներկա քաղաքակրթության մեջ, որ գիտա-տեխնիկական գլխապտույտ զարգացումների եւ բարոյական խոր անկումների ընթացքով չգիտես ուր է հասնելու: Մի ամբողջ շրջան կյանքիս՝ մինչեւ 21 օգոստոս 2005, ութսուն տարեկան դառնալս օրը ներկա ժամանակում, որտեղից էլ սկսեցի, ասես գերիարաշ մի զարտուղության թելադրանքով, չորրորդ մասը այս գրքիս, ապա հետադարձ հայացքի ետառաջումներով ընթացա: Եվ ահա կրկին վերադառնում եմ ներկա ժամանակին, թեւանցելով կյանքիս այն տասնամյա շրջանը՝ այն ուրիշ գիրքը, անդրանցած լինելով նաեւ այս գրքիս վերնագրում 2001 թվականը, ավարտելով չորս-հինգ տարի տեւած աշխատանքս այս գրքի վրա...

Ծաղկաձորում եմ: Հոկտեմբերի կեսերը, բայց չգիտեմ ինչ օր է, ամսի ո՞ր թիվը, ինչպես միշտ, երբ այստեղ եմ ամեն տարի աշնան այս լավագույն եղանակին՝ Գողոների մեր «ստեղծագործական» տանը, ուր ինձ էլ, որպես արդեն ավագ գրողի, շնորհված է տարին 18 օր ապրել անվճար: Սխալչելի է, որ պահպանվեց մեր այս տունը Ծաղկաձորում, այժմ արդեն հյուտանոցային եկամտաբեր կարգավիճակով բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են հանգստանալ այս շքեղազարդ շենքի պայմաններում, որակյալ սպասարկումով: Ինչպես նաեւ այլազան սիմպոզիումների, խորհրդաժողովների համար, գրեթե միշտ բազմամարդ, որ հաճախ կատարվում են այստեղ այլազան կազմակերպությունների կողմից որոշ խնդիրների շուրջ, սովորաբար միջազգային ընդգրկումով, օտարների էլ մասնակցությամբ, ինչքան տեսել եմ նույնիսկ այն օրերի ընթացքում, երբ եղել եմ այստեղ:

Այս տան այսպիսի պահպանումն ու աշխուժությունը, ինչպես գիտեմ ու նկատում էլ եմ, տնօրեն Մովսեսի շնորհքն է «շուկայական հարաբերությունների» ներկա դժվար պայմաններում: Եվ ոչ միայն իր կազմակերպչական ընդունակության շնորհքը: Այլեւ Ծաղկաձորցի այս տղայի նվիրյալությանն իսկ, մանավանդ, մեր գրականության ու ընդհանրապես մշակույթի հանդեպ, իր զգաստ ճաշակով: Այդպես եմ տեսել ու զգացել նրան շուրջ երեսուն տարի առաջ, այն օրերից, երբ նա, դեռ պատանի, սկսել էր աշխատել այս տանը, այս մշակութային օջախում: Բոլորին էլ նա, տարիներով, համակրանք է ներշնչել իր միշտ մեղմորեն բարյացակամ ու նաեւ զգաստորեն գործնական բնավորությամբ, սեւահոն աչքերը բարեժպիտ ու խոհուն, խոսքը՝ պատշաճ: Իսկ ինձ, անձնապես, գրավում է նաեւ այն, որ Մովսեսը, իր հոգու բուն մղումով, նախ եւ առաջ, իր Ծաղկաձորին է նվիրյալ, հայրենի Ծաղկաձորին, որի ոչ միայն ներկա խնդիրները, այլեւ անցյալ դարերն են հուզում նրան, գիտե այստեղ ամեն մի անկյուն, ուր կան ու դեռ կարող են հայտնաբերվել պատմական արժեքներ, հին եւ հնագույն, եւ նախանձախնդիրն ու նախաձեռնողն է դրանց պահպանման ու հետազոտման...

Ծաղկաձորը ես էլ սիրում եմ հատկապես, այն օրից՝ ավելի քան կես դար առաջ, երբ Հայֆիլհարմոնիայում երգչախմբի բարիտոն երգիչ էի եւ, իմ «լավ աշխատանքի» համար, 12 օրվա ուղեգիր հատկացվեց ինձ, եկա այն հին հանգստյան տունը վանքի մոտ, իսկա ծառերի տակ կապույտ միահարկ մասնաշենքերով, որ արդեն չկա վաղուց: Առաջին օրն իսկ, հենց առաջին ոտքերիս, բնությունն ու հազարամյա թափոր վանքը այնպես հուզեցին, որ հայացքս վեր դարձած՝ այն բարձր ծառերի կանաչ հովանուն, արցունք հորդեց ուղղակի ուրիշս: Հետագա տարիներին, բազում շրջագայություններովս, եղել եմ Հայոց աշխարհից մեր այս մի կտոր մնացած Հայաստանի գրեթե բոլոր կողմերում, տեսել եմ ամենուրեք բազմաձեւ ու եռինազան, միշտ վսեմորեն գեղեցիկ մեր բնությունը: Ծաղկաձորն է, սակայն, ինձ համար մնացել ուրամոս, ամենասիրելի անկյունը մեր աշխարհում, գուցե նաեւ աշխարհում ընդհանրապես: Հարազատացել է երիտասարդությանս օրերից հիսունհինգ տարիների ընթացքում:

Հարազատացել է իր ուրույն բնությամբ. երկրում հովիտ, ասես թեւերը դեպի արեւելք բացած, մեջքով Թեղենիս լեռան վիթխարի լերկ եռանկյունին հենված, թեւերն ու մեջքը բարձունքներ, ծոցում ձորեր ու ձորակներ, ու խիտ անտառների, լուսաշող բացատների, պուտակներով ու ապառաժներով նախշազարդ մերկալանջերի ներդաշնակ մի ամբողջություն, որի կիզակետում՝ Կեչառիսի հազարամյա վանքն իր բնիկ հայկական գմբեթներով: Հենց նման պեսպիսուն բնությունն եմ սիրում հատկապես: Երկար տարիների ընթացքում ամեն անգամ, երբ եկել եմ, ժամերով ու ժամերով շրջել եմ Ծաղկաձորի մեջն ու շուրջը ամեն կողմ, բարձունքներում եւ ձորերում, անտառներում եւ սարահարթերում, ելել եմ մինչեւ Թեղենիսի գագաթը, գնացել մինչեւ հեռու գյուղեր, ինչպես Դդմաշեն՝ Փամբակի լեռնաշղթայի ստորոտին, Լեռնաշեն՝ Գեղամա սարերի փեշին: Եվ բնության մեջ այդ մենավոր թափառումներս եղել են լիուլի երջանիկ ժամեր իմ կյանքում: Ամբողջ օրով հետիոտն Դդմաշեն գնալս ու գալս «Ճամփորդություն» վիպակ-էսսեիս «սյուժեն» դարձավ հետագային:

Հարազատացել է Ծաղկաձորը նաեւ բազում հիշատակներով: Մանավանդ՝ երբ կառուցվեց «ստեղծագործական տան» այս երկարում երահարկ շենքը Ծաղկաձորի աջ թեւում, խիտ անտառապատ բարձունքի փեշին, պատշգամբներից՝ ամբողջ ավանն ու հովիտը աչքի առաջ, ձախին՝ վանքն ու անտառապատ բլուրներ, աջին՝ լեռնադաշտերի հեռասանը դեպի արեւելք, դիմացը՝ երկար մերկալանջը պուտակներով ու ապառաժներով: Եթե հաջողվեր ուղեգիր ճարել Գրական ֆոնդից ամռան «արձակուրդային» սեզոնին, երբ շենքը լեփ-լեցուն էր լինում ընտանյոք հանգստացողներով, մենք էլ այստեղ էինք գալիս հանգստանալու ընտանյոք: Բնական է, տիրում էր աղմկահույզ աշխուժություն շենքում, բակերում, ամենուր՝ հայավարի բարձրաձայն խոսակցություններով, ամեն տարիքի բազմաթիվ երեխաների ճչոցով, ու ես ամռան այդ օրերին էր հաստակատես, որ սիրում էի գնալ իմ երկար մենավոր թափառումներին այս ու այն կողմ:

Անմոռանալի թանկ հիշատակներ մնացին հատկապես այն ամառից, երբ իմ մտերիմ բարեկամ Վաղիմն էլ այստեղ էր ընտանյոք: Արձակուրդային ազատությունը մեզ երկուսիս առիթ էր շնորհել նյութից նյութ լայնորեն թափառելու հոգեպարար զույգի մեր աշխարհներում, ոչ այնքան պատշգամբում առանձնացած, որքան դանդաղ ճեմելով անտառում մեր սիրած լայն, արեւստվեր առահետով՝ մերթ մինչեւ Թթու ջուր, իսկ սովորաբար կես ճանապարհին երկար նստելով այն խոշոր վայրի տանձենու տակ: Եվ կամ պարզապես բարձրանում էինք վերի բացատը, որ ընդարձակ ու ծաղկառատ էր այն օրերին, եւ արեւմտյան կողմի անտառեզրին էինք նստում մեր կանանց հետ՝ մեծ սաղարթախիտ ծառերի հովանուն սպվերում շոր փռած:

Այստեղ ուզում եմ կրկին մտաբերել, մի վայրկյան վերզգալ, վերապրել այն մի բացառիկ պահը մոտ երեսուն տարվա խորքում: Առաջին օրը բացատում, երբ Վաղիմն ու ես արդեն հասել էինք այն ծառերի տակ, նա ես նայեց ու մոտեցող մեր կանանց կողքին տեսավ իր տասներկու տարեկան մանչին՝ շալակած այն շորը, որ պետք է փռվեր: Ու հանկարծ հուզվեց: Հիշեց, որ ժամանակին, քառասուն տարի առաջ, մի օր ինքն էլ, ահա իր այս որդու տարիքին, բարձրանում էր այստեղ Իսահակյանի, Չարենցի ու իր հոր հետ, ու ինքն էր ահա այդպես շալակել այն շորը, որ փռվեց այս ծառերի տակ, այս նույն տեղում, ապա ինքն էլ նստեց նրանց կողքին, լսելով զույգը, որից գրեթե ոչինչ չէր հիշում, այն միայն, որ Չարենցը խոսում էր ջղային-ջղային, Իսահակյանը՝ հանգիստ-հանգիստ: Երբ հուզված պատմում էր Վաղիմը իր այդ անակնկալ հուշը, որ մտքումս պատկերանում էր նույն ծառի տակ տեսիլքի նման, ֆիչ հեռու բացատում, ոսկեշող միջօրեին, գույնզգույն ծաղիկների մեջ գույնզգույն երեխաներ խաղում էին ճլվլալով, եւ կարծես ժամանակի խորքից երեւութացավ ոգեղեն մի շունչ նաեւ, որ այս նույն տեղից, ուր նստել էին նրանք, դեռ հաճում էր, կարոտած հայացքի նման, այս ծաղիկների ու ծառերի, ներկայիս այս երեխաների ու մեր վրա իսկ: Եվ ասացի բարեկամիս.

- Ուրեմն այս բացատը, Վաղիմ, պատմամշակութային արժեք է սերունդների համար: Կարելի է ասել՝ մշակութային ուխտատեղի: Նույնիսկ պատկերացնում եմ հատուկ մի հուշարձան այստեղ: Գուցե իմաստալից ճարտարապետված պատվանդանի վրա մի ուրույն խաչքար ըստ մեր ազգային ավանդության...

Կրկին վերադարձի այժմ այդ պահը բարեկամիս հիշատակի հետ, ու բավական է, չկրկնեմ նաեւ այն պատմությունը (մանրամասն պատմել եմ իր տեղում), թե ինչպես ընդվզեցի մի քանի տարի հետո, երբ մի հերթական շինության համար սկսել էին խաթարել, եղծանել բնության հրաշալի այդ բացատը, որ իրոք մշտապես սիրելի վայր է եղել մեր մեծերի համար, բողոքեցի դրա դեմ կոչ անող հանգամանալից, բացատի պատմամշակութային արժեքը հիմնավորող հոդվածով, հակառակ ղեկավար ոմանց դիմադրության պայքարեցի ու տպվեց հոդվածը «Գրական թերթում», լայն արձագանք գտավ այլազան մասնագետների կողմից նամակներով, հոդվածներով, աշխույժ քննարկվեց Ճարտարապետների միությունում, եւ ի վերջո հասա նպատակիս, արգելվեց այդ շինությունը եւ բացատի խաթարումը բարձրագույն հրամանով: Բայց ինչ օգուտ:

Տես էջ 8

* Շաբաթավերջ (անգլ.):

Օրագրություն

Ս էջից

Բացառը մնաց վիրավոր, անտեսված, աղականվեց, չֆացավ էլ իբրեւ բացառ: Շատ եմ խոսում, ճառեր եմ ասում, բայց... ի սրտե, ի խորոց սրտի, մեր ընդերքով, անդայմանորեն, հավատարմորեն սիրո՞ւմ եմ, նախանձախնդիր, հոգատար գնահատո՞ւմ եմ մեր բնությունը, մշակույթը, մեր հողը, երկիրը, մեր հայրենիքը...

Այո, հնագույններից եմ այստեղ, հառագաստել են հին աշխատողների դեմքերն էլ՝ Մովսեսից սկսյալ, սիրտս ժոյռում է նրանց ամեն անգամ, երբ գալիս եմ, ու նրանք էլ, զգում եմ, այդպես են ընկալում ինձ, թե ահա եկավ, կարոտել է սար ու ձոր թափառելու Ծաղկաձորում: Ինձ սիրելի է դարձել այս շենքն էլ, մանավանդ երրորդ հարկը աջ թեւում, պատշգամբից լայն տեսարաններով: Քսաներեք տարի առաջ այստեղ եմ գրել իմ ամենասիրելի «Երանության կղզին» գրքի մեծ մասը, ութ ամիս աղրելով երրորդ հարկի նույն սենյակում, շաբաթ իրիկուն գնալով տուն Երեւան, երկուշաբթի առավոտ վերադառնալով, ամեն ամիս վճարելով ու նորոգելով հենց արդեն «ստեղծագործական» տան ուղեգիրս Գրական Ֆոնդում:

Եվ ահա դարձյալ այստեղ եմ, եկել եմ իմ նախընտրած ոսկի աշնան օրերին, այժմ հենց միայն ու միայն բնության անհուն կարոտս հագեցնելու: Ցերեկը երբեք չեմ նստում ինձ հատկացված հարմարվեստ սենյակում: Այն, ինչ «բնություն» ենք կոչում մեզնից դուրս, այս տարիս ավելի քան երբեւէ, կամ ինչպես մանկությանս բնազդորեն, իսկ այժմ գիտակցությանս ընդմեջեն, ձայնում է իմ ներին բնությանը, կանչում ներաշնակվելու, էապես միաձուլվելու իր հետ: Ամեն առավոտ նախաճաշից հետո, երբ զվարթ է վերագայող արեւի թարմ ոսկելույսը, ու ամեն հետմիջօրեին, երբ իր կամարից դեռի Թեղենիս լեռն է հակվում արեւը եւ իր ոսկելույսն սկսում է թանձրանալ հրաժեշտի թախծությամբ, ես վերեւներն եմ բարձրանում բնության մեջ:

Ահա հետմիջօրե է հիմա էլ, ժամը 4-ն անց: Այս երկու օրը խիստ բազմամարդ գիտական խորհրդաժողով է այստեղ, երեւի ընդմիջում են արել ճաշից հետո, առաջին հարկի ընդարձակ սդասասրահում աշխույժ բազմություն: Հայերենից ավելի լսվում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն խոսակցություններ: Շատ են օտարազգիները, իսկական միջազգային սիմպոզիում: Մի կողմում, կլոր լուսամուտներով պատի տակ, բազկաթոռներին լոտ նստել են յոթ-ութ հոգի, բոլորն էլ օտարազգի ու երիտասարդ, մեկը նույնիսկ ճապոնացի՞ թե չինացի, ծնկների վրա բացել են իրենց պայուսակաձեւ «Դելլ» համակարգիչները: Լոտ են, որովհետեւ «այստեղ» չեն ժողովի ընդմիջմանը, ով գիտե ուր է ամեն մեկը իր համակարգիչում: Հենց դա է հատկապես, որ ֆիչ առաջ կոչեցի «մարդկային ժամանակի եւ տարածության սեղմամփոփում», արդեն սովորական դարձող ահա գիտատեխնիկական այն հրաշալիքով, որը տեսնում եմ տանն էլ, մեծ թոռս է բերել Ամերիկայից, ուր ինքն էլ խորհրդաժողովի էր հրավիրվել: Եվ դա, սակայն, օրեցօր ավելի փոփոխում է կարծես, նույնիսկ համահարթում մարդկության այս երկրագունդը...

Երկարուն բակում էլ աշխուժություն է նստարանների մոտ: Միայն երկու տեղից բարձրաձայն խոսակցություն, մեկը՝ հայերեն, վիճում են գոռգոռալով, մյուսը՝ ռուսերեն, սիմպոզիումին եկած ռուս տղաներ ու աղջիկներ աշխույժ-աշխույժ բաներ են պատմում իրար, հաճախ ծիծաղելով: Մի ամերիկացի տարեց, ակնոցավոր տիկին, որի հետ ծանոթացել եմ պատահաբար, գիրք է կարդում ծխելով՝ մենակ նստած ամենաեզրի նստարանին: Բակի մյուս ծայրին էլ մենակ, հայացը վեր, նստել է մի կին, որ ճապոնուհի է: Իսկ վերեւում ջինջ երկինք: Մաքուր, խոր կապույտի երկարուն մի շերտ միայն՝ շենքի եւ զառիվեր անտառի միջեւ, որի արեւմտյան ծայրին է իջել աշնանային արեւը, իր արդեն ոչ կիզիչ, շոյող տաքուկ ոսկելույսը ես է քաշում այս ձորանման բակից: Շուտ բարձրանամ, բարձրանամ վերեւները, այս ժամին դեռ պայծառ ոսկելույս է այնտեղ:

Այս երկար զառիվեր, բեռնոն սալերով անկանոն սանդղավորված արահետով արագ ու կայտառ էի բարձրանում առաջ, մի ընչով, առանց երկու կողմս կաղնու անտառին նայելու, շտապելով լուսավոր վերեւները հասնել, եւ դույզն իսկ հոգնություն չէի զգում, ընդհակառակը՝ ուրախություն: Այժմ, ոքսունիս, գիտակցորեն դանդաղեցնում եմ վերելս, իբր շուրջս անտառին էլ նայելով, բայց ոչ մեկս, ինձնից անկախ, լայնլայն քայլերով շտապում են վեր ըստ իրենց սովորության, զարմում եմ, թեպետ հիմա էլ դեռ ոչ մի հոգնություն, այլ ուրախություն միայն, փառք Աստծո: Այսօր դեռի վեր ընթացս դանդաղեցնում են այն մտորումները, որ պտսվում են ծտուս այս գիտական սիմպոզիումի առթիվ՝ մերթ ընդ մերթ բազմության դեմքերը դիտելուց, խոսակցություններին ականջ տալուց:

Քիչ վերեւից, անտառի խորը դառնալուց առաջ, կանգնեցի ու ես նայեցի մի տոմբ: Բակից վեճի ու ծիծաղի ելեւէջներն են լսվում, իսկ դիմացը շենքի դռնից այն գեռանուտիին դուրս եկավ, կանգնեց սալահատակված լայն շենին, այս ու այն կողմ նայեց: Միջին տարիքի փարթամ կին է, կլոր պայծառ դեմքով, համակրելի անձնավորություն: Այսօր նախաճաշից առաջ, առավոտյան արեւին, այդ լայն շենին կանգնել էինք մի քանի հոգի, այդ կնոջ հետ իր ազգակից բարձրահասակ շիկահեր մի երիտասարդ, մյուսներն էլ օտարազգի, մի ֆրանսիացի եւ մի չեխ թե սլովակ, նաեւ երեք ռուս երիտասարդ, որոնցից մեկը սոցիակադեմ ժոյռուն աղջիկ, մեկն էլ սեւամազ ու սեւահոն ակներեւորեն հրեա, բոլորս խոսում էինք ընդհանուր անգլերեն՝ դասական երաժշտության մասին: Երբ ես մի պահ ոգեւորվել էի Բեթհովենով, այդ գեռանուտիին ասաց. «Մի՛ մոռացեք Շուբերտին, Շուբերտին»: Իսկ նրա շիկահեր բարձրահասակ ազգակիցը, հայացը դիմացն անտառին, ասես վերեւից հարեց. «Բախ, Բախ»: Բեթհովեն, Շուբերտ, Բախ... Ինչ մեղմ պահեմ, ամեն անգամ, երբ գեռանացի եմ տեսնում, ակամա մի խուլ զարանք է գալիս կարծես պատանության խորից՝ այստիսի դեմքով մարդիկ էին այն գեսատոյականներն ու էսեսականները, ֆանատիկ մյուսներն էլ, որոնց մասին սարսափելի բաներ էի կարդում պատերազմի ժամանակ եւ ինձ արտառոց, անհավատալի էր թվում, սիրտս խոցում էր, թե նրանք էլ կարող են լսել ու զգալ, իրենցը համարել իմ այնքան սիրելի, հոգու այնքան հարազատ Բեթհովենին ու Բրամսին եւ Շուբերտին, Շուբերտին...

Այս մարդկանց հայրերն այն ժամանակ-պատերազմում էին իրար դեմ որպես թշնամիներ: Իրենք այսօր մեր այս Ծաղկաձորում, գալով իրենց երկրներից, հանդիպել են իրար, ծանոթացել, գուցե ոմանք բարեկամացել, եւ ուրախ էր սիրտս, երբ առավոտյան արեւի տակ խոսում էինք դասական մեծ երաժշտության մասին: Բայց ինչ կա-

Պետրոս Կոնտրաջյան. «Ծաղկաձորում», 1953թ.

յուն երաշխիք այս աշխարհում, թե այս մարդիկ էլ, կամ իրենց զավակները, կամա թե ակամա, կրկին որպես թշնամիներ չեն պատերազմելու իրար դեմ, խաղաղական շահամոլ մաքիավելիությունների զոհ դառնալով: Իսկ վաղուց Բեթհովենը իր Իններորդ սիմֆոնիայում, գովերգելով «ուրախությունը տառապանքների ընդմեջեն», ռոմանտիկ կոչ էր անում մարդկությանը իր հզոր երաժշտությամբ ու Շիլլերի խոսքերով, երգչախմբի մեջ ինքս եմ երգել՝ Seid umschlungen, Millionen*...

Դառնում, շարունակում եմ բարձրանալ անտառի մեջ, զովաբույր կանաչ մթնոլորտ՝ երկնուղեր բարձր կաղնիների տակ, որոնք այստեղ գոնե ծառակոտրման զոհ չգնացին 1990-94 դժնդակ տարիներին. դա էլ, գիտեմ, Մովսեսի շնորհն էր: Քառորդ դար առաջ այս «ստեղծագործական» տանը գրած իմ այն գրքում երազել եմ, որ ի բնե գեղեցիկ այս երկրագունդը կարող էր մարդկության «Երանության կղզին» դառնալ տիեզերքում՝ իր հավերժորեն վերածնվող կյանքի խորհուրդով, եւ այդ ուտոպիական տեսիլքս վերջում պատկերացրել եմ իմաստության, խաղաղ աշխատանքի, արգասաբերության ասպվածուհու՝ արհեստներ, արվեստներ ու գիտություն հովանավորող, մարդկանց իր սրբազան ձիթենին, գութան եւ սրինգ պարգեւած Աթենասի պատգամող ձայնով Ակրոպոլիսից՝ իր Պարթենոն տաճարից. «Դուք մարդ եք ծնվել, եւ դա ձեր ուրախությունն է, որով կարող եք Երանության կղզի դարձնել ձեզ շնորհված այս աշխարհը տիեզերքում»: Երազանք, տեսիլք...

Իսկ մտքիս գալիս է հիմա «Դելլ» համակարգիչների շարը՝ սդասասրահի կլոր լուսամուտներով այն պատի տակ: Բազկաթոռներում այդ օտարազգի տղաները, ամեն մեկի հայացը իր համակարգչի էկրանին, մատների շարժումը ստեղներին, լրիվ հեռացած շուրջի աշխույժ բազմությունից, աշխարհի տարբեր կողմերից այստեղ հավաքված «կոլեգաների» հետ կենդանի շփումից: Ինչքան հետաքրքրվել, դիտել եմ, ինձ համար հարց է դարձել, թե գիտության այս հրաշալիքը, որ մեքենական բազմամիսի եւ բազմաբյուր կարողով կարող է իրար միացնել մարդկանց՝ երկրագնդի որեւէ կետից որեւէ կետ, նաեւ իր «հիշողության» ամբարած հին ու նոր ամեն կարգի տեղեկություններ մատուցել մարդկային իմացության բոլոր ասպարեզներից, զանցելով ժամանակ եւ տարածություն, եւ այդպիսով, սակայն, փոխարինում է անմիջական հաղորդակցության, աչք-աչքի կենդանի շփումներին մարդկանց միջեւ, նույնիսկ մարդու եւ նրա որոնած տեղեկության միջեւ,- այս հրաշալիքը, ուրեմն, իր բազում նորովի օգտակարություններով մարդկային գործունեության այլազան ասպարեզներում, համամարդկային համերաշխությանը նպաստող բարի՞ է անպայմանորեն: Թե՞ կարող է նաեւ, իր անչափ հնարավորություններով, օգտագործվել այնպիսի նպատակների համար, որոնց հետեւանքները անկանխատեսելի են, կամ նույնիսկ ուղղակի չար նպատակների համար: Այսինքն՝ դառնալ նաեւ չարիքին ծառայող վտանգավոր միջոց: Ինչպես դառնում էր արդեն, մարդկային պատմության մեջ իրենով իսկ մի նոր աննախընթաց դարաշրջանի սկիզբ դնելով, ատոմային զենքի հետ, որի ստեղծմանը նպաստել էր: Իսկ այսօր, այս վերջին մի երկու տասնամյակներում, ակնհայտորեն դարձել է նաեւ չարիքի օգտագործման միջոց՝ մի նորօրինակ ամբողջաշխարհային նվաճողական ձգտումների համար, առավելապես նյութական շահերի համար, ուղեղների լվացման ու համահարթման համար, արյունարբու զանգվածային ահաբեկչությունների համար, դեռ չգիտես ինչ ուրիշ հնարավոր բաների համար: Եվ նույնիսկ, պարադոքս, հենց այսպես կոչված համակարգչային «վիրուսով» մի տեսակ պատերազմ է մղվում բուն իսկ համակարգիչների աշխարհում...

Այս բոլորը խայտում են, ինքնըստինքյան, հենց մարդկային համերաշխությունը, որին այս հրաշալիքը իր բնույթով իսկ համակողմանի կարող էր նպաստել թեկուզ մեքենականորեն: Որով բարոյական նորանշան խնդիրներ են ծագել այսօր ոչ միայն գիտության, այլեւ մարդկության առաջ ընդհանրապես, գոյության իսկ ամենահիմնահարցի մտահոգությամբ, որ երբեք այնքան իրականորեն ճակատագրական, ուստի այնքան հրատապ չի եղել, որքան մարդկային պատմության հենց այս նոր դարաշրջանում: Մեր այս գեղեցիկ երկրագունդը հնավանդ «ոսկեդարյան» երազանքի «Երանության կղզին» տիեզերքում, թե՞...

Անտառի կանաչավուն մթնոլորտը ավելի ոսկեգույն պայծառանում է վերեւում, որ արահետը թեքվում է աջ: Այստեղ արեւի լույսը թափանցել է անտառի մեջ, երկարելով ճառագայթներ, որոնք այս ու-այն կողմ տերեւներ են փայլեցրել ոսկի զանակների նման: Եվ կամ, ավելի ճիշտ, լուսի լույսի մասին Մեծարենցի այն տողն է միտքս գալիս շրջասությամբ. այստեղ հիմա՝ արեւի լույսը «ծառերն ծաղիկի պես է կախվեր»: Իսկ ահա այն խոշոր կլոր դեղնած տերեւը, որ ֆիչ անդին, ծառերի տակ մի բարձր թփի կատարին, ոսկելույսով թափանցկացած, մեղմ թրթռում է հազիվ լսելի շշյունով՝ ասես իրեն շնորհված ճառագայթն ընդունելու արբեցությամբ, միտս է բերում Մեծարենցի այն խոսքը նաեւ, որ պատանեկությանս օրերից այնքան հարազատ էր սրտիս ու մտքիս եւ մինչեւ այսօր էլ մնում է հարազատ. «Ինչ երջանկություն, տերեւի մը խարտափին մեջ տեսնել տիեզերական զորության գաղտնիքը, ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեռի անհունը»...

Արահետը կրկին թեքվում է դեռի վեր, բայց ֆիչ հետո ոտքս դեմ է առնում այն ոտքերիս խոչընդոտին, որի առաջ ամեն անգամ կանգնում, նայում եմ թշնամաբար, պետք է անցնեմ վրայից: Բեռոնե քայքայված հիմքն է այն երկաթաձաղ ցանկապատի, որով խաներեք տարի առաջ շրջապակել էին այն բացատը՝ մի ավելորդ շինությամբ խաթարելու բնության այդ հրաշալիքը: Այո, հենց այստեղ էր, այս կետում, որ այդ երկաթաձաղ արգելանքը տեսնելով առջեւս՝ անակնկալի եկա, զարմացա, հետո զայրույթ, որ բոլոր մղեց ինձ այն հոդվածովս պայքար սկսելու բացատի պահպանման համար, եւ հատա նպատակիս: Բայց եւ՝ այո, այո, ինչ օգուտ: Ահա հիմա կրկին, ամեն օր առավոտյան էլ, այս ժամին էլ, չեմ կարողանում անտարբեր նայել սա տարածքին, որ մնացել է այն բացատից՝ աղականված, քարտանդ: Մնացել է ցանկապատի այս հիմքն էլ տարածքի շուրջ: Կոխեցի անցա: Միշտ խուսափում եմ աջ կողմով գնալ այդ հիմքի երկայնքով, չեմ ուզում տեսնել այն ավերված տեղը, որ Իսահակյանն ու Չարենցն են նստել ժամանակին, իսկ նրանցից տասնամյակներ հետո նստում էինք Վաղիմն ու ես, ու բարեկամիս մանկության հիշատակով նրանց պատկերացնում այդ ամենագեղեցիկ անկյունում՝ բարձր ծառերի հովասուն ստվերում: Այդ հսկա սաղարթախիտ ծառերն էլ չկան, տարածքի ո՛չ աջքին, ո՛չ էլ ձախին, ծառակոտրման տարիների զոհ դարձան, ու նախկին անտառի փոխարեն, որ բնաստեղծ տաճարի զգացողություն էր տալիս բազում բարձրտղեբ սյուներով ու կանաչ կամարներով, այժմ անանցանելի ջունգլիներ են գոյացել՝ կտրված ծառերի առմատներից ընձյուղված, խառնիխուռն աճած ճյուղերով:

Այստեղ գոնե լրիվ պայծառ է, հազիվ երեկոյանալ սկսող հետմիջօրեի մի ֆիչ թախծերանգ ոսկելույսը: Արեւը դեռ բավական բարձր է Թեղենիսից: Շարունակեմ ճախի առահետով գնալ դեռի իմ սարահարթը վերեւում, այնտեղ ավելի եւս պայծառ կլինի, արեւը կթվա դեռ ավելի բարձր: Բայց չէ, ոտքերս դարձան աջ կողմ: Հանկարծ ուզեցի տեսնել այն տեղը: Վաղուց եմ խուսափել, հիմա գնամ նայեմ: Անցնում եմ կիսավեր, ֆնձոտ տաղավարի մոտով, որի շուրջը աղբանոցի են վերածել այստեղ ֆեֆի եկածները: Դանդաղ քայլում եմ ցանկապատից մնացած բեռոնե հիմքի երկայնքով, հայացքս փնտրում է այն տեղը: Փոսեր, մացառուտներ, աղբ, թրիք: Դժվարանում եմ նույնիսկ, ինչպե՞ս որոշեմ ճիշտ տեղը, երբ ա՜յն հսկա ծառերը չկան: Աչքս ջունգլիի եզրին է: Ահա այնտեղ: Ոտ կտրված ծառերից ընձյուղված ճյուղերը ավելի ճոխ ու խիտ աճել, բարձրացել են ավելի քան երկու մարդահասակ: Այո, այնտեղ է, դանքի էին այն հսկա ծառերը, որոնց տակ նստում էինք Վաղիմն ու ես, իսկ ժամանակին նստել էին նրանք: Սա բեռոնը ոտքիս առաջ, մյուս կողմը՝ երկարուն փոս: Կեղտանման զազիր տաստակներ, որոնց տակ փտած շորի, ժանգոտած թիթեղի նման բաներ: Շրջանցում, բարձրանում եմ փոսից անդին փոքրիկ, մացառոտ զառիվերը մի քանի քայլ, նստում ջունգլիի եզրին, այն խառնախիտ ճյուղառաս վերածած ծառերի ստվերում: Արեւը ետեւումս է...

Հը՛, հուշարձան եմ պատկերացրել այստեղ, այնպես էլ գրել եմ այն հոդվածիս մեջ, բացատը՝ պատմա-մշակութային արժեք: Բայց չեմ գրել՝ մի ոտոյկ խաչքար, մշակութային ուխտատեղի, ինչպես հիշեցի ֆիչ առաջ, որ ասել եմ բարեկամիս: Հիմա մտածում եմ՝ այո, այո, հենց խաչքար, մի ոտոյկ խաչքար... Վաղիմի այն հուշից մտքումս շիկացածի նման դրոշմվել է հատկապես այն, որ Չարենցը «ջղային-ջղային» էր խոսում Իսահակյանի հետ: Երեւի նախազգո՞ւմ էր, թե ինչ է գալու գլխին՝ սալինյան ճիվաղաբարո դարձած ինքնիգիտությանը ծառայող հոտաների մոլեգին հալածանքներից իր դեմ: Գուցե ջղային-ջղային բարկանո՞ւմ էր Իսահակյանի վրա, թե ինչու է այդ օրերին արտասահմանից եկել նա՝ իր գլո՞խն էլ վտանգելու ինքնիգիտորական հալածանքների տակ... Իսկ հայտնի է, որ Չարենցին այստեղից՝ Ծաղկաձորից են «տարել»... Խաչքար:

Եթե դրվեր հուշարձանը, ինչպես գրել եմ հոդվածում, իսկ իմ ներին պատկերացմամբ՝ հուշարձան-խաչքար, ահա հենց այստեղ պետք է դրվեր՝ այն հսկա, լայնածավալ սաղարթախիտ ծառի տակ, այստեղ, ուր չգիտես ինչի համար փորփրել են, ու մնացել է փոս՝ ահա այդ զազիր տաստակների բույն դարձած: Ետեւիդ ջունգլին փորձես մտնել, այնտեղ էլ հիմա տաստակ-մաստակ ամեն կողմ, ճանկռող մացառներ՝ կտրված ծառերից լիաբուռն վերածած թանձրասաղարթ ճյուղերի հետ, խառնախշտիկ թավուտ, հաճախ անթափանցելի, ոչ մի առահետ-բան, այս ու այն կողմ արանքի տիտի փնտրես ճանկռտվելով անցնելու, վերջապես գտնելու մի ելք, դուրս գալու այդ խեղդոցից: Մտ է այստեղի նախկին անտառը տաճարային վեհությամբ, օդասուն, հատակին վերահայաց աղոթողների նման հեզ թփուտներով եւ դրանց միջեւ լայն առահետներով: Մտ է երկար ցողունի ծայրին վարդագույն կամ սոցիակ բաժակի նման ծաղիկը, որ սիրում էր, ինչպես նկատել էի, անտառի հովանու տակ աճել. վաղուց չեմ տեսել, չֆացե՞լ է միթե: Եվ ընդհանրապես, երբ հիշում եմ անցյալի թափառումներս, ակնբախ երեւում է, որ ծաղիկները շատ են պակասել Ծաղկաձորում, գարնանն անգամ օդը նարինջ ու մեղր չի բուրում այլեւս...

Տես էջ 9

* Գրկախառնվեցեք, միլիոններ (գերմ.):

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Օրագրություն

Բ էջից

Բայց մարդկությունն էլ ընդհանրապես, ամբողջ մարդկային ցեղը... ի սրտե, ի խորոց սրտի, անոպայմանորեն, հավասարմորեն սիրո՞ւմ է այս երկրագունդը, որ ընտրվել է իրեն: Լիանվեր հոգածությամբ գոտգոտո՞ւմ է իրեն ծնող, սնուցանող մայր բնությանը, նրա ծոցից հար վերստեղծվող կյանքի խորհուրդը: Նախանձախնդիր գնահատո՞ւմ է այդ ծոցում իր էլ ստեղծած մշակույթը եւ դրա խորհուրդը նաեւ: Ճշմարտորեն սիրո՞ւմ է այս երկրագունդը՝ իր էության խորից ընդծին զգացումով, գոյացած լինելու եւ արթելու նախնական, հիմնական ուրախություններով, լինի երկյուղներով էլ հանդերձ: Երկրագունդն այս, տիեզերքում իր այս հրաբալի հայրենիքը: Որն արդակնել է, սակայն, թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես, բահամոլական կրքերի անհաշտ պայքարում դարեդար, արհամարհելով ու խախտելով բնության իսկ զգուշացնող օրենքները, եթե վար առնես ամեն տեսակ վարագույրներն ու պատռես դիմակները եւ նայես բուն մերկ իրականությանը դրանց ետեւում: Եվ այսօր աղականման արդեն հասցրել է այնպիսի չափերի, այնպիսի ճգնաժամի, որ գոյության ամենահիմնահարցն անգամ վտանգված լինելու ահազանգն է հնչում...

Վե՜ր կաց, վե՜ր կաց, ինչ ես այսպես նստել կոնակդ արեւին դարձրած, աչքդ սա տասակոտ փոսին: Ավելի խո՞րն ես իջնելու հիմա՝ բուն կեցության հարցերի՞ն, տիեզերակա՞ն, գոյութենակա՞ն, մետաֆիզիկակա՞ն, կյանք-մահ, իմաստ-միմաստ, տարակուսս-մարակուսս եւ այլն: Գիտես, չէ՞, գիտես, որ այս տարիքդ, այն ծանր լցվածությունը ներքուստ, երբ ութսունամյա սիմֆոնիայիդ ֆինալն է սկսվել ձայնաբերջոմով, քեզ այլեւս շատ չեն հուզում, չեն տանջում այդ անլուծելի հարցերը: Սիրտդ ուզում է նույնիսկ ազատվել այդ լցվածությունից, որի ծալքերով անցած լինելուց հետո վերադառնալ սիմֆոնիայիդ վճիռ նախերգանքին, երբ հայդ քեզ ցույց էր տալիս ծառ ու ծաղիկ, տանում էր այն բարձունքը՝ «արեւին ծագելուն խորհուրդն զգալու», եւ քո հմայված զարմանքի ժամով ընկալում, քեզ նույնացած էիր զգում աշխարհի հետ, աշխարհը՝ քո մեջ, դու՝ աշխարհի մեջ: Հայդ, որ անցել էր եղեռնի դժոխային անդունդով, հետո էլ ինչպիսի տասակոտ փոսերով իր ամբողջ կյանքում, իսկ մահից միչ առաջ, վաղուց կես-անդամալույծ, իր վերջին ամռան այն օրը, հիշում ես, չէ՞, ծալաթոռում մեկնվել էր իր տնկած ու ածեցրած ծիրանի ծառերի տակ ժպտուն աչքերով, եւ երբ հարցրիր՝ ինչպե՞ս է զգում իրեն, աջ թեւը տարածեց, հայացքը վեր, ասաց մի բառ միայն. «Աշխա՞րհ»... Վեր կա՞ց, շարունակիր բարձրանալ քո սարահարթը: Հիմա թող «վարը» մնան հարցերը, անլուծելիները մանավանդ: Միշտ անկեղծ ես եղել ինքդ քեզ հետ, ու գիտես, որ արեւի տակ իրիկնացող, բայց դեռ ոսկեբող այս պայծառության մեջ, թեկուզ ջունգլի դարձած լինի այն քո սիրած անտառը, ուրախություն կա սրտիդ մեջ, ներքին ժամերգ կա, միշտ էլ նման քո հմայված զարմանքի ժամերին կյանքիդ այն նախերգանքում: Վե՞ր կաց, չփակվի այդ ժամերգ, չսկսվեն մարդկային շատ ու շատ, մեծ ու հեռու բաներից հիասթափության դառն ոռճումներդ եւ հոգնածի նման իջնես դարձյալ, թե «ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես»: Գիտես, որ բնության մեջ քեզ համար չկա ու երբեք չի եղել «ո՞ւր եմ ես, ո՞վ եմ ես» հարցը: Վե՞ր կաց...

Ես շրջանցելով փոսը, կոխեցի բեսոնին ու անցա դեռի այն արահետը, որով միշտ բարձրանում եմ սարահարթ: Քանդրված է այն կողմն էլ, ջրի ժանգոտ խողովակ վերեւից, որի կողին թարմ կանաչ, կարճիկ գեշնաված խոտի միջով է արահետը ձգվում դեռի վեր: Տես, աշնանային հատուկենս ծաղիկները խոտի մեջ, իրենք էլ կարճիկ, գեշնին կոված, դեղին-դեղին, պայծառադեմ ժպտում են՝ արեւի՞ն, գուցե ի՞նձ, իսկ ես, ամոթ ինձ, չգիտեմ իրենց անունը, բայց նման են իսկական մարգարտածաղիկի, այդպես էլ կոչում եմ նրանց մտերմորեն: Ես միշտ զգուշանում եմ ծաղիկների վրա կոխելուց, երբեք չեմ պոկում, նրանց սիրում եմ նայելով, հոտոտելու համար թեքվելով նույնիսկ, որքան էլ ցածր լինեն: Մանկուց այդպես, երբ «խոսում» էի էի նրանց հետ, ծնկի եկած հակվելով նույնիսկ խոտի մեջ այն փոքրիկ ասղաձեւ կարպոս ծաղիկների վրա, որոնց հանդեպ մի հատուկ գուրգուրանք էի զգում: Մինչեւ այսօր էլ վրդովվում եմ տեսնելով, որ դաշտային ծաղիկներից կազմում են խոշոր փնջեր, որ մի երկու օրից գլուխները կախ թառամելու են ծաղկամանում, եւ նրանց գցելու են աղբանոց: Թվում է՝ վիրավորում են ինձ, հոգու իմ գանձարանից կողոպտում եւ վատնում...

Բավական բարձրացել էի, աչքիս ծայրը նկատեց ու ստիպեց նայել աջ ու ետ, կանգ առնել հմայված: Ասված իմ, ինչ գեղեցկություն՝ կենդանի բանկար, պարզորակ, վճիռ, կատարյալ: Ամբողջովին կարմրած կոնաձեւ ծառ, մի քանի միջահասակ սոճիների մեջտեղում ասես կոթողվել է մեջքից վեր՝ մաքուր կարպոս երկնի մեջ: Գծանկարը հստակ, գույներն իրար սիրելով ներդաշնակված. սոճիների մեղմ կանաչը կարծես գրկել, բարձրացրել է կոթողացած, արեւից ազնվեռանգ շիկնած կարմիրը, որ մանրաթրթիռ հրավանքով ամբարձել է երկնի բարեհամբույր ջինջ կարպոսի մեջ: Ուզում եմ շարունակել ճամփաս, մի քանի քայլից հայացքս ետ է դառնում կրկին, չի կարողանում կտրվել այդ պատկերից, որ ավելի արտահայտչորեն կենդանանում, խոր իմաստ է բացում կարծես: Թվում է, որ ծառերն էլ երջանկության պահեր ունեն իրենց անցավոր կյանքի թոհուբոհերի մեջ, ու տեսնում եմ այդպիսի գեղեցիկ մի պահ: Սրտիս ուրախությունը մի փոքր հոգ ալիք է տալիս: Հաղորդակցվեց ծառերի այդ պահի երջանկությանը հեսմիջօրեի այս խաղաղ, պայծառ ժամին: Բայց սա՝ ինչ, այսպես ասած, հենց բանաստեղծական մի զգացո՞ւմ է միայն, կամ գեղագիտական ապրո՞ւմ: Թե՞ իրոք, էակցություն՝ նրանց բուսական էության եւ իմ մարդկային էության միջեւ: Թերեւս գոյութենական գաղտնախորհուրդ ճշմարտությո՞ւն է այդ էակցությունը խորերի խորքում: Այլապես ինչո՞ւ այդ մի փոքր հոգ ալիքը սրտիս ուրախության մեջ, թեկուզ բանաստեղծական զգացում կամ գեղագիտական ապրում կոչվի: Եթե օժտված լինեի նկարչական տաղանդով եւ կարողանայի այնպես նկարել այս պատկերը, որ ուրիշներին էլ հաղորդվեր այս զգացումը, այս ապրումը, ինչի՞ շնորհիվ պիտի հաղորդվեր: Ոչ արդյոք հենց այդ խորային էակցության, տիեզերականորեն էութենական ճշմարտության շնորհիվ...

Եվ ահա իմ սարահարթը: Սկսած արեւմուտքում այն անտառապատ բլրից, ուր ոսկի աշունն արդեն

Գրողների ստեղծագործական տունը Ծաղկաձորում

նախշազարդել է կանաչը դեղինի ու կարմիրի երանգներով, մեղմորեն զառիվայր ձգվում է ուղիղ դեռի արեւելք մինչեւ այն լերկ բլուրը հեռվում: Այստեղից, ուր բարձրացել եմ արահետով, դեռի վար գնում է գյուղամիջյան ճանապարհը, որից անդին՝ շարք-շարք տնկված ու ածած սոճիների անտառ, ասդին՝ բացատներ հատուկենս թփերով: Բարձրադիր երկարուն սարահարթ, այս կողմը Ծաղկաձորի ամբողջ հովիտն է, մյուս կողմը՝ Մաքրավանքի ձորն ու գյուղը, 13-րդ դարի վանքը ծոցում: Աջ ու ձախ հոյակապ տեսարաններ աչքիդ առաջ: Նայես այն կողմ՝ Հրազդան խաղաքը ներքեւում իր լճով, Ծաղկունյաց լեռները, Գեղամա սարերը, դառնաս այս կողմ՝ Փամբակի լեռնաշղթան է հորիզոնին դեռի Սեւան թեքված, փեշերին հեռու-մոտիկ գյուղեր, ահա դա՞է Դդմաշենն իր յոթերորդ դարի տաճարով: Եվ այն լայնատարած լեռնադաշտերը դեռի արեւելք:

Ասում եմ՝ «իմ» սարահարթը, որովհետեւ չեմ հիշում, որ ներքեւի մեր շենքից որեւէ մեկին տեսած լինեմ այստեղ երբեւիցե: Բացի մի անգամ տարիներ առաջ Մուշեղ Գալշոյանից, որ ամառվան հեսմիջօրեի այս ժամին էր հենց՝ արահետից բարձրանալով հայտնվեց, մինչ ես իջ հեռու նստած էի սոճու տակ, ու կանգնեց, անշարժ նայեց հեռուները բավական երկար, ես չուզեցի խանգարել նրա այդ հայեցողական տրամադրությունը, ինքն էլ չտեսավ ինձ, դարձավ ու ետ իջավ, ահա նա միայն մտքումս տրավորվել է այդպես: Առհասարակ մարդ չի լինում այստեղ, շատ հազվադեպ՝ անցորդ մի որեւէ տարեց գյուղացի, որին բարեւում եմ անպայման, բարեժպիտ պատասխանում է մի պարզ իմաստալից խոսքով, պարզ էլ փիլիսոփայում ենք մի քիչ: Մերթ էլ տղաս, երբ կիրակի օրով ինձ այցելության են եկել քաղաքից, հետս բարձրացել է այստեղ, իր իսկ ցանկությամբ, ինքն էլ մանկուց սիրահար Ծաղկաձորին եւ ընդհանրապես բնության:

Միշտ մենակ եմ եղել իմ սարահարթում, եթե չհաշվեմ այն մի քանի կովերին, որ երբեմն առաջում են այստեղ, ու մեկնումեկը, երբ մոտենալով տեսնում է ինձ, կանգ առած նայում է խոշոր բարի աչքերի վստահությամբ, ես էլ ժպտալով մի անուշ խոսք եմ ասում, եւ նա կարծես գոհացած գլուխ տալով իջեցնում է դունչը եւ շարունակում առաջել: Միշտ մենակ ու հոգիս անդորրավետ՝ այս օդասուն լռության մեջ, կենդանի լռություն՝ մի երկու լեռնային թռչունի բարալիկ ծիվծիվով չգիտես որտեղից, շուրջդ միջատների սվսվումով, կարծես նույնիսկ ծառերի ու թփերի շնչառությամբ, մերթ էլ մի ալիք զեփյուռին պատասխանող նրանց մեղմ սոսավյունով: Վեր-վար, հեռումոտիկ թափառելուց հետո, հաճույքով նստել եմ երկար ու հանգստացել:

Երբեմն այն կողմը՝ Մաքրավանքից վեր ձորափի կարմրավուն հարթ ժայռերին էի նստում, հատկապես առավոտյան, երբ հովիվները, իրենց «հո՜-հա՜» գոչյուններով, գյուղի նախիրն են տանում ձորն ի վեր աջում այն հեռվի տարահարթերը. մի անգամ իջա ու ինքս էլ միացա նրանց, ասես նեռղամիտ բարդացական, մի քիչ էլ հեգնոտ զարմանքով ընդունեցին, իմ էլ «հո՜-հա՜» ձայնարկումներով մասնակցեցի այդ ասես բնարդաշտ արարողության թափորին, ասես մի նախնավանդ բնաստեղծ սրբասացություն կատարելու զգացումով, երբ թափորից շեղված կովին «հո՜»-էի ձայնում եւ նա հեզ նայելով հնազանդվում էր ինձ: Այդ առավոտը ինչ բացառիկ ուրախություն էր ինձ համար:

Երբեմն էլ այս կողմն էի նստում իմ սիրած այն ոչ շատ մեծ, բայց իր թփային կազմվածքով կոկիկ, բարեձեւ ածած մասրենու մոտ, որտեղից երեւում է լեռնադաշտերի այն լայնարձակ հեռատեսությունը դեռի արեւելք, որին միշտ էլ անհագ հմայվածությամբ եմ նայել իմ սենյակի պատշգամբից, իսկ այստեղից ավելի վեհաշուք է հմայում՝ երկնակամարի հետ լիալիր ներդաշնակված երկինքն ու երկիր, լեռնափեշերին այն գյուղերը ձախակողմյան իր ծոցում, արեւելյան հորիզոնին անհետացած Սեւանա ծովից արտացոլվող կարպոսի անհունում անգայտացած:

Իսկ երբեմն, ամռան շոգ կեսօրին մանավանդ, սիրում էի նստել, ավելի ճիշտ՝ ընկողմանել գեշնին չորացած փշատերեւների վրա սոճիների տակ, երբ շոգից արբեցած այդ ծառերն իրենց բուրմունքն էին արտաշնչում, իսկ ես էլ ինչ արբեցությամբ ներշնչում էի ամբողջ կրծքով, ամբողջ սրտով այդ հարազատ բուրմունքը: Գրեթե անմիջական վերադրումով դա ինձ հիշեցնում էր, ինչպես բուրմունքը միայն կարող է անել, հեռավոր մանկությունս Աթենքից դուրս էրիթրեա գյուղի մոտ այն անտառում, ուր ամռանը երեք ամիս օդափոխություն էինք անում վրանի տակ, թեպետ այդ միջերկրականյան սոճիները, բնական հոծ, վաղնջական անտառներում Պենտելի լեռան, ավելի էին լիաշունչ բուրում, ասես երգ էին արտաշնչում ճոլոտների էլ բյուրաձայն ֆուգայի հետ: Ու նաեւ Կիպրոսում ամռանը՝ մեր Մակարա վանքի շուրջը անտառներում:

Օհ, երանության բազում ժամեր ու ժամեր եմ ապրել իմ այս սարահարթում: Այո, լիուլի երջանիկ ժամեր, երբ առանց իմ ջանալու էլ, պարզապես ինձնից անկախ՝ բնությունը գլխիցս դուրս էր գալիս բոլոր սիրտ բորբոքող, հոգի ու միտք մաքրող հարցերը, իր հզորագեղ կախարդանքով ավելի ու ավելի բացում ներքին բնածին ժամիս, վերածում հմայված հայեցողության: Երբեմն գիրք էլ էի բերում հետս, հատկապես անտիկ բանաստեղծական եւ կամ իմ սիրած հայ թե ֆրանսիացի, անգլիացի թե չինացի բանաստեղծների բնաբաշտ երկեր, կարդում էի սոճիների տակ ընկողմանած, բայց դա ոչ այնքան ընթերցանություն էր, որքան իմ այդ լռաձայն մտերիմներին էլ կանչելու այստեղ՝ հմայված հայեցողության հոգեւոր խորխճանքին:

Մանկությանս ինձ բնազդորեն զգացել եմ բնության, աշխարհի հետ նույնացած, իսկ այժմ, այս տարիքիս, ավելի է խորանում այդ զգացումը, որ ներքուստ կարծես ինձ տեսանելիորեն հաղորդակցում է իրերի ու երեւույթների բուն էության հետ, ինձ էակցում նրանց՝ լինի երկինք թե արեւելյուս, հող թե քար, խոտ թե ծաղիկ, ծառ թե թուփ, շոգ թե բուրմունք, զեփյուռ թե սոսավյուն, թռչունների ծիվծիվ թե միջատների սվսվում, ժայռի կոթող թե առաջող մի կով, տարեց գյուղացու պարզ խոսք թե հովիվների «հո՜-հա՜» գոչյուն: Անգամ սեւակուսակ ամպեր, որ մի օր ինձ անակնկալի բերեցին առագ հայտնվելով Թեղենիսի ետեւից, հորդառատ անձրեւով խխում դարձրին ոտից գլուխ: Այդ բոլորն այժմ ավելի ու ավելի են իմ էությանը խոսում խորային համընդհանուր տիեզերական լեզվով...

Արեւը բավական իջել է արդեն, գնամ իմ սիրելի մասրենուն իրիկնային «լույս զվարթ» բարեւ ասելու: Ահա, իր բարեձեւ կազմվածքի ոչռանով, իր զմրուխտ կանաչի մեջ հարյուրավոր հակինթ-հակինթ կլոր փայլուն մասուրների կարմիրով ժպտում է նա, ոչ միայն արեւին, ահա ժպտաց ինձ էլ, ճանաչում է իր մտերիմին: Իր ետեւում լեռնադաշտերի այն հեռատեսանն է՝ իրիկնացած ավելի խոր կարպոս երկնակամարի տակ: Փամբակի լերկ լեռնաշղթան ձախին, ցերեկվան արեւի տակ միշտ դեղնավուն, իրիկնային նուրբ մանուշակագույնի երանգն է հագել իր դեղինի վրա, սվերտած ծորերն ասես ի հայտ են եկել վերից վար մուգ կարպոս պատմուճանված, ու ամբողջ լեռնաշղթան կարծես ճանդակայնացել է: Ստորոտին ահա այն ամենամեծ գյուղն է Դդմաշենը, 7-րդ դարի տաճարը ծոցում. մի քանի պատուհան, գյուղում, վերջալույսի դիմաց փայլփլում են փոքրիկ ոսկի աստղերի նման: Ինչ լռություն, խաղաղություն ամեն կողմ, կովի հեռավոր բառաչներ միայն լսվում են ներքեւից՝ Ծաղկաձորից:

Այստեղ արդեն, ահա, արեւն իջավ Թեղենիսի ետեւ, մասրենին մարեց իր հակինթների փայլը, իրիկնային հովից մեղմ թրթռաց: Իսկ լեռնադաշտերի ամբողջ խաղաղ հեռատեսանը դեռ լուսավոր է այնտեղ՝ մայրամուտի արեւից թունդ ծիրանագույն դարձած: Մայրամուտի՞ արեւ: Դա էլ իր խորհուրդն ունի, հայրիկ, ինչպես արշալույսի արեւը, որի խորհուրդն էիր ցույց տալիս ինձ մանկությանս: Քիչ հետո մութն է իջնելու այս խաղաղության վրա, բայց վաղը կրկին ծագելու է արեւը...

Եվ հանկարծ...

Ծանր սվեր հոգուս վրա հանկարծ: Եկավ կրկին: Դարձյալ ու դարձյալ: Այն զայրացուցիչ, նողկալի, բայց եւ դառնորեն ծիծաղելի խեղկատակությունը, որով երեկվա ոճագործների հետնորդները ամենայն լկտիությամբ ժխտում, նենգափոխում են կատարված աննախընթաց ցեղասպանությունը, դեռ ուզում են այս մի կտոր Հայաստանն էլ խեղդել շրջափակումով: Ուրիշներն էլ, շահամոլության խարի կանոններով, իննսուն տարի աղաղակող ցեղասպանությունը ճանաչել-չճանաչելու անամոթ ֆարսն են խաղում: Այդ բոլորով ոչ միայն քեզ, ինձ ու մեր նահատակներին են վիրավորում, հայրիկ, այլեւ բարոյական ամենաչարագուշակ արտականումով պղծում են քո եւ իմ այնքան սիրած աշխարհը: Եվ այդ ծանր սվերի հետ՝ կրկին հոգուս վրա խուժեցին այն «վարից», ուր թողել էի դրանց, ամբողջ կյանքումս ինձ տանջած հարցերը, այժմ ավելի ցայտուն դարձած՝ թե՛ աշխարհի, թե՛ մեր ավելի եւս այլասերվող իրականության մեջ: Գուցե լուծելի հարցերի հետ, երբ մարդկությունը ճգնաժամի է հասել, նաեւ անպատասխան, անլուծելի հարցերը գոյութենական ընդհանուր կեցության: Ու կրկին աչքիս առաջ կանգնում է չգիտեմ Ում ուղղված իմ այն հին մեծ ԻՆՉՈՒՆ...

Բայց չէ: Կյանքիս այս շրջանին, ութսունամյա իմ ողիսականի վերջերգում, երբ անցյալիս լցվածության խորխորատներից վեր ելած շունչ եմ ուզում քաշել, իմ էլ մայրամուտից առաջ հոգեկան խաղաղության շունչը, հեռու այլեւ այդ հարցականը իմ հոգուց: Նայում եմ հիմա դիմացս՝ կարծես անհունորեն տարածվող ծիրանագույն հեռատեսանին: Գիտեմ, որ վաղը առավոտ այնտեղից կրկին ծագելու է արեւն իր խորհուրդով: Եվ դարձյալ հիշում եմ այն նվիրական պահը կյանքիս արշալույսին, որից էլ սկսվել է, ինչպես թվում է ինձ, այն բուն զգացումը, թե իրոք որ եմ ես, ով եմ ես: Տեսնում եմ ինձ հինգ թե վեց տարեկան, այն առավոտ, երբ մեր տան դռնից նայեցի աջ, մեր փողոցի այն հեռու ծայրին, այգիներից անդին, տեսա ոսկեհոր ծագող արեւը Ակրոպոլիսի վրա եւ Պարթենոնի տաճարն այնտեղ՝ ոսկեճաճանչ: Սիրտս հմայված զարմանքով ժպտաց այդ Արեւածագին: Ու թվում է ինձ, իր առաջին անգամ այդ պահին գիտակցեցի, թե ուրախություն եմ զգում:

Եվ ուրախության այդ ներքին ժամերգը մաքուր, պայծառ մնաց սրտիս մեջ իմ ամբողջ կյանքում, որքան էլ այդ հարցերն ստվերոտում էին հոգիս: Մաքուր այն ուրախությունը, թեկուզ խավարի մեջ մի շողն իսկ, որով լուսահայտվում է կյանքի, անդրելու նախնական բուն ճշմարտությունը՝ անհունորեն թանկագին: Որով մարդը ի բնե օժտվում է գոյության գալով այս աշխարհում, որքան էլ առեղծվածային լինի թե՛ աշխարհը, թե՛ իր գոյությունը դրա մեջ: Ու իրիկնային ժամին, մի քիչ թախծերանգ ուրախության ժամերգով սիրտս ջերմացած, իմ սարահարթից ահա իջնում եմ զվարթ ընթրիքի եւ զրույցի՝ մարդկանց հետ, մարդկանց կարոտ, իմ ազգակից թե օտարազգի, այստեղ, այս ստեղծագործական տանը, մեր, իմ Ծաղկաձորում: Կյանք է: Ուր էլ լինի, ինչպես էլ որ է՝

ՃԻՇՏԸ ԿՅԱՆՔՆ Է... ◆

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Բացահայտումներ...

ԲՈՆԱԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

Տեսչ չէ գրողի համար տասնութ տարի լինել գրականությունից դուրս: Այդ տարիները փաստորեն չիրականացված մտահղացումներ են եւ չգրված գրեր: Իսկ եթե դրանց ավելացնենք ճամբարային եւ աֆտոռական կյանքի անազատությունը, բարոյական եւ ֆիզիկական ադրումների ամենօրյա մամլիչ ազդեցությունը, առողջական վիճակի անխուսափելի վատթարացումը, պատկերը կլինի ամբողջական:

Հազարավոր այդ օրերին Մահարին բազմիցս է իրեն տվել «ինչո՞ւ» հարցը: Ինչո՞ւ պետք է այդպես լիներ: Եվ գոնե երկու անգամ փորձել է պատասխանել. «...այդ պրոգան կապված է մի մարդու առօրյայի հետ, որն իր ողջ կյանքը նվիրել է Ալիմպոսի աստվածներին: Եվ եթե նրան միշտ չեն ցոյել Ալիմպյան աստվածները, այդ նրանից է, որ նա չի առաջել սրբազան լեռան ստորոտներում եւ ձգտել է միշտ լեռն ի վեր...» (Վ. Աճեմյանին, 26 մարտի 1951 թ.), «...իմ «մեղքը» ես գիտեմ: Իսկ այդ «մեղքը» նրանում է, որ ես սովորական շարքային չեմ...» (Անտոնինա Մահարուն, 24 փետրվարի 1953 թ.):

Մահարու համար գաղտնիք չէր նաեւ, թե ով էր այդ մարդկային մեծագույն ողբերգություններից մեկի պատասխանատու. «...մեծ ոճրագործ, դահիճ եւ սինլոր վրացի Ստալինի գործերն էին, կատարողները՝ նրա դրածները, Հայաստանի մեջ հայը, Ռուսաստանի մեջ ռուսը, Բելառուսիո մեջ բելառուսը...» (Շ. Շահնուրին, 28 հունիսի 1962 թ.):

Ստալինյան հայ դրածներին (Մուղդուսի, Եղբայր Նիկողոսյան...) Մահարին չի անդրադարձել, բայց գրչակիցներին, որոնք չեղան իրենց կոչումին արժանի բարձրության վրա՝ խնիցս: Հետաքրքիր չի եղել այդ խոսակցությունը կողմերի համար, սակայն զարմանալին այն է, որ դա Մահարուն կարծես տրվել է ավելի դժվար, քան դիմացինին. «Գրողների տանը, մեր զրույցի ընթացքում ես քեզ ասացի, որ ուզում էի գրել քեզ մի քանի հարցերի մասին՝ թեթեւացնելու համար առանց այն էլ ծանրացած խղճիս բեռը, կամ խղճիս ծանրացած բեռը: Սկսում եմ քո հարցով,- ինչ պատահեց: Իսկապես, Նայիրի, ինչ պատահեց. ինչո՞ւ հանկարծ որ ծերության նորից բաժանվեցին մեր ճանապարհները, դու դեպի ձախ, ես դեպի աջ եւ կամ ընդհակառակը. ես այն ժամանակ ասացի եւ հիմա էլ կրկնում եմ, որ ամեն ինչ սկսվեց քո մի զարմանալի այցելությունից՝ Ալազանին...

Բառացիորեն գրում եմ Ալազանի խոսքերը.-

- Ես, չգիտեմ, ես Նայիրուն չեմ հիշում այդպիսի տրամադրությամբ. նա ներս մտավ եւ սկսեց գոռգոռալ, թե՝ ես ոչ ոքից չեմ վախենում, թե՝ ես հիմա էլ պնդում եմ, որ Ակսել Բակունցը դաշնակցական է եղել եւ ելն-եկն.:

*Ես, ճիշտ ասած, Ալազանի պատումին մեծ կարեւորություն չտվի. ինչ վախենալու մասին է խոսքը, ինչ Ակսել Բակունց եւ դաշնակցություն, երբ դու 1954 թվից հետո համարում էիր այդ բոլորը հիմարություն... ես խնդրեցի Նորենցից, որպեսզի անցնի Ալազանին եւ սուզվի, **ճի՞շտ եմ լսել, թե ոչ**: Մեծ եղավ իմ ցավը, երբ Նորենցը հաստատեց իմ լսածները. Մարոյի վավերացումով...*

Երկրորդ «ինչ պատահեց»ը պատահեց քո նշանավոր ելույթի[1] օրը «ծխականության»[2] եւ հարակից...

*Նայիրի՛, մի «պատահմունք» էլ պատահեց առանց քեզ. Իշխանյանն ինձ ուղարկեց իր «Ա. Բակունցի բիբլիոգրաֆիան»[3] այս խիստ բարեխիղճ աշխատության մեջ նշված են եւ Բակունցի դեմ եւ թեր գրված հոդվածները. վերջում եւ կարդա «Ն. Զարյան» բաժինը «Ա. Բակունցի մասին»: Այս էլ ինձ համար անակնկալ էր: Հետո Իշխանյանի աշխատության հետեւերով ես կարդացի քո, մեղմ ասած, անթույլատրելի հոդվածները[4]... Նրանք լույս են տեսել այդ մեծ գրողի ամենաողբերգական օրերին, լույս են տեսել **տասնյակ հազարավոր եւ հազարավոր** տիրաժով... իսկ դու կարծում ես, որ քո մի ելույթով, որի ունկնդիրների թիվը 35-ից ավելին չէր, խավեցի՞ր քո մեղքը... Մտածիր, ուղիղ ծոտը. դու կարող ես այդ անել: Հանուն սովետահայ գրականության, հանուն իմաստուն ծերության:*

... Ինձ ամեն ինչում կարող ես մեղադրել, բայց քո հանդեպ... 1954 թվից հետո... չեմ կարող գանգատվել: Ես քեզ մոտ եղա եւ ընկեր՝ քո այդ ծանր յոթնամյակի օրերին: «Հիմա քո հազարն է»[5]... (Ն. Զարյանին, 3 հունիսի 1961թ.):

Ցավոք, Ն. Զարյանի պատասխան նամակը մեր ձեռքի տակ չէ, սակայն Գ. Մահարու «Պատասխանի պատասխանից» դժվար չէ կռահել, որ այդ շրջանում բարոյական կրակահերթի տակ ընկած գրողը, ըստ իր սովորության, այս անգամ էլ գնացել է մեղքերի ժխտման կոշտ ճանապարհով եւ ավելի բարդացրել իր վիճակը. «Գիտեի, որ նամակս չի մնա, ավելի ճիշտը՝ չես թողնի անպատասխան: Շնորհակալություն. ես գիտեմ, թե որքան դժվար է գրել, երբ չկա «սիրտ, ժամանակ եւ տրամադրություն»:

Պատասխանում եմ կետ առ կետ, պատասխանում եմ ոչ թե ապագա դոցենտներին հիացմունք եւ քեզ՝ ցավ պատճառելու համար, ոչ (մի մտածի, որ ես մի բարի պտուղ եմ եւ իմ մասին այդպիսի կարծիք ունեմ, ոչ եւ ոչ), գրում եմ, որ հասկանաս ինձ եւ մանավանդ՝ քեզ հասկանալու համար:

*Ես առանց վերապահության եւ անկեղծությամբ, ճիշտ է, ոչ մանրամասն, շարադրեցի իմ՝ քո հանդեպ ունեցած դժգոհությունները, **ուրիշ դժգոհություն չունեմ ես**. ասել եմ, ինչ կուտակված է եղել մեջս եւ հավատա, գրելուց հետո զգացել եմ հոգեկան թեթեւություն: Ես պարտավոր էի քեզ գրել եւ կատարեցի իմ պարտականությունը, իսկ դու գտնում ես, որ **ուրիշ են պատճառները** մեր (ըստ քո ուղղումի՝ «ավելի ճիշտը՝ իմ») սառնության... դու չես ուզում այդ բացատրել «երկու պատճառով», նախ, որովհետեւ դա ինձ հայտնի է[6] եւ երկրորդը՝ ամենակարեւորը, «**բացատրել այդ պատճառը կնշանակեր շարժել իրար մեջ ներթափանցված պատճառների անախորժ կույտը, գրգռել իրար պլլված օձերի կծիկը...**» (քո նամակից): Սարսափելի է: Չկարծես թե «օձերը», ո՛չ, սարսափելի է, երբ մարդը մարդուն չի հավատում...*

Եվ վերջապես դա ինչ սարսափելի պատճառ է, ահավոր եւ անխոստովանելի, որի մասին ես չեմ կարող գրել. ավելին, ուզում եմ «ողջակել», «օրորել քեզ եւ օրորվել ինքնախաբեությամբ»: Ես չեմ կասկածում քո ստեղծագործական ուժեղ երեւակայության վրա, ինքս էլ զուրկ չեմ այդ քանքարից, բայց շատ բան կտայի, իմանալու համար, թե դու ո՞ւր ես հասել քո երեւակայությամբ:

Կրկնում եմ, Նայիրի, ուրիշ դժգոհություն չունեմ ես, բացի այն ամենից, ինչ շարադրել եմ ի խորոց սրտի գրած նամակում:

*Քեզ «**անտանելի զարմանք է պատճառում այն ջանասիրությունը, որով մարդիկ, առանց պատշաճի բերման, «ուսումնասիրում» են մեզանից քառորդ դար առաջ մոլեգնած իրադարձությունները...**»,- գրում ես դու: Չգիտեմ, ո՞ւմ ես ակնարկում, Իշխանյանի՞ն թե ինձ: Եթե Իշխանյանին, ապա զարմանալու ոչինչ չկա, նա կատարել է իր գրական ուսումնասիրողի պարտականությունը, եթե ինձ... ի՞նչ ես կարծում, մի՞թե ես **պարտավոր չեմ** կարդալու «**մեզնից քառորդ դար առաջ մոլեգնած իրադարձությունների**» ընթացքում եղած գրականությունը, ճիշտ է՝ ուշացումով: Իսկ ե՞րբ պիտի կարդայի ես այդ նյութերը, կես դար հետո՞, կամ գուցե Իշխանյանը երեք քառորդ դար հետո՞ պիտի գրեր իր բիբլիոգրաֆիան... բայց չէ՞ որ երբ էլ որ գրվեր եւ երբ էլ որ կարդացվի այդ նյութերը, ծանր է լինելու նրանց թողած տպավորությունը, անտանելի ծանր: Ի՞նչ եմ ես խնդրել քեզանից. որ դու, որ ձեռքով որ գրել ես այդ հոդվածները, նույն ձեռքով էլ հերքես, բացատրես ներկա եւ գալիք սերունդներին հենց քո՛ պատկերներով («փայտահատի», «կացինի», «ատաղձի», «ռանդա»-ի...). ճիշտ չէ՞ր լինի, եթե դու հանդես գայիր մի «Pro domo sua»[7]-ով եւ վերագնահատեիր քո անցյալը... ինչո՞ւ եմ ուզում, որ դու այդ անես. Բակունցի՞ շահերի համար. ոչ, Բակունցը ոչինչ չի շահի դրանից, նա իր շահը շահել է եւ ավելին ավելորդ է. գուցե կարծում ես, որ ե՞ս այստեղ մի շահ ունեմ... չեմ կարծում, որ կարող ես այդպես կարծել, որովհետեւ դա անհեթեթություն է. ուրե՞մն... Հավատա, որ ես ուզում եմ, որ դու այդ անես քեզ համար՝ նախ եւ առաջ:*

*Ես էլի եւ նորից եմ կրկնում, մեր գժտության պատճառը միայն ու միայն եղավ եւ է՛ Ալազանի հետ քո ունեցած զրույցը, քո՝ քեզ **հայտնի ելույթը** եւ քո հոդվածների թողած ծանր տպավորությունը: Քո խոսքերով ասած՝ մի՛ օրորի քեզ եւ մի օրորի ինձ, եւ մի որոնի ուրիշ պատճառ, որովհետեւ այդպիսին գոյություն չունի՛:*

Ամեն կերպ, ամեն կողմից մոտենում եմ խնդրին, հեռանում եմ խնդրից (ավելի լավ տեսնելու համար...), ուզում եմ գուշակել այն, ինչ քո կարծիքով «ինձ առավել հայտնի է, քան քեզ». ի՞նչ ես մտածում դու. գուցե... գուցե մտածում ես, որ իմ մեջ խոսել է գրական խանդը, ավելի շուտ նախանձը. չէ՞ որ այդպես մտածելը ծիծաղելի է, ինչի՞ հիման վրա ես քեզ պիտի նախանձեի 1959 թվին: Մի՞թե 1959 թվին միայն ես գլխի եմ ընկել, որ դու «Արա Գեղեցկի» հեղինակն ես: Կամ գուցե դու (դու սովոր ես քեզ միշտ տեսնել «թշնամիներով շրջապատված») կարծում ես, որ ես ընկել եմ քո «թշնամիների» ազդեցության տակ... Չէ՞ որ դա ավելի հնարավոր էր 1954-1959 թվականներին, քան 1960-1961-ին... ուրեմն այս էլ չի, ուրիշ ի՞նչ մտածեմ, որ դու կարող ես մտածել...

*Գրում ես,- «**Գրում եմ առանց հույս ունենալու, որ սրանով կփարատվի մեր մեջ ծագած «թյուրիմացությունը» կամ դու որեւէ չափով կփորձես ինձ հասկանալ...**»:*

*Գրում եմ, պատասխանում, **ճիշտ հակառակը, ես չէի գրի ոչ մի տառ ու տող, եթե հույս չունենայի, որ աստիճանաբար կփարատվի մեր մեջ ծագած «թյուրիմացությունը» եւ եթե ցանկություն չունենայի քեզ հասկանալու եւ չուզենայի, որ ինձ ճիշտ հասկանաս:***

Օգնիր ինձ եւ ես քեզ կհասկանամ կես խոսքից:

20-ական թվականներին կարող էինք ասել. «Ապագան ցույց կտա, թե ով է ճիշտը...», ա՜խ, 60-ականն ենք ապրում, այդ «ապագա» կոչեցյալը հենց այսօրն է, որ կա. մի՞թե մեզ վայել է խարխափել ինչպես 30 տարի առաջ. ոչ, մեր տարիքը սխալներն ուղղելու, իմաստության եւ ծանր պատասխանատվության տարիներ են (վերջի՜ն տարիներ...), 30 տարի առաջ կարող էինք ասել. «Որքան ապրել եմ, էնքան էլ դեռ կապրեմ».- Հիմա կարո՞ղ ենք ասել,- ո՛չ: Իհարկե, եթե հույս ունես, որ կարող ես ապրել (ֆիզիկապես) 120 տարի, կարող ես չշտապել եւ մի քանի անգամ էլ հիմնովին սխալվել, ես այդ հույսը չունեմ, դրա համար էլ բավարարվում եմ... թեթեւ սխալներ գործելով... եւ մանավանդ շատ կարգով ուղղելով» (17 հունիսի 1961 թ.):

«Թյուրիմացությունը» չհարթվեց: Երկու գրողների ճանապարհները բաժանվեցին հերթական անգամ: Թե որքան խորն է եղել Ն. Զարյանի հոդվածների տպավորությունը, վկայում են ուկրաինացի գրող Լ. Պերվոմայսկուն գրված տողերը. «Օրերս ես բառիս բուն իմաստով գիշերներով չքնեցի: Հետին թվով կարդացի Նայիրի Զարյանի «հոդվածները» սանձելի Ա. Բակունցի դեմ: Ցնցվեցի մինչեւ հոգուս խորքը: Ես գիտեի, որ նա այդպիսի բաներ է գրել, ինչ որ բաներ կարդացել էի, բայց այդ սարսափելի հոդվածները չէի տեսել: Ինձ համար պարզ դարձավ, որ եթե այդ հոդվածները չլինեին, Բակունցը կսանար իր պատժաչափը, ինչպես ես, եւ այսօր նստած կլիներ Երեւանում ու կգրեր: Այդ հոդվածները տպվել են 1937 թվականին, երբ Բակունցը դեռ նստած էր: Մեկ-երկու ամսից նա գնդակահարվեց»:

Հր. Քոչարի մահն առիթ դարձավ, որ Մահարին մեկ անգամ եւս անդրադառնար անձի պաշտամունքի տարիներին գրողների բարոյական կեցվածքին. «Քոչարի թաղման մասին եղած նյութերը կարդալիս հիշեցի Չարենցին. մի ժամանակ, 30-ական թվականներին, շարունակ գանգատվում էր. «Այ տղա, մի հայ գրող էլ չմեռավ, մի տեսնեինք, ո՞նց են թաղում... Լու-



1949-1954 թվականներից Գուրգեն Մահարուց մեզ հասած միակ լուսանկարը (3x4): Երեւանի ՆԳԺԿ բանտ:

1936-1947 թվականներից Գուրգեն Մահարուց մեզ հասած միակ լուսանկարը (3x4), փակցված է եղել անձնագրին փոխարինող «ազատական» տեղեկանքի վրա:

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՄՅԱՆ

Տես էջ 8

Մասնավորեցում

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ
մրցույթի անցկացման մասին
(ծածկագիր՝ 147-Ն-1)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2007թ.-ի փետրվարի 8-ի թիվ 147-Ն որոշման 1-ին մասով՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը հրավիրում է մասնավորեցման բոլոր սուբյեկտներին մասնակցելու ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Շափյուղա» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի մասնավորեցման մրցույթին (ծածկագիր՝ 147-Ն-1):

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1.	Ընկերության հասցեն	ք. Վանաձոր, Թեստովի 7/1
1.2.	ՀՀ կառավարության որոշման համարը եւ ամսաթիվը	N147-Ն, 08.02.2007թ.
1.3.	Ընկերության շենքերի, շինությունների մակերեսը (հա)	8445.4
1.4.	Զբաղեցրած հողային տարածքը (հա)	1.6 հա
1.5.	Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը եւ տրման ամսաթիվը	N988267, 25.09.2001թ.
1.6.	Գործունեության հիմնական տեսակը	կենցաղային սարքերի արտադրություն
1.7.	Գնահատման ամսաթիվը	19.10.2006թ.
1.8.	Ընկերության բաժնետոմսերի գնահատված արժեքը (հազ. դրամ)	64981

2. Ընկերության հաշվեկշռի ցուցանիշներ (01.07.2006թ. դրությամբ)

(հազ.դրամ)

ՀՀ	Ցուցանիշի անվանումը	Հաշվեկշռային արժեքը	Գնահատված արժեքը
2.1.	Ոչ ընթացիկ ակտիվներ , այդ թվում	4365,577 *	71879,31
2.1.1.	Հիմնական միջոցներ, այդ թվում՝	4355,577	71869,31
	շենքեր եւ շինություններ /1 հա/	3262.453	64486.8
	մեքենաներ եւ սարքավորումներ /101 հա/	844.391	5730.310
	արտ. սնս. գույք, գործիք եւ այլն /63 հա/	248.733	1652.20
2.1.2.	Անշարժ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	-	-
2.1.3.	Ոչ նյութական ակտիվներ	10	10
2.1.4.	Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	-	-
2.2.	Ընթացիկ ակտիվներ	6882	6882
2.3.	Ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-
2.4.	Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում	13780	13780
•	ՀՀ բյուջեի նկատմամբ	1470	1470
•	սոց. ապահովագրության գծով	799	799
•	անձնակազմին աշխատանքի վարձատրության գծով	3203	3203
•	առեւտրական կրեդիտ. պարտքեր	7810	7810
•	այլ կրեդիտորական պարտքեր	498	498

* Ներկայացված են հիմնական միջոցների սկզբնական արժեքները

2.5. Համաձայն ՀՀ կառավարության 08.02.2007թ.-ի N147-Ն որոշման, ընկերությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ունի շահութաբաժինների գծով 144.6 հազ. դրամի չափով պարտավորություն:

3. Մրցույթին մասնակցելու պայմաններ

3.1 Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն մասնավորեցման այն սուբյեկտները (կամ նրանց լիազոր ներկայացուցիչները), որոնք սահմանված կարգով վճարել են մրցույթի նախավճարը /տես 5.1 եւ 5.2 կետերը/ եւ 5.3 կետում նշված ժամկետում ներկայացրել են մրցութային առաջարկ, որը ներառում է հետեւյալ փաստաթղթերը՝

ա/ հայտ (ձեւը կարելի է ստանալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության 438 սենյակում,

բ/ մրցույթի հաղթողին որոշելու պայմանների վերաբերյալ գրավոր առաջարկ՝ (տես՝ 3.12 կետը),

գ/ մրցույթի նախավճարի կատարման իսկությունը հաստատող վճարային փաստաթղթերի պատճենները,

դ/ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մասնակիցների գրանցման եւ հիմնադիր փաստաթղթերի պատճենները,

ե/ լիազորագիր՝ մրցույթի մասնակից ընկերության /հաստատված տվյալ ընկերության կողմից/ կամ ֆիզիկական անձի /հաստատված նոտարական կարգով/ կողմից լիազորված անձի համար,

զ/ գործարար ծրագիր:

3.2. Մրցութային առաջարկը փակ ծրարով ներկայացվում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ՝ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը:

3.3 Մրցույթի մասնակիցների՝ մրցութային պայմաններին համապատասխան ներկայացրած առաջարկությունները պետք է արտահայտված լինեն թվային ցուցանիշներով եւ փոքր չլինեն ՀՀ կառավարության կողմից սահմանված նվազագույն արժեքներից, եթե դրանք սահմանված են (տես 3.12. կետը):

3.4 Մրցութային առաջարկները ներկայացվում են հայերեն լեզվով, իսկ օտար լեզուներով գրված փաստաթղթերը կարող են ուղեկցվել թարգմանություններով: Թարգմանությունների բացակայության դեպքում փաստաթղթերը կթարգմանվեն հանձնաժողովի կողմից:

3.5 Մրցույթին ներկայացվող փաստաթղթերը ներկայացվում են տպագիր կամ պարզ ընթեռնելի ձեռագրով:

3.6 Ծրարը պետք է հասցեագրված լինի մրցութային հանձնաժողովին՝ նշելով մասնավորեցվող օբյեկտի անվանումը:

3.7 Մրցութային առաջարկները կարող են ընդունվել նաեւ ֆաքսիմիլային կարգով: Ստացված փաստաթղթերը ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում դրվում են ծրարի մեջ եւ փակվում:

3.8 Ներկայացված ծրարները կնքվում եւ մուտագրվում են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում:

3.9 5.3. կետում նշված ժամկետի լրանալուց հետո ներկայացված առաջարկները չեն ընդունվի:

3.10 Դիմողները մինչեւ 5.3. կետում նշված ժամկետի լրանալը կարող են հանձնաժողովին գրավոր դիմում ներկայացնել՝ մրցույթին չմասնակցելու վերաբերյալ: Սահմանված ժամկետից ուշ ներկայացրած այդպիսի դիմումները ենթակա չեն:

3.11 Մրցույթի պահանջներին մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա ենթարկումից:

3.12 Մրցույթի պայմանները՝ մրցութային առաջարկի անհամապատասխանության դեպքում մրցութային առաջարկ ներկայացրած սուբյեկտին մրցույթի մասնակցի կարգավիճակ չի տրվում եւ մրցութային առաջարկը հանվում է հետագա ենթարկումից:

մասնավորեցվող բաժնետոմսերի համար առաջարկվող գինը /նվազագույն գինը՝ 16245 հազ.դրամ/,

ներդրումների չափը՝ տարիների կտրվածքով,

սոցիալական երաշխիքներ, այդ թվում աշխատատեղերի (ներկայացվում է մարդ/ամսով) եւ միջին աշխատավարձի վերաբերյալ:

3.13 Մրցույթի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի առաջարկը առավելագույն չափով է բավարարում մրցույթի պայմաններին:

4. Վճարումներ եւ պայմանագրի կնքում

4.1 Մրցույթի հաղթողը 10-օրյա ժամկետում ստանում է մրցույթի արդյունքների հաստատված արձանագրության օրինակը: Մրցույթի մյուս մասնակիցները կարող են ստանալ արձանագրության պատճենները:

4.2 Մրցույթի հաղթողը բաժնետոմսերի վաճառքի գումարը պետք է վճարի մրցույթի արձանագրությունը ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, ՀՀ արժույթով՝ բաժնետոմսերի վաճառքի գնի 70 տոկոսն ուղղելով ՀՀ պետական բյուջե, իսկ 30 տոկոսը՝ համապատասխան հաշվեմի ֆոնդային բյուջե՝ ըստ գույքի գտնվելու վայրի:

4.3 Որպես մրցույթի նախավճար վճարված գումարն ընդգրկվում է օբյեկտի վաճառքի գնի մեջ եւ մրցույթում չհաղթելու կամ մինչեւ 5.3 կետում նշված ժամկետի լրանալը մրցույթին մասնակցելուց հրաժարվելու դեպքում հետ է վերադարձվում:

4.4 Համաձայն ՀՀ կառավարության 08.02.07թ. N 147-Ն որոշման, մրցույթի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գնորդի հետ կնքի մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 376672 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարները ու տուրքերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու եւ պայմանագիրը չկնքելու դեպքում մրցույթի հաղթողի վճարած նախավճարի գումարը նրան հետ չի վերադարձվում, եւ մրցույթը հանվում է չկայացած:

4.6 Մրցույթով մասնավորեցման արդյունքում գնորդը հանդիսանում է նաեւ գնահատման պահից հետո առաջացած իրավունքների եւ պարտավորությունների իրավահաջորդը:

5. Մրցույթի անցկացման այլ պայմաններ

5.1	Մրցույթի նախավճարի չափը	812250 դրամ
5.2	Մրցույթի նախավճարի մուտագրման հաշվի հաշիվը	Թիվ1 տեղական գանձապետական բաժանմունք դրամային - 900013145017
5.3	Մրցութային առաջարկի ներկայացման վերջին ժամկետը	2007 թվականի ապրիլի 16-ը , ժամը՝ 13:00
5.4	Մրցութային առաջարկի ներկայացման վայրը	ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն, 438 սենյակ
5.5	Մրցույթի անցկացման օրը, ժամը եւ վայրը	2007 թվականի ապրիլի 20-ը , ժամը՝ 15:00 ք.Երեւան, Տիգրան Մեծ-4 ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն
5.6	Ֆաքսիմիլային կապ	*(3741) 27-65-94*
5.7	Կայքէջ	*http://www.privatization.am*

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 58-14-41

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 247-Ա որոշմամբ օտարվող ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության գույքը

ՀՀ	Գույքի անվանումը	Շուկայական մեթոդով գնահատված արժեքը 03.11.06թ դրությամբ /դրամ/	Զբաղեցրած հողամասը /հա/	08.05.07թ. աճուրդի		23.05.07թ. աճուրդի		07.06.07թ. աճուրդի		22.06.07թ. աճուրդի	
				մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Գեղարունիի մարզի Մարտունի քաղաքի Գեւորգյանի 13 հասցեում գտնվող պահեստանման տեղամասի 1167.9 քառ.մետր մակերեսով շենք-շինությունները	16353000	0.38	12265000	613250	9812000	490600	7849600	392480	6279680	313984

ՀՀ	Գույքի անվանումը	06.07.07թ. աճուրդի		23.07.07թ. աճուրդի		07.08.07թ. աճուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Գեղարունիի մարզի Մարտունի քաղաքի Գեւորգյանի 13 հասցեում գտնվող պահեստանման տեղամասի 1167.9 քառ.մետր մակերեսով շենք-շինությունները	5023744	251188	4018996	200950	3215197	160760

* Գույքը ծանոթագրված է օգտագործման իրավունքով երրորդ անձի կողմից:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 247-Ա որոշման՝

-աճուրդի հաղթողին է օտարվում գույքի զբաղեցրած եւ օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը՝ կադաստրային արժեքով.

-աճուրդի հաղթողը պարտավոր է՝

-ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը աճուրդի հաղթողի հետ աճուրդով օտարվող գույքի վաճառքի գինը եւ գույքի զբաղեցրած եւ օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի՝ կադաստրային արժեքը վճարվելուց հետո կնքում է առուվաճառքի պայմանագիր:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 11:30-ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնումները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար աճուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ/) ներկայացրել

-աճուրդի նախավճարի մուտքման անդորագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է «ՎՏԲ-Հայաստան Բանկ»-ՓԲԸ-ի թիվ 160006651014 դրամային հաշիվը:

-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-աճուրդի մասնակցության վճարի անդորագիրը, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավար: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց՝ 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (5 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդի մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց՝ 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Աճուրդում վաճառված լոտի գրացած գինը նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը: Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-րդ հարկ) հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00 ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածքներ:

Հասցե	Ազատ տարածք	(Մ)
ք. Երեւան, Արշակունյաց 2 ա	2-րդ հարկ	13.4

Անհրաժեշտության դեպքում զանգահարել 52-24-72 հեռախոսահամարով կամ դիմել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման եւ գնահատման գործակալություն» ՊՈԱԿ, Երեւան, Զաքիյան-10 հասցեով:

ՄՍՄՍՄՍՄՍՄՐԵՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ Է

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱԾՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱԾՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2007Թ. ՄԱՅԻՍԻ 8-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ, «ԱԾՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՀԱՍՑԵՆ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 14.04.05թ. թիվ 459-Ն որոշմամբ լուծարվող «Փրկարար» ՊՓԲԸ-ի (հասցեն՝ ք.Երեւան, Առարատյան փող. 62) հաշվեկշռում գտնվող գույքը՝

N	Գույքի անվանումը «Փրկարար» ՊՓԲԸ-ի հաշվեկշռում գտնվող գույքը՝	Քանակը	Գնահատված մնացորդը դրամ	Մեկնարկային գինը (ներառյալ ԱԱՀ-ն) դրամ
1	որոշես մեկ ամբողջական միավոր			83214180
	այդ թվում՝		43890000	
	շենքեր եւ շինություններ (3555.9 ք.մ.)	6	63560	
	կառուցվածքներ (պարիսպ) 100գ/մ	-	5260550	
	տրանսպորտային միջոցներ	4	2928270	
	մեքենասարքավորումներ	19	1635900	
	նյութեր	-	29435900	
	ընկերության անշարժ գույքի զբաղեցրած հողատարածքի տուկայական արժեքի եւ կադաստրային արժեքի տարբերությունը			

* Գնորդը պարտավոր է ածուրդի արձանագրությունն ստանալուց հետո, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատագրման հաշվին վճարել անշարժ գույքի զբաղեցրած հողամասի կադաստրային արժեքը՝ 9022100 դրամ (ընկերության անշարժ գույքի զբաղեցրած հողատարածքի՝ 1.9943 հա, հողատարածքի 1 ք.մ. կադաստրային արժեքը 4524 դրամ):

Ածուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնմունքը, որոնք մինչեւ սեպ. մայիսի 7-ը, ժամը 17:00 ածուրդային հանձնաժողովին են ներկայացրել.

-ածուրդի նախավճարի մուծման անդորագիր, որի չափն է 4160710 դրամ, մուտագրման հաշիվն է Հայաստանբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը: Նախավճարը կարող է վճարել նաեւ կանխիկ «Ածուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Ածուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում ածուրդային հանձնաժողովը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական:

Ածուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ ածուրդի մասնակից չհամարվող ցանկ անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Ածուրդի մասնակցի վկայականները տրամադրվում են «Ածուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ) մինչեւ սեպ. մայիսի 7-ը, ժամը 17:00, իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ ածուրդի սկսվելը:

Ածուրդին մասնակցել ցանկացողները վաճառվող լոտին (գույքին) կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ ածուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան ածուրդի սկսվելը ածուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի հիման վրա հանձնում է թերթիկ:

Ածուրդը վարում է ածուրդավարը:

Ածուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան ածուրդավարի մուրճի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը: Նվազագույնը հավելման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, ածուրդավարի մուրճի երրորդ հարվածից հետո, հաստատվում է ածուրդի հաղթած մասնակից: Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա ածուրդի հաղթած մասնակից է հռչակվում վիճակահանության արդյունքներով ընտրված մասնակիցը:

Ածուրդավարի կողմից ածուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճառման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է ածուրդի մասնակցելու իրավունքից, իսկ լոտի ածուրդը վերսկսվում է մեկնարկային գնից: Եթե ածուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է ածուրդի հաղթող եւ ստորագրում է ածուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Ածուրդում չհաղթած մասնակիցներին, գրավոր դիմումի առկայության դեպքում, մուծված նախավճարը վերադարձվում է ածուրդի ավարտից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընկերության տրանսպորտային միջոցները գտնվում են Ռուսաստանի Դաշնությունում: Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել Տեր-Տաճատյանին 093-36-88-75 հեռախոսահամարով:

Ածուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4ոդ հարկ/ հասցեով կամ զանգահարել ածուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կհրապարակվեն այն ծնով, ինչպես կատարվել է ածուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

«Ածուրդի կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱԾՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱԾՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 247-Ա որոշմամբ օտարվող ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինության գույքը

Հ/Հ	Գույքի անվանումը	Սկզբնական արժեքը /դրամ/	Հաշվեկշռային արժեքը /դրամ/	Շուկայական մեթոդով գնահատված արժեքը 12.06.06թ դրությամբ /դրամ/	08.05.07թ. ածուրդի		23.05.07թ. ածուրդի		07.06.07թ. ածուրդի		22.06.07թ. ածուրդի	
					մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Երեւան հաղթի Մոլդովական 54 հասցեում գտնվող շենքի առաջին հարկից 196.0 հա մեր մակերեսով ոչ բնակելի տարածք	239000	119500	25580000	19185000	959250	15348000	767400	12278400	613920	9822720	491136

Հ/Հ	Գույքի անվանումը	06.07.07թ. ածուրդի		23.07.07թ. ածուրդի		07.08.07թ. ածուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Երեւան հաղթի Մոլդովական 54 հասցեում գտնվող շենքի առաջին հարկից 196.0 հա մեր մակերեսով ոչ բնակելի տարածք	7858176	392909	6286541	314328	5029233	251462

* Գույքը ծանոթագրված է օգտագործման իրավունքով երրորդ անձի կողմից (23.06.05թ. թիվ 60/05 վարձակալական պայմանագիր):

Հաստատել ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 247-Ա որոշման՝

-ածուրդի հաղթողին է անցնում շենքի սպասարկման եւ պահպանման համար անհրաժեշտ (այդ թվում՝ նաեւ շենքի տակ գտնվող) հողամասի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը՝ գնորդի բաժինը՝ ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի նկատմամբ որոշելով գնորդին օտարվող գույքի մակերեսի հարաբերությամբ շենքի ամբողջ տարածքների մակերեսների գումարին՝ առաջհայված կոտորակով.

-ածուրդի հաղթողն ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող հողամասի իր բաժնի կադաստրային արժեքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է վճարի «Պետական սեփականություն հանդիսացող հողի վաճառից նուստեր» գանձապետական հաշվին.

-ածուրդի հաղթողը պարտավոր է՝

գույքի ձեռքբերման համար առաջարկված վճարումները կատարել ածուրդի արձանագրությունն ստանալու օրվանից 5 օրվա ընթացքում,

իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 386160դրամ ներառյալ ԱԱՀ, ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարները ու տուրքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով.

-ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետը ածուրդի հաղթող հետ ածուրդով օտարվող գույքի վաճառքի գինը՝ վճարելուց հետո կննում է առուվաճառքի պայմանագիր:

Ածուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով: Բոլոր ածուրդները սկսվում են ժամը 11:00-ին:

Ածուրդով՝ չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող ածուրդի ժամանակ նվազեցվում է վերջին ածուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով:

Ածուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնմունքը, որոնք յուրաքանչյուր ածուրդի համար ածուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 ածուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ) ներկայացրել.

-ածուրդի նախավճարի մուծման անդորագիր, որի չափն է՝ յուրաքանչյուր ածուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է Հայաստանբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը:

-ածուրդի մասնակցության վճարի անդորագիր, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Ածուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ ածուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Ածուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Ածուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Ածուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ ածուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ ածուրդի սկսվելը:

Ածուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ ածուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան ածուրդի սկսվելը ածուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է խաչ:

Ածուրդը վարում է ածուրդավարը:

Ածուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան ածուրդավարի մուրճի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, ածուրդավարի մուրճի երրորդ հարվածից հետո, հաստատվում է ածուրդի հաղթած մասնակից:

Ածուրդավարի կողմից ածուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (5 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճառման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է ածուրդի մասնակցելու իրավունքից: Եթե ածուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է ածուրդի հաղթող եւ ստորագրում է ածուրդի արդյունքների մասին արձանագրությունը: Ածուրդում վաճառված լոտի գրաված գինը նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափից չգերազանցելու դեպքում հաղթող մասնակիցը՝ ածուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը վճարում է լոտի ամբողջ գումարը: Ածուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Ածուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4ոդ հարկ/ հասցեով կամ զանգահարել ածուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱԾՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱԾՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 /4-ՐԴ ՀԱՐԿ/ ՀԱՍՑԵՈՒՄ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հաստատել ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1894-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հաշվեկշռում գտնվող օտարման ենթակա ավտոմեքենան

Հ/Հ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Սկզբնական արժեքը /դրամ/	Հաշվեկշռային արժեքը /դրամ/	Գնահատված արժեքը 11.10.06թ. դրությամբ /դրամ/	12.03.07թ. ածուրդի		27.03.07թ. ածուրդի		11.04.07թ. ածուրդի		26.04.07թ. ածուրդի	
						մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԳԱԶ-3102» (տ/հ 015 LL 10, թողարկման/ձեռքբերման տ/թ՝ 1998թ./2001թ.)	ք. Երեւան, Մելիք-Ադամյան 1	4605032	-	1382000	1037000	51850	829600	41480	663680	33184	530944	26548

Հ/Հ	Գույքի անվանումը	11.05.07թ. ածուրդի		29.05.07թ. ածուրդի		13.06.07թ. ածուրդի		28.06.07թ. ածուրդի		13.07.07թ. ածուրդի	
		մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/	մեկնարկային գին /դրամ/	նախավճար /դրամ/
1	Ավտոմեքենա «ԳԱԶ-3102» (տ/հ 015 LL 10, թողարկման/ձեռքբերման տ/թ՝ 1998թ./2001թ.)	424756	21238	339805	16991	271844	13593	217476	10874	173981	8700

Հաստատել ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 28-ի թիվ 1894-Ն որոշման՝ գնորդը պարտավոր է՝

-իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 48818 դրամ (ներառյալ ԱԱՀ), ինչպես նաեւ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարները ու տուրքը:

-վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ արժույթով՝ գույքի վաճառքի գինն ուղղելով «Պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից նուստեր» գանձապետական հաշվին:

Ածուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր ածուրդները սկսվում են ժամը 11:00-ին:

Ածուրդով՝ չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջող ածուրդի ժամանակ նվազեցվում է վերջին ածուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով:

Ածուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ հանձնմունքները, որոնք յուրաքանչյուր ածուրդի համար ածուրդի նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00 ածուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք. Երեւան, Դ.Անհաղթի 23 /4-ոդ հարկ) ներկայացրել.

-ածուրդի նախավճարի մուծման անդորագիր, որի չափն է՝ յուրաքանչյուր ածուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտագրման հաշիվն է Հայաստանբանկի թիվ 160006651014 դրամային հաշիվը:

-ածուրդի մասնակցության վճարի անդորագիր, որի չափն է 10000 դրամ (վճարվում է «Ածուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ ածուրդի արդյունքներից չի վերադարձվում.

-անձնագիր, իսկ իրավաբանական անձինք՝ հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

Ածուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Ածուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է:

Ածուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ ածուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են մինչեւ ածուրդի սկսվելը:

Ածուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ ածուրդի բացմանը նախորդող օրն ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին, ժամը 9:00-ից մինչեւ 17:00 (բացառությամբ ժամը 13:00-ից մինչեւ 14:00):

Նախքան ածուրդի սկսվելը ածուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է խաչ:

Ածուրդը վարում է ածուրդավարը:

Ածուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Տանկացած մասնակից իրավունք ունի, նախքան ածուրդավարի մուրճի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կողմից նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (հայտի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, ածուրդավարի մուրճի երրորդ հարվածից հետո, հաստատվում է ածուրդի հաղթած մասնակից:

Ածուրդավարի կողմից ածուրդի հաղթող հռչակված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճառման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում՝ չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է ածուրդի մասնակցելու իրավունքից: Եթե ածուրդում հաղթող հռչակված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 ոռոճի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է ածուրդի հաղթող եւ ստորագրում է ածուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Ածուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

Վաճառվող լոտին ծանոթանալու համար զանգահարել՝ հեռախոս հեռախոսահամարներով՝ 59-51-62, Ա.Հերիցազանին:

Ածուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան, Դ.Անհաղթի 23 /4ոդ հարկ/ հասցեով կամ զանգահարել ածուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 24-67-25, ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

ԱԾՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ստածողը

Ճանապարհ...

Արաբ բանաստեղծ Ջբրան Խալիլ Ջբրանի «Ջորի հավերժահարները» եւ «Ընբոս հոգիներ» գրքերը Բեյրութի կենտրոնական հրապարակում խարույկի մատնվեցին՝ իր պատկանած համայնքային եկեղեցական ավագանու եւ երկրի իշխանությունների հրամանով: Հայրենիից հեռու՝ ամերիկյան մայրցամաքում արաբ բանաստեղծի գրական մուտքը ընբոս տրամադրություններով բնորոշվեց՝ կյանքի հանդեպ վերաբերմունքի բացորոշ շիտակություն, հակոտնյա կամք՝ ընդդեմ հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունների: Այդ նույն եկեղեցին էր, որ նզովեց բանաստեղծին ու բանադրեց նրան՝ դատապարտելով վտարանդիության: Եվ ընդամենը երկու տասնամյակ չէր անցել այդ հաշվեհարդարից, երբ օտարության մեջ իր մահկանացուն կնքած բանաստեղծը նույն քաղաքում արժանացավ համաժողովրդական պաշտամունքի եւ խորագույն ակնածանքի: Ջբրան Խալիլ Ջբրանը մահացավ (1931, ապրիլի 10) Նյու Յորքում. Բոստոնում կատարվեց հուղարկավորության արարողություն, զմռսված դին Բեյրութ տեղափոխվեց օգոստոսին, որտեղ նրա թաղումը վերածվեց համազգային սգի արտահայտության՝ մասնակցությամբ բնակչության բոլոր շերտերի՝ թե՛ իշխանական, թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական: Բանաստեղծի վերջնական վերադարձը հայրենիք վերջինիս բերեց նոր փառք ու պատիվ: Արաբական աշխարհում այսօր ամենահռչակավոր ու գնահատված պոետը ստեղծագործական ողջ ճանապարհն ու բանաստեղծական կայացումը ունեցավ իր երկրից դուրս, օտար մշակութային շփումներում: Ու թերեւս իրեն վիճակված կյանքի այս ձեւը նախասահմանված էր, որովհետեւ իր մտածողական հորիզոնները միեւնույն է՝ դուրս էին մղելու նրան կրոնական, դավանաբանական կամ ազգային որեւէ պայմանականությունից: Դրա ամենացայտուն արտահայտությունն իր գլուխգործոցն է՝ «Մարգարեն» պոեմը՝ գրված անգլերենով, արաբերենի վերածված հեղինակի գրչով:

Ջբրան Խալիլ Ջբրանը ծնվել է 1883 թ.-ին Հյուսիսային Լիբանանի Ուադի Կադիշա (Սրբազան ձոր) կոչված բնակավայրի Բշարիի գյուղում, հողագործի ընտանիքում: Դեռ փոքր էր, երբ մայրը երեխաների հետ մեկնում է Բոստոն: Ինքը մնում է ծննդավայրում, մի քանի տարի հետո գնում է Բեյրութ, ընդունվում տեղի Ալ-Հիքմա՝ Լիբանանում ժամանակին լավագույն համարվող երկրորդական մակարդակով վարժարան: Խորանում է արաբական հին եւ նոր գրականության ուսումնասիրությունների մեջ, հետեւում գրական շարժումներին: Պատանեկան սիրային առաջին ապրումը առաջին խոր հիասթափությունն է ծնում՝ ճակատագրորեն բախտորոշ: Սիրո կորուստը եկեղեցական բարձրաստիճան սպասավորի «միջամտությամբ» հայրենիքից հեռանալու առիթ է դառնում: Հետագայում կենսագրական այս դիպվածը իր «Կոտրած թեւեր» վիպակի գեղարվեստական հենքն էր կազմելու: Ջբրանը մեկնում է Բոստոն, որտեղ իր հարազատներն էին ապրում, ճանապարհում նոր միջավայրին, 1902-ին գալիս է Բեյրութ, սակայն Բոստոնում բնակվող քրոջ մահը նրան կրկին ետ է վերադարձնում: Շատ չանցած կորցնում է եղբորը, ապա՝ մորը:

Աղետի աշխարհ Ջբրանը փորձում է մտնել նկարչությամբ, նրա յուղաներկ ու գծանկար աշխատանքների ցուցադրությունը որոշակի ուշադրության է արժանանում: 1905-ին լույս է տեսնում արաբերենով պատմվածքների անդրանիկ ժողովածուն՝ «Թվաբություն», որին հաջորդում են «Ջորի հավերժահարները» եւ «Ընբոս հոգիներ»-ը (1908 թ.): Վերջին երկու ժողովածուները լինելով ճշմարտություն որոնողի ընդվզումի արտահայտություններ, դիմակահիր բարեպաշտների աստելությունն են հարուցում, որի համար շատ թանկ է վճարում գրողը. նրան զրկում են հայրենիքի զավակը լինելու իրավունքից:

Հոգեկան դժվարին վիճակներում նյութապես օժանդակություն ստանալով մինչեւ կյանքի վերջ իրեն հավատարիմ բարեկամ Մեյրի Հասքելից, նա մեկնում է Փարիզ՝ հետեւում Ժյուլիենի ակադեմիայի եւ Գեղեցիկ արվեստների վարժարանի գեղանկարչական դասընթացներին: Ֆրանսիական արվեստային միջավայրը նոր հորիզոններ է բացում, հարստացնում նրա գեղագիտական ընկալումները, եվրոպական գրական հոսանքների հետ ծանոթությունները բարեփոխիչ նշանակություն են ունենում ստեղծագործական ընթացքի վրա, մասնավորապես ազդվում է անգլիացի Ուիլյամ Բլեյքի բանաստեղծական խորհրդապաշտությունից եւ գերմանացի փիլիսոփա Ֆրիդրիխ Նիցշեի աշխարհայացքից:

Փարիզից Նյու Յորք վերադարձի ճանապարհին Լոնդոնում Ջբրանը, Էմին Ռահանին եւ Յուսեֆ էլ Հուայեքը՝ երեքն էլ՝ լիբանանցի գրողներ, հղանում են արաբական մշակույթի վերածննդի մի ծրագիր, որը գործնական արտահայտություն չունենալով, սակայն, գաղափարական առումով բարեբար ազդեցություններ է ունենում արաբ մտավորականության վրա: Վերադառնալով Նյու Յորք՝ արվեստանոցի վերածած տան վերնահարկը, որին «ճգնարան» էր կոչել, վերածում է տեղի արաբ մտավորականության հավաքատեղի: Իր ջանքերով եւ նախագահությամբ հիմնում է արաբ տարագիր գրողների միությունը: Անգլերենով գրված իր առաջին գործը «Խեթն»-ն էր, որից հետո լույս են տեսնում «Թափորը»՝ սեփական նկարազարդումներով եւ «Փոթորիկներ» պատմվածքների ժողովածուն եւ անգլերենով 2-րդ գիրքը՝ «Ռահվիրան»: 1923 թ. անգլերենով գրված «Մարգարեն» պոեմը ունենում է աննախադեպ հաջողություն՝ շատ կարճ ընթացքում երեք տպագրություն եւ մի շարք լեզուներով թարգմանություններ, որ հեղինակին բերում է համբավ ու մեծ համակրանք. այն հաստատաբար ընթերցվում է ամերիկյան եկեղեցիներում: Բանաստեղծ Վահե-Վահյանը գրում է. «Անցնող ամեն տարին կ'ածեցնէ հմայքը գիրքին եւ անոր հեղինակին կը հագցնէ նոյնիսկ պարեգօտը մարգարէի: Ջբրականութիւնը, կարգ մը շրջանակներու մէջ, կ'առնէ կերպարանքը նոր աղանդի մը»: Հաջորդաբար հրատարակվում են «Ավազ եւ փրփուր» առակների ժողովածուն, ապա «Հիսուս, Մարդու որդի» եւ վերջին գիրքը՝ «Երկրային աստվածներ»-ը լույս է տեսնում բանաստեղծի մահից երկու շաբաթ առաջ: Ավելի ուշ՝ «Թափառականը» եւ «Մարգարեի պարտեզը», որի վրա բանաստեղծն աշխատում էր մինչեւ կյանքի վերջին վայրկյանները:

▼▼▼

Արաբական հին եւ նոր շրջանների հարուստ ու բազմաշերտ գրականության՝ հայերեն լեզվամտածողական դաշտ շատ սակավ ներթափանցումը ունի իր օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառները՝ հիմնականում պրոֆեսիոնալ թարգմանիչների բացակայությամբ: Մինչդեռ միանգամայն այլ է իրականությունը մյուս կողմում՝ հայ գրականությունը որոշ չափով ներկայացված է արաբերենով: Միայն հալեպցի գրող Նզար Խալիլին կատարել է հայ հեղինակների բազմաթիվ թարգմանություններ՝ Օշական, Պարոնյան, Շիրազ, Սեւակ, Թեքեյան եւ այլք: Սա պայմանավորված է արաբական աշխարհում ինչպես գրի հանդեպ եղած բացառիկ վերաբերմունքով, նաեւ սեփական մշակույթը նոր մտածողությամբ, գեղարվեստական նոր շերտերով հարստացնելու պահանջով:

Ջբրան Խալիլ Ջբրանի «Մարգարէն» պոեմի հայերեն թարգմանությունը անգլերենից կատարել է բանաստեղծ Վահե-Վահյանը: Գիրքը տպագրվել է Բեյրութում, 1984 թ.՝ Պոլ Կիրակոսյանի ձեւավորումով եւ հեղինակի նկարչական գործերի սեւ-սպիտակ ինչպես նաեւ գունագեղ ռեպրոդուկցիաներով (որոնցից երկու նմուշ ներկայացված է հրապարակման մեջ):

Մինչ այդ «Մարգարէի» արեւմտահայերեն արված առաջին թարգմանությունը պատկանում է Համաստեղի գրչին, որն արձակ շարադրանք է: Տեղեկությունները Ջբրանի կենսագրության եւ ստեղծագործության մասին քաղված են Վահե-Վահյանի թարգմանության առաջաբանից: Մեր այս անդրադարձը պայմանավորված է Ջբրան Խալիլ Ջբրանի հայասանյան առաջին հրատարակությամբ: «Մարգարեն» պոեմը օրերս լույս կընծայի «Տիգրան Մեծ» տպագրատունը (արեւմտահայերենից արեւելահայերենի վերածումը՝ Հովիկ Յորդեքյանի, Լիբանանի դեսպանատան նախաձեռնությամբ եւ Վիվասելի աջակցությամբ):

Անցած տարի Երեւանի Կիրովի այգու Բեյրութի փողոցի դիմահայաց կողմում տեղադրվեց արաբ բանաստեղծի կիսանդրին (քանդակագործ՝ Լեւոն Թորոսյան), մինչդեռ հեղինակի ստեղծագործությունները տակավին անհայտ են մեզ: Արաբական գրականության լավագույն նմուշներից մեկի հայատանյան այս հրատարակության անհրաժեշտությունը վաղուց հասունացած էր արդեն:

«Մարգարէն»

Ջբրան Խալիլ Ջբրանը երկլեզվյա ստեղծագործող է, սա թերեւ իր վտարանդի կարգավիճակի լեզվամտածողության արտահայտությունն է: Նրա տաղանդը հավասարապես դրսեւորվել է գրական երկու տեսակներում՝ արձակ եւ չափածո: Վերջինիս շարքում առանձնահատուկ ուշադրության է արժանացել «Մարգարեն» պոեմը՝ նախեւառաջ արեւմտյան աշխարհում, քրիստոնեական մշակույթ կրող ժողովուրդների մեջ: Որն է ստեղծագործության գաղտնիքը: Հոգեկերտվածքով ու մտածողությամբ իսլամական մշակույթից հեռու ընթերցողին անգամ, ստեղծագործությունը գրավում է իր ընդհանրականությամբ եւ մարդասիրական փիլիսոփայությամբ՝ գոյաբանական հավերժական հարցերի խորը ներթափանցումների, մարդու երկրային գոյության, նրա կյանքի եւ դրա ճանապարհին զգայական ու նյութական աշխարհի բազում իրողություն-գայթակղություններից իմաստնացածի հարուստ փորձառությամբ: Անհատական հոգեւոր այդ փորձառությունը բանաստեղծը փոխանցում է գրականության մեջ բավականին տարածում գտած գեղարվեստական հնարանքի՝ սյուժետիկ պարզ կառույցի միջոցով՝ հարց ու պատասխանի ձեւով:

Ծննդավայրից դուրս օտար երկրում էլմոաթաֆան իր համար բնակավայր է ընտրում անտառապատ Օրֆալիզը՝ մեկուսի ու առանձնացած, մարդկային շփումներից հեռու: Այդ հեռավորությունը լցնում է ներքին մտասեւեռումներով, երկարաձգեւ խոկումներով, ինքնազննումներով, որ նրան մոտեցնում են ինքնաճանաչողության հոգեւոր վիճակներին: Մարդմտացության ու տիեզերաճանաչության ճանապարհը սկսվում է ինքնաճանաչողությունից: Իր ներաշխարհային լայնատարածություններում հասունացող Մարգարեն բարձանում է հոգեւոր-իմացական աշխարհի վերնաշերտեր, մոտենում Բացարձակ ոգու համատիեզերական արարչագործության գաղափարին՝ շնչավոր եւ անշունչ աշխարհը ընկալելով իբրեւ այդ մեծ ոգու տարադրսեւորումներ ու համաստեղություններ:

Բնութենաբաշխական ու հոգու ազատության այս սլացքները, խորհուրդներն ու բարդախոսությունները՝ հին աշխարհի հոգեւոր տեսքերի եւ աստվածաշնչյան մարգարեների իմաստային «ընչառությամբ», հուսահատ տագնապների մեջ գտնվող հոգիների վրա իջնում են մխիթարանքի ու սփոփանքի բուժիչ ներգործությամբ: Իր՝ քաղաքից հեռանալու պահին, Օրֆալիզի բնակիչները շրջապատում են նրան, ասելով, թե «Միջօրեի լույս մը եղար դուն մեր մթնշաղին մէջ» ու խնդրում պատասխաններ մարդկային բնության ու կեցության 26 հարցերի՝ սիրո, ամուսնության, զավակի, աշխատանքի, ուրախության ու տրտմության, օրենքի, ոճրի ու պատժի, վշտի, ինքնաճանաչման, ժամանակի, չար ու բարու, աղոթքի, հաճույքի, գեղեցկության, կրոնի, մահվան ու հրաժեշտի մասին: Մարգարեացող բանաստեղծը բացում է կյանքի բազում գաղտնիքներ, իրեն հասու դարձած տիեզերական խորհուրդներ:

Հրաշալի է պոեմի գեղարվեստական ավարտը՝ միստիկ խորհրդապաշտությամբ: Հրաժարակի տաճարի մոտ միայնակ անհատը՝ մարգարեն, շուրջը հանրությունը՝ մոլորված իբրեւ հոտ: Ծովը՝ կյանքը, մարդկային գործունեությունների, ցանկությունների ու կրքերի դաշտ իբրեւ՝ ուրախությունների ու դժբախտությունների անխուսափելի շրջապտույտներով: Եվ նավը-կյանքի խորհուրդը վերծանող մարգարեի հեռացումով:

Արտաքին-զգայական, տեսանելի աշխարհից երեւույթների ու իրերի խորը թափանցող տեսանող-բանաստեղծի խոսքերը հավերժական այն ճշմարտությունների արձագանքներն են, որոնց ակունքները մարդկության հեռավոր անցյալում ստեղծված հոգեւոր մեծ ուսմունքների մեջ են՝ հնդկական սուրբ գրքերից՝ Վեդաներից մինչեւ Աստվածաշունչ մատյան...

Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ Ջբրան Խալիլ Ջբրանի «Մարգարէն» պոեմից՝ Վահե-Վահյանի թարգմանությամբ:

Հոգու ընբոստությունից մինչեւ մարգարեացում

Ջբրան Խալիլ Ջբրան

Էլմուսթաֆան, ընտրեալն ու սիրելին,
որ արշալոյսն էր իր ծագած օրին,
սպասեր էր հոն, Օրֆալիզի մէջ
տասներկու տարի,
որ վերադառնար իր նաւն ու տանէր
զինք ծնած կղզին:
Տասներկրորդ տարին, օրը եօթներորդ
ճիշդ Սեպտեմբերի, հունձի ամսին,
ելաւ քաղաքին պարիսպներէն դուրս,
բլուրին վրայ,
նայուածքն իր ուղղեց ծովուն ու տեսաւ
մշուշին մէջէն գալուստն իր նաւին:
Եւ այն ժամանակ, դուռերը սիրտին
բացուեցան հոն լայն,
եւ հրճուանքն իր թեւածեց դէպի
բացերը ծովուն:
Աչքերը փակեց եւ իր հոգիին
լռութեանը մէջ սկսաւ աղօթել...:
Բայց երբոր կիջնէր ինք բլուրն ի վար,
թախիծ մը եկաւ պաշարեց հոգին,
ու մտածեց ինք սիրտին խորերէն.
«Ինչպէ՞ս պիտի ես կարենամ մեկնիլ
ասկէ անխռով, առանց կսկիծի:
Ո՛չ, այս քաղաքն պիտի չկրնամ
բաժնուիլ երբեք,
առանց կրելու վէրք մը հոգւոյս մէջ:
«Երկար տեւեցին երկունքի օրերս
իր պատերէն ներս,
ու երկար եղան գիշերներն այստեղ
իմ առանձնութեանս:
Եւ ո՞վ կարենար պիտի բաժնուիլ
իր տառապանքէն ու մենութենէն՝
առանց մորմոքի:
«Հոգիի անթիւ մասնիկներ եմ ես
ցրուած այստեղի փողոցներուն մէջ.
եւ անհամար են իմ կարօտներուս
զաւակներն, որոնք այս բլուրներուն
միջեւ կը շրջին մերկ մարմիններով,
ու չեմ կրնար ես զատուիլ իրենցմէ՝
առանց ծանրաձանր բեռի, կսկիծի:

...«Կը խնդրենք սակայն, որ խօսիս մեզի
մեկնումէդ առաջ
եւ հաղորդակից դարձնես դուն մեզ
քու ճշմարտութեանդ:
«Կը փոխանցենք զայն մեր զաւակներուն,
եւ անոնք՝ իրենց, ու չի կորսուիր ան:
«Առանձնութեանդ մէջ, պահակն ես եղած
մեր ցերեկներուն,
ու պահերուդ մէջ աննինջ հսկումի՝
մտիկ ես ըրած մեր քուն ժամերու
լացին ու խինդին:
«Հիմա, ուրեմն, բացատրէ՞ մեզի
էութիւնը մեր,
խօսէ՞ ծնունդի ու մահուան միջեւ
ինկնող այն բոլոր բաներէն, որոնք
յայտնուած են քեզի:»

Պատասխանեց ինք՝ ըսելով այսպէս.
«Ով բնակիչներ դուք Օրֆալիզի,
ինչ բանի մասին կրնամ խօսիլ ես՝
բացի անոնցմէ որ այս ոգիին
կը խլրտին ձեր հոգիներուն մէջ:»

Տես էջ 5 ➤

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

ՀԱՅՈՐԻՏՈՒՄ

«Մի լեզուն չափազանց տկար է այն հոգու համար»

Մեր զուցակիցն է միջին սերնդի տաղանդավոր կոմպոզիտոր ՎԱՀԵ ՇԱՐԱՖՅԱՆԸ: Վ. Շարաֆյանը ծնվել է 1966 թ-ին Երեւանում: Կոմպոզիտորական կրթությունը ստացել է Երեւանի պետ. կոնսերվատորիայում Էդվարդ Միրզոյանի դեկավարությամբ: Հեղինակ է բազմաթիվ կամերային, սիմֆոնիկ, վոկալ եւ խմբերգային ստեղծագործությունների՝ այդ թվում կոնցերտների (ջութակի, թավջութակի, սաքսոֆոնի, լարային նվագախմբի), տրիոների, Դաշնամուրային կվինտետի, ժողովրդական գործիքների համար երկերի: Շարաֆյանի երաժշտությունը մեծ հաջողությամբ հնչել եւ հնչում է աշխարհի տասնյակ երկրներում լավագույն կատարողների կողմից՝ մշտապես լայն լսարան գրավելով: Ներկայումս ԵՊԿ-ի կոմպոզիցիայի ամբիոնի դասախոս է: Նրա հետ զույգը վարում է երիտասարդ կոմպոզիտոր, դաշնակահար, արվեստագիտության թեկնածու Արքուր Ավանեսովը: Նա արվեստի ինստիտուտի գիտաշխատող է, պետ. կոնսերվատորիայի կոմպոզիցիայի ամբիոնի ասիստենտ: Որպես ժամանակակից եւ կամերային երաժշտության կատարող ելույթ է ունեցել Հայաստանում, Վրաստանում, ՌԴ-ում, Շվեյցարիայում, Ավստրիայում, Իտալիայում եւ Իրանում: Արժանացել է մի շարք մրցանակների՝ որպես կոմպոզիտոր եւ կատարող: Հիմնական գիտական հետազոտությունները նվիրված են ձեն բուդդիզմի փիլիսոփայությանը եւ պոստմոդեռնիզմի գեղագիտությանը երաժշտության մեջ:

- Ոչ միայն ճաշակական: Այնտեղ տարբեր ազգերի գործիքներ կան, ինչպես նաեւ դասական կազմ: Դա հոլանդական «Ասլաս» անսամբլի հրաշալի պատվերն էր: Նրանք ինձ տարբեր գործիքներ առաջարկեցին՝ ըստ ընտրության, եւ ես ընտրեցի այն, ինչ առավել հետաքրքրական համարեցի՝ մեկ կատարող, որը նվագում է միանգամից դուդուկ եւ զուռնա, այնուհետեւ՝ արաբական քանոն, որը շատ է տարբերվում Հայաստանում օգտագործվող այսպես ասած «ռուսականացված» քանոնից ...

- Գուսլիի նման...

- Այո՛: Արաբական քանոնը ավելի ավանդույթային է, եւ այդ առումով ինձ ավելի է հետաքրքրում: Նույնը կարող եմ ասել նաեւ դուդուկի մասին: Այսինքն, այդ գործիքն ինձ համար լոկ տեմբր չէ, այլ ինչ-որ առումով՝ իր ստեղծողի հոգու ձիչ... Վերադառնալով գործիքների թվարկմանը՝ ավելացնեմ ճաշակական շոն, չինական շենգը...

- Շոն շրթնային երգեհոնի՞կ է:

- Երկուսն էլ շրթնային երգեհոնիկներ են՝ բավականին մեծ չափի: Կային նաեւ եվրոպական գործիքներ՝ մեծ թմբուկ, տավիղ, ֆլեյտա, կլարնետ, ջութակ, թավջութակ, ալտ, կոնտրաբաս:

Իմ ստեղծագործություններում դուդուկի օգտագործումը այդ գործիքին հատուկ վերաբերմունքի նշան է: Դրա կարիքը զգացվում է այսօր, երբ շատ բան է ոչնչացման եզրին: Մնացել են միայն ինչ-որ փոքրիկ նմուշներ, որոնք կարծես անցյալից խոսում են հետդ: Դու էլ կարող ես հետները խոսել այսօրվա լեզվով՝ փոխանցելով եւ սանձելով ինչ-որ տեղեկություն: Ընդ որում, ինձ մոտ մշակվել է դրանց մոտեցման հատուկ մի գեղագիտություն՝ թողնել ամեն ինչ առավելագույնս իր ենթատեքստում՝ միաժամանակ խոսելով իմ սեփական լեզվով: Այսինքն, լինել բազմալեզու: Իմ կարծիքով, այդ գեղագիտությունը շատ կենսունակ է, քանի որ աշխարհը բաղկացած է տարբեր երեւույթների ամբողջությունից: Շատ կարեւոր հարց է, թե որքանով մենք կարող ենք ընդհանուր լեզու գտնել, եւ որքանով է պետք ընդհարվել:

Նույն բանն է նաեւ յուրաքանչյուր կոմպոզիտորի համար հիմնական հարցը՝ կոնսոնանս եւ դիսոնանս: Ես փորձում եմ այդ երկուսի նոր զգացողություն գտնել: Ուզում եմ եւս մեկ անգամ ընդգծել, որ դա արհեստական երեւույթ չէ:

- Դուք ինչ-որ չափով արդեն պատասխանեցիք իմ նախապատրաստած մի քանի հարցին: Դրանցից մեկը կարելի էր այսպես սահմանել. Դուք զուգակցում եք հայկական ժողովրդական գործիքները այլ ազգերի գործիքների հետ: Այսպիսի զուգակցման մեջ ի՞նչ են Ձեզ համար հայկական գործիքները, ինչպե՞ս են դրանք մեկնաբանվում՝ լոկ որպես ազգային պատկանելության նշան, թե ավելին:

- Դուդուկը հայկական ժողովրդական գործիք է, թեպետ տարբեր ազգեր ունեն դուդուկի տիպի գործիքներ, միայն հայկական դուդուկն է, որ բոլորի համար հարազատ եւ հմայիչ է հնչում: Դրա հնչողությունը հայ ազգի մենալիտետի արտահայտումներից է: Կարծես թե, ես էլ եմ պատկանում այդ ժողովրդին, եւ այդ մենալիտետը խորթ չէ ինձ...

- Թողնե՞մ «կարծես թե»-ն:

- Ըստ ձեր հայեցողության: Այդ մասին կարելի է երկար խոսել՝ թե ո՞րն է ազգային պատկանելությունը՝ այսօրվա՞ իմաստով, թե ինչ-որ այլ ընթացքում: Դուք զուգակցում եք հայկական ժողովրդական գործիքները այլ ազգերի գործիքների հետ: Այսպիսի զուգակցման մեջ ի՞նչ են Ձեզ համար հայկական գործիքները, ինչպե՞ս են դրանք մեկնաբանվում՝ լոկ որպես ազգային պատկանելության նշա՞ն, թե ավելին:

- Դուդուկը հայկական ժողովրդական գործիք է, թեպետ տարբեր ազգեր ունեն դուդուկի տիպի գործիքներ, միայն հայկական դուդուկն է, որ բոլորի համար հարազատ եւ հմայիչ է հնչում: Դրա հնչողությունը հայ ազգի մենալիտետի արտահայտումներից է: Կարծես թե, ես էլ եմ պատկանում այդ ժողովրդին, եւ այդ մենալիտետը խորթ չէ ինձ...

- Թողնե՞մ «կարծես թե»-ն:

- Ըստ ձեր հայեցողության: Այդ մասին կարելի է երկար խոսել՝ թե ո՞րն է ազգային պատկանելությունը՝ այսօրվա՞ իմաստով, թե ինչ-որ



Վահե Շարաֆյան

բար, այսպիսի բան կա: Ինձ հոգեհարազատ են ոչ թե կոմպոզիտորները, այլ նրանց առանձին ստեղծագործությունները: Ինձ համար կան բացարձակ մեծություններ, օրինակ Բախը, Բրամսը: Իսկ ժամանակակից երաժշտության մեջ կան ստեղծագործություններ, որոնք ինձ տալիս են ինչ-որ բան՝ երբեմն թերեւս այնքան էլ հրապուրիչ չլինելով: Դրանք խոսում են կարեւորի մասին եւ անկասկած արձագանք գտնում իմ ներսում: Մոտեցումը կարող է ինձ հարազատ չլինել, սակայն ինձ հուզում է հետաքրքրությունների ընդհանրությունը:

- Գաղտնիք չէ, որ այսօր գոյություն ունի երաժշտական ճաշակների խիստ շերտավորում: Ամեն տեսակի երաժշտության համար կա առանձին լսարան: Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր երաժշտությունը կատարվեր մի լսարանի առջեւ, որը պատրաստ չէ կամ հրաժարվում է ընկալել այն: Դուք գրում եք ինքներդ Ձե՞զ, թե լսարանի համար: Որքանո՞վ է ունկնդրի վերաբերմունքը սատարում ստեղծագործական գործընթացին:

- Ես արդեն ասացի, որ երաժշտությունը գրելիս փորձում եմ ինձ նաեւ ունկնդրի դերում պատկերացնել: Լսարանն իրոք որ միշտ տարբեր է լինում: Ամենաքիչը ես կատարվում եմ հենց այստեղ, Հայաստանում՝ միգուցե լսարանի անպատրաստ լինելու պատճառով, չնայած իմ գործիքով երաժշտությունս շատ մեղեդային է: Կան նաեւ մի շարք այլ պատճառներ: Ինչ վերաբերում է եվրոպական կամ ամերիկյան լսարանին, ուրախությամբ կարող եմ փաստել, որ մեծ հարգանք ունեմ: Չեմ կարծում, որ այդ լսարանն ինձ ընկալում է որպես «էկզոտիկ» կոմպոզիտորի: Մանավանդ որ այն, ինչ անում եմ, ուրիշներն էլ են փորձում անել: Ոչ միայն Հայաստանն ունի ժողովրդական գործիքներ եւ կոմպոզիտորներ, ովքեր օգտագործում են դրանք: Մյուս կողմից, արտասահմանում ես ունեմ շփման լայն շրջանակ, մարդիկ, ովքեր հարազատ են ինձ: Կարծում եմ, որ մտածող մարդիկ շատ կան: Արտասահմանում ես ինձ հասկացված եմ զգում: Թեպետ՝ այստեղ էլ: Պարզապես այստեղ իրավիճակը չի ոգեշնչում: Տարօրինակ բաներ են կատարվում... Գնում ենք սխալ ուղղությամբ:

Ես ունեմ հատուկ մոտեցում: Երաժշտությունը գրելիս՝ ինձ միաժամանակ հեղինակ, կատարող եւ ունկնդիր եմ համարում: Առանց դրա անհնար է, որ երաժշտությունը կայանա: Որովհետեւ, եթե ես կատարող եմ, ապա նվագում եմ այն, որի միջոցով կարող եմ ինքնարտահայտվել: Եթե երաժշտությունն արտահայտիչ չէ, ես չեմ նվագի այն: Ուստի գրում եմ այնպիսի երաժշտություն, որ ինքս ցանկանամ կատարել եւ նույն ժամանակ նաեւ ունկնդրել այն: Իմ կարծիքով, եթե մի հեղինակ հասել է այդ վիճակին, ապա նա կայացել է: Կարծում եմ, դա ինձ էլ է վերաբերվում, որովհետեւ երբեմն ես ունենում եմ ինքս իմ գրածի նկատմամբ հիացումի պահեր: Մի գուցե դա անհրաժեշտ է ցանկացած հեղինակի համար, այլապես նա չէր ստեղծագործի: Կարող եմ նույնիսկ ասել, որ երբեմն գրում եմ երաժշտություն՝ միաժամանակ պատկերացնելով ծափահարությունները:

- Իսկ կա՞ն այնպիսի կոմպոզիտորներ, ովքեր հատկապես հոգեհարազատ են Ձեզ, կամ որոնց շարունակողն եք: Կամ էլ՝ ովքեր Ձեր հետեւորդներ են:

- Հետեւորդների մասին տեղեկություն չունեմ: Ես ինքս երաժշտության մեջ շատ կողմնորոշիչներ ունեմ: Պարզապես չեմ հետեւում, ընկնում եմ ինչ-որ մեկի ազդեցության տակ, թե ոչ. հավանաբար, այսպիսի բան կա: Ինձ հոգեհարազատ են ոչ թե կոմպոզիտորները, այլ նրանց առանձին ստեղծագործությունները: Ինձ համար կան բացարձակ մեծություններ, օրինակ Բախը, Բրամսը: Իսկ ժամանակակից երաժշտության մեջ կան ստեղծագործություններ, որոնք ինձ տալիս են ինչ-որ բան՝ երբեմն թերեւս այնքան էլ հրապուրիչ չլինելով: Դրանք խոսում են կարեւորի մասին եւ անկասկած արձագանք գտնում իմ ներսում: Մոտեցումը կարող է ինձ հարազատ չլինել, սակայն ինձ հուզում է հետաքրքրությունների ընդհանրությունը:

- Ինչ է փոխվում ձեր ստեղծագործության մեջ ժամանակի ընթացքում: Թե՞ ամեն ինչ մնում է նույն մակարդակով:

- Ես շատ եմ փոխվում: Միշտ տարբեր տեսակի երաժշտություն եմ գրում: Իհարկե, որպես հեղինակ մնում եմ ինձ հավատարիմ, ինձ կարելի է ճանաչել իմ ամեն մի ստեղծագործությամբ: Կան գործեր, որոնց սիրում եմ հատկապես, պարծենում դրանցով: Կան նաեւ այնպիսիք, որոնց նկատմամբ ինչ-որ առումով անբավարարություն եմ զգում: Ավելի շուտ, գուցե պակաս սիրելի են... Չնայած իմ ամենասիրելի ստեղծագործությունն այն է, որի վրա տվյալ պահին աշխատում եմ:

- Կառլհայնց Շթոկհաուզենը պնդում է, որ համաշխարհային երաժշտությունը հասել է զարգացման այն աստիճանին, որ շուտով սպիտված կլինի վերանալ, փոխարինվել մեկ այլ երեւույթով՝ դարեր հետո կրկին վերածնվելու համար: Համամի՞տ եք: Որքանո՞վ է հնարավոր, որ ավանգարդի շրջանում տեղի ունեցած քայքայման գործընթացն այնքան հեռու գնա, որ ոչնչացնի երեւույթի բուն էությունը:

- Փորձում եմ առաջացնել հակառակը: Ժամանակը ցույց կտա: Համենայն դեպս, չեմ կարող ընդունել, որովհետեւ ես այսօր ստեղծում եմ երաժշտություն:

- Դուք ունե՞ք ժամանակին համընթաց քայլելու խնդիր: Թե՞ այն Ձեզ չի հուզում:

- Ժամանակին այդ հարցն ինձ շատ էր հուզում: Հիմա ոչ: Այժմ ես ավելի ազատ եմ: Ես ինձ ավելի ժամանակակից եմ համարում, քան այն, ինչ ժամանակին համարվում էր այդ պահին: Ես այսօրվա հեղինակ եմ եւ լսում եմ իմ ժամանակը:

- Մոդայի վերաբերյալ եւս մեկ հարց: Դուք ունեք հնավուրց, բարոկո երաժշտության ձեւերով ստեղծագործություններ: Այսօր դա շատ մոդայիկ է: Ի՞նչ է սա Ձեզ համար:

- Այո, դա մեծ տեղ ունի իմ ստեղծագործության մեջ: Արտասահմանում ինձ հաճախ համեմատում էին Շնիտկեի հետ: Իմ մի շարք գործերում կա բարոկոյի, նույնիսկ ռոմանտիզմի զգացողություն: Ինձ համար դա շատ բնական է, եւ ես օտարացում չեմ զգում: Դա իմ բարոկն է: Այն բարոկը չէ բուն իմաստով՝ դա իմ այսօրվա երաժշտությունն է: Առհասարակ իմ երաժշտության մեջ կան տարբեր ոճերի տարրեր՝ բարոկոյից մինչեւ ավանգարդ: Սակայն դրանք կազմում են միացյալ մի լեզու: Ինձ համար կարեւոր է սահմանային իրավիճակը՝ միշտ պատրաստ լինել անցումների՝ մի վիճակից դեպի մյուսը, միշտ գտնվել սահմանագծին...

- Օրինակ, տոնայնության եւ ատոնալության...

- Այո-այո: Նույնիսկ՝ ժողովրդականի եւ անհատականի, բարոկոյի եւ ոչ բարոկոյի...

- Իսկ ի՞նչ կասեք էսթրադայինի եւ ակադեմիականի մասին:

-Երբեմն նույնիսկ դրա կարիքն եմ զգում: Այսպիսի պահեր լինում են:

- Պիեռ Բուլեզն ասում էր, որ ոչ երաժշտության մեջ նրան հիացնում է նվագացանկի բացակայությունը, այսինքն ոչ երաժիշտներն ազատ են երաժշտություն ստեղծելու մեջ: Ինչպե՞ս եք վերաբերում այդ ազատությանը: Պարզ է, որ խոսքը ոչ թե փոփ երաժշտության մասին է, այլ այն ոճերի, որոնք հավակնում են լրջության, սակայն միեւնույն ժամանակ՝ ոչ ակադեմիական լինելուն:

- Այստեղ երեւի թե պետք է հիշատակել հանկարծաստեղծման պահը: Այն տեղ ունի իմ ստեղծագործության մեջ, քանի որ ես սիրում եմ մեծ ազատություն տալ կատարողին: Դրա վառ օրինակը Բախի արվեստն է. նա չէր դնում նոտաներում նույնիսկ դինամիկայի նշաններ: Դա թույլ է տալիս ունենալ տարբեր մեկնաբանություններ: Օրինակ, Գլեն Գուլդը, յուրովի մեկնաբանելով մեկ ֆրազը, կարողանում է փոխել մեր պատկերացումները տվյալ ստեղծագործության մասին: Դա, իհարկե, ոչ թե անարխիստական ազատություն է, այլ կազմակերպված՝ պարզապես ինքնարտահայտման հնարավորություն: Ես միշտ ձգտում եմ դրան:

- Դուք ասացիք, որ Ձեր երաժշտությունն արտասահմանում ավելի հաճախ է հնչում, քան Հայաստանում: Համապատասխանաբար նաեւ խոսվում է Ձեր երաժշտության մասին ավելի շատ այնտեղ: Ձեզ համարո՞ւմ եք Հայաստանում, ասենք, երաժշտագետների ուշադրությունից զրկված:

- Այստեղ էլ կային ինչ-որ հոդվածներ: Որոշակի ուշադրություն միշտ էլ եղել է: Պարզապես այստեղ իրոք որ ինչ եմ կատարվում: Իսկ հետո... չգիտեմ էլ թե ինչ...

Միշտ էլ դժվար է ապրել մի տեղում, որտեղ քեզ գիտեն պատանեկությունից: Երբ հանկարծ հասնում ես ինչ-որ բանի, քեզ միեւնույն է շարունակում են դիտարկել պարզապես որպես

Տես էջ 5

ԺԻՐԱՅՐ ՓԱՓԱԶԵԱՆԻ ԴԵՄԵՏՐԻՈՒՍԻ ԵՎ ԲՈԹՈՄԻ ԽԱՂԸ՝ ԽԱՂԻ ՄԷՋ

ԿԱՐԷՆ Ա. ՍԻՄՈՆԵԱՆ

Շեքսպիրի «Ամառային գիշերվա երազ» պիեսի Իրինա Բրուքի բեմականացման մեջ Ժիրայր Փափազյանի դերակատարմանը «Ազգը» ժամանակին անդրադարձել է: Այս հոդվածում Կ. Ա. Սիմոնյանը ավելի հանգամանորեն է ներկայացնում նրա դերասանական վարպետ խաղը: Ցավալիորեն, հայաստանյան բեմահարթակներում պատեհություն չի ստեղծվել ստիյուռֆահայ մեր անվանի արտիստի տաղանդի ներկայացմանը:

Երանց՝ երեքին հանդիպեցի Պետեր Բրուքի կենտրոնում, որ յայտնի է նաեւ իբրեւ Théâtre des Bouffes du Nord: Իրինա Բրուքի բեմադրութեամբ ներկայացուեց Շեքսպիրի «Ամարնային գիշերուայ երազը» («A Midsummer Night's Dream»): Ներկայացումը զուրկ էր բեմական յարդարանքից, դերակատարներին օգնում էին նուազագոյն ճանկութեամբ անհրաժեշտ պիտոյքներ եւ ճարտար լուսատրութիւնը: Այնպէս որ՝ վիքտորի մակերեսով ու արտակարգ բարձրութիւն ունեցող բեմը սովորական ըմբռնումով դատարկ էր, բայց աթենացի արհեստատր-մշակների երեւալուն պէս մինչեւ ներկայացման աւարտ՝ ամբողջ թատերասրահը յագեցած էր շեքսպիրեան յորդացող երեւակայութեամբ: Յունական դիցարանի, անգլիական էլֆերի, Օվիդիոսի «Կերպարանափոխութիւններ»ից եւ միջնադարեան վիպասանութիւնից յայտնուած կերպարների ներկայութիւնը իսկական հրավառութիւն էր բեմահարթակի վրայ: Իրինա Բրուքը դերակատարների ընտրութեամբ եւ նրանց տաղանդատր մեկնաբանութիւնների շնորհիւ ստեղծել է ընտիր մի ներկայացում, որ աւելի շուտ նախատեսուել է ոչ թէ թատերական բեմի, այլ բնութեան մէջ խաղալու համար:

Բայց հիմա իմ խնդիրը բեմադրիչի աշխատանքը չէ: Եւ ոչ էլ այն ափսոսանքը, որ առիթ չեմ ունեցել ներկայացումը դիտել բացօթեայ «բեմի» վրայ՝ իրական անտառում: Յամենայն դէպս ինձ համար անակնկալ մի գիւտ էր թատերական գործիչ եւ բեմադրիչ Ժիրայր Փափազեանը իբրեւ բացառիկ շնորհի տէր դերասան, որ շեքսպիրեան ներկայացման մէջ մեկնաբանում էր Դեմետրիուսի եւ Բոթոմի կերպարները:

Ամարնային թեժ գիշերուայ պատրանքները Շեքսպիրի առաւել բարդ հիւսուածքով եւ պատրանքներով յագեցած ստեղծագործութիւնն է. յորինուած աշխարհը... որտեղ իրականն ու տեսիլայինը այնպէս են ագուցուած իրար, որ ստեղծում են անկրկնելի մի ամբողջութիւն՝ ինչպիսին ընդհանրապէս մեր կեանքն է... Պատրանքների մէջ անցնող մեր կեանքը, որտեղ կենսական դժուարութիւններն ու հակասութիւնները յաղթահարւում են մոգական ուժերի շնորհիւ: Որտե՞ղ են այդ ուժերը... Փորձում ենք որոնել եւ գրեթէ միշտ ձախողում ենք... Բայց եթէ այդ մոգական ուժերը թաքնուած են հենց մե՛ր մէջ, եւ պատրաստ են ժայթքելով՝ օգնութե՞ն հասնել... Միայն թէ աշխարհը տեսնէինք ոչ այն կերպ, ինչպէս կերազէր Հերմիան («Եթէ միայն հայրս տեսնելու լինէր իմ աչքերով»): Եւ ոչ էլ այնպէս, ինչպէս յորդորում է Թեզէուսը՝ «Ո՛չ, պէտք է դու տեսնես նրա՛ աչքերով»:

Շեքսպիրեան այս թատերգութիւնը, որ յայտնի է իր «խաղի սահմանների մէջ ծաւալուող խաղով», զաւեշտական լրջութեան, ուրախ թախիծի, ողբերգական բերկրանքի իր առաս հնարատրութիւններով դերակատարների համար ինքնարտայայտումի նոյնքան անկաշկանդ միջոց է, որքան եւ մարդու ազատութեան հրաշքի յայտնութիւնը... Ազատութիւն՝ որին մարդ միշտ կարօտ է, բայց հազուադէպ է խիզախում «Աթէնքի տիրակալի ու նրա հայրական իրաւունքների խմահաճոյքներից» դէպի մօտակայ անտառ կատարել ընդամենը մէկ քայլ: Այն եզակի՛ քայլը՝ որից յետոյ ազատութեան մէջ ճախրող երեւակայութիւնը անհնարինը դարձնում է շօշափելի իրականութիւն:

Եւ որքան դերակատարին իր արուեստի չափողականութիւնը անմնացորդ դրսեւորելու համար անհրաժեշտ է յայտնուել «խաղի մէջ՝ խաղի» ֆանտաստիկ մթնոլորտում, նոյնքան եւ շեքսպիրեան այս թատերգութիւնը կարիք ունի այնպիսի դերակատարների, որոնք յորինուած աշխարհի դժուարութիւններն ու հակասութիւնները կարենան յաղթահարել մոգական ուժով: Այն մոգական ուժով որ, իմ համոզմամբ, յիրափ կուտակուած է մարդու մէջ եւ միայն «դէպի անտառ» կատարուելիք քայլի անհամարձակութիւնն է նրան պահում գորշ, կաշկանդող, կեանքը իսկական մի ծանր բեռ դարձնող կենցաղի մէջ:

Ժիրայր Փափազեանի Դեմետրիուսը, որին Աթէնքի տիրակալը ժամանակին ներկայացրել էր իբրեւ «ազնուական լորդ» («My noble lord»), իր սիրած կանանց Հերմիայի ու Հելենայի եւ, բնական է, սիրային այս թնճուկի մէջ գտնուող Լիսանդրի հետ ներկայացնում է այն առանցքը, որի շուրջ դառնում է թատերգութեան հիմնական գաւեշտը:

Դեմետրիուս-Փափազեանը իր դերակատարման լայն տիրոյթով, որտեղ ոչ մի պահ «դադար չունի» եւ իր ներկայութիւնը մնում է բեմի վրայ նաեւ այն դէպքում, երբ կամ գտնւում է յետին ծիրի վրայ, կամ ընդհանրապէս բացակայ է բեմական անցուդարձից, հաւաստի է դարձնում միայն մարդուն իւրայատուկ այն բնոյթը, թէ պատրանքներն ու երեւակայութիւնը օգնում, աւելի ճիշտ՝ թերեւս նպաստում են աշխարհը մեր իսկ աչքերով տեսնելուն: Եւ ինչպէս ենք մենք այդ բացառիկ շնորհով ճանաչում ոչ միայն ինքներս մեզ, այլ եւ ինչպէս ենք ընկալում մեր նմաններին:

Երբ այս «անդադար ներկայութեան» մասին խոսք եղաւ Ժիրայրի հետ, նա բացատրեց, որ իմ տպաւորութեան պատճառը խանչորս գործող անձանց դերակատարումները մի խանի դերասանի վրայ դրուած լինելն է: Անշուշտ, Իրինա Բրուքը վեց դերասանով է բեմադրել ամարնային գիշերուայ ամբողջ անցուդարձը: Բայց Ժիրայր Փափազեանի «անդադար ներկայութիւնը» սոսկ այս թուաբանութեան սահմաններից դուրս է, եւ ես նկատի ունեմ «անտառային» բեմի վրայ դերասանի տաղանդատր արուեստի ներկայութիւնը:

Յիրափ, սխալմունքի գաւեշտը գարգանում է ծաղիկների թուտի շնորհիւ, որ մեր սիրահարուած երիտասարդների աչքերին են խում անտառային փերիները եւ, քանի որ փերիներ են, անշուշտ նաեւ թեթեւամտորեն շփոթելով իրենց «զոհերին»: Բայց իմ տպաւորութեամբ Դեմետրիուս-Փափազեանը հեքիաթային գիշերուայ մէջ իր երեւակայական գոյութեամբ առաւելագոյնս կերպարատում է իրական գեղի վրայ գտնուող մարդուն, որի համար սիրոյ էութիւնը, եթէ կուզէք՝ սիրելու կարողութիւնը, արդեւք իմաստն ու նպատակն է:

Միեւնոյն ժամանակ պատրանքների գիշերուայ մէջ մէկ այլ խաղ են ձեռնարկում աթենացի մի խումբ արհեստաւորներ՝ այն յոյսով, թէ հնարատրութիւն կունենան ներկայացնել հերցոգի հարսանիքին: Այդ խաղը Օվիդիոսից հասած եւ Ջեֆրի Չոսերի շարադրած «Դառնակսկիծ կատակերգութիւն»ն է, որի գլխատր՝ Պիրամուսի դերը բեմադրիչը յանձնարարում է Բոթոմին:

Բոթոմը անտարբեր չէ իրեն յանձնարարուած դերի նկատմամբ: «Ո՞վ է այդ Պիրամուսը, հետաքրքրւում է նա: - Սիրահա՞ր է նա, թէ բռնակալ»: «Սիրահար, որ գեղեցիկ կերպով հինգնասպան է լինում յանուն իր սիրոյ», պատասխանում է «խաղի մէջ խաղի» բեմադրիչը: «Եթէ ճիշտ ներկայացնեմ՝ առանց արցունքի գլուխ չի գայ... Բայց նկատի ունեցիր, որ իմ խառնուածքը բռնատրն է»: Պիրամուսին կերպարատրող Բոթոմիի այս դերակատարումը Ժիրայր Փափազեանի համար արուեստի ընձեռած իր շռայլ հնարատրութիւնները հաստատելու բացառիկ մի առիթ է: Բռնատիրոջ խառնուածքը հաւանաբար դեռ ոչ մէկին չի խանգարել մարդկային կարեկցանք շահել սիրոյ շահատակումով:

Եթէ դերակատար Ժիրայր Փափազեանը այս բեմադրութեամբ իր բեմական արուեստը անպարփակ դրսեւորելու բարեբաստեղ առիթ է ունեցել, ապա «Ամարնային գիշերուայ երազը» թատերգութեան՝ Իրինա Բրուքի այս մեկնաբանութեան համար անվերապահ յաջողութիւն է Դեմետրիուսի եւ Բոթոմի դերակատարի ներկայութիւնը:

...Մեր բեմը ունեցել է արուեստի խոշոր տիրոյթի դերասաններ, որոնցից դարձել են հայ թատրոնի առասպելներ: Իմ տպաւորութեամբ նոյնպիսի խոշոր տիրոյթի դերասան է Ժիրայր Փափազեանը:

Միայն թէ ափսո՜ս...

Ափսոս, որ նա այնպէս էլ առիթ չի ունենալու բարձրանալ հայ բեմ: Սփյուռքն արհեստավարժ թատրոն չունի: Եւ Պոլսոյ թատրոնը, որտեղ ծնուել եւ ճիտատրում էր հայ բեմարուեստը՝ վաղուց պատմութիւն է դարձել: Տաւալի փաստ է նաեւ, որ Արտերկրի մշակութային միութիւնները դադարեցին մտահոգուել սփիռքահայութեան հոգեւոր-մշակութային կեանքով, բայց նեստելով հայրենիք՝ ոչինչ չկարողացան աւելացնել այնտեղ, քանի որ յայտնուեցին մի իրականութեան մէջ որտեղ ամէնից առաջ անհրաժեշտ էր մարուել պետականացուած եւ գաղափարականացուած արուեստի ժանգից:

Արտերկրի մէջ արուեստագէտները փայլում եւ դեռ փայլելու են Արեւմուտքի օտար արուեստից երկնակամարի վրայ, իսկ մեր ազգակիցները, ինչպէս արդէն տարօրինակ բնատրութիւն է դարձել՝ բաւարարուելու են սոսկ հպարտանալով թէ՝ «Մե՛ր է»:

Եւ շարունակելու են կարոտ եւ զուրկ մնալ նրանց ստեղծած հոգեւոր շռայլ եւ հայրէն սնունդից...

Փարիզ

Ժիրայր Փափազյանը (այստեղ՝ աջից) Շեքսպիրի «Ամառային գիշերվա երազը» ներկայացման մեջ (բեմադրիչ՝ Իրինա Բրուք)

«Մի լեզուն չափազանց...

Ջ էջից

մեկը, ով միշտ էլ եղել է բոլորի կողքին: Եվ իհարկե, վերաբերմունքը բոլորովին այլ է, քան այնտեղ, որտեղ քեզ երբեք չէին ճանաչում, եւ դու հանկարծ ցույց ես տալիս քո արժանիքները:

**- Այսպիսի մի հարց: Ո՞ր լեզվով եք Դուք մտածում: Համարվում է, որ Ավետ Տերտերյանը գրում էր արմատապես «հայկական» ենը գրում էր արմատապես «հայկական» ենը գրում էր արմատապես «հայկական» են

Գրականություն

Ե էջից

Ամուսնության մասին

... «Աշխարհ էլ եկած դուք միասնաբար
ու պիտի մնաք միասին յուրաքանչյուր։
«Պիտի միասին ըլլաք երբ մահուան
թեւերն սպիտակ՝ ձեր կեանքի օրերն
ընեն ցիրուցան։
«Պիտի միասին ըլլաք դուք, այո՛,
լուռ յիշողութեան մէջ իսկ Աստուծոյ։
«Բայց թող գոնուին ձեր միասնութեան
մէջ բաց միջոցներ,
«Ու թող ձեր միջեւ կարենան պարել
հովերն երկինքի։
«Սիրեցէք զիրար, բայց մի՛ վերածէք
սէրը կապանքի.
«Թող նախընտրաբար ըլլայ անիկա
ծով մը յարաւարժ՝ ափերուն միջեւ
ձեր հոգիներուն։
«Բաժակ լեցուցէք մէկդ միւսին, բայց
նոյն բաժակէն մի՛ փորձուիք խմել։
«Ձեր հացէն բաժին տուէք իրարու,
բայց մի՛ ուտէք դուք նոյն նկանակէն։
«Երգի՛ ու պարի՛ ելէք միասեղ,
բայց իւրաքանչիւրդ թող մնայ անջատ,
«Ճիշդ այնպէս՝ ինչպէս լարերը փինին
կը մնան անջատ,
կը թրթռան թէեւ նոյն եղանակով»։

Զաւակի մասին

... «Ծնունդները ձեր... չեն ձեր զաւակներն,
այլ՝ տղաին անոնք եւ աղջիկներն են
այն կարօտին զոր
Կեանքը կը տածէ ինքնիրեն հանդէպ։
«Կու գան ձեր մէջէն, սակայն ո՛չ ձեզմէ։
«Թէեւ ձեզի հետ՝ բայց չեն պատկանիր
անոնք ձեր անձին։

«Կրնաք տալ իրենց սէր ու գուրգուրանք,
բայց ո՛չ մտածում,
«Զի ունին անոնք իրենց խոհն ուրոյն։
«Կրնա՛ք տալ դուք տունն անոնց մարմինին,
բայց ո՛չ հոգիին,
«Զի կը բնակին հոգիներն անոնց՝
տունին մէջ վաղուան, զոր այցելել դուք
չէք կրնար նոյնիսկ ձեր երազներով։
«Կրնաք ջանալ որ նմանիք անոնց,
բայց զանոնք ձեզի դարձնել նման՝
մի՛ ձգտիք երբեք,
«Քանզի չ՝ընթանար կեանքը դէպի ետ,
ու ոչ ալ երկար
կ՝ուզէ յամենալ ան երէկին մօտ»։

Տալու մասին

...«Տուած կ՝ըլլաք դուք շատ քիչ բան՝ երբ տաք
ձեր ստացուածքէն։
«Ձեր անձէ՛ն տալով միայն կ՝ըլլաք դուք
իսկապէս տուած։
«Վասնզի, ինչ են ձեր ստացուածքներն,
եթէ ոչ բաներ,
զորս կը պահէք ու կը պահպանէք,
վախով թէ կրնաք վաղը դուք՝ կարիք
ունենալ անոնց։
«Իսկ վաղը... վաղը ինչ կրնայ բերել
խորամանկ շունին, որ ոսկորներն իր
աւազներու մէջ կը թաղէ անհետ՝
մինչ կը հետեւի
ուխտաւորներուն դէպի սուրբ քաղաք։
«Ու կարիքի վախն ինչ է՝ եթէ ոչ կարիքը ինքնին։
«Երբ ջրհորդ է լի,
ծարաւի երկիւղն իսկ չէ՞ ծառաւն այն,
որ չունի յաղուրդ։
«Կան որ կու տան քիչն իրենց ունեցած
շատ հարստութեան —
այնքան մը միայն՝ որ փառաբանուին։
Եւ իրենց ծածուկ ցանկութիւնը այդ՝
կը դարձնէ տուած ընծան արժեզուրկ։
«Ու կան ալ որ քի՛չ ունին եւ կու տան
զայն ամբողջութեամբ։
«Հաւատաւորներն ու առատութիւնն
են անոնք կեանքին.
եւ արկղն անոնց չի պարպուիր երբեք։
«Կան ալ որ կու տան միշտ ուրախութեամբ,
եւ ուրախութիւնն այդ վարձն է անոնց։
«Կան եւ ուրիշներ որ կու տան ցաւով,
եւ այդ ցաւն իրենց մկրտութիւնն է։
«Իսկ կան որ կու տան ու չեն զգար ցաւ,
եւ ուրախութիւն չեն ակնկալեր,
ու ոչ ալ կու տան՝ առաքինութեան
դիտաւորութեամբ.
«կու տան ճիշդ այնպէս՝ ինչպէս սա մօտիկ
ձորի մրտենին կ՝արտաշնչէ բոյրն
իր շրջապատին։
«Այդպիսիներուն ձեռքով է որ
կը խօսի Աստուած եւ այս աշխարհին
կը ժպտի անոնց աչքերուն մէջէն»։

Տուներու մասին

... «Եւ ըսէ՞ ինծի, օրֆալիզցիներ՛,
ինչ ունիք դուք ձեր այս տուներուն մէջ,
ու ձեր ամրափակ դուռերուն ետին
ինչ կը պահպանէք։
«Ունի՞ դուք անդորր, այն ոյժը հանդարտ՝
որ ի յայտ բերէր զօրութիւնը ձեր։
«Ունի՞ դուք յուշեր, կամարներ շողուն՝
որ կը կամրջեն միտքի գագաթներ։
«Ունի՞ յղացում դուք գեղեցկութեան,
որ սիրտը տանի հողէ ու քարէ
ձեւուած բաներէն դէպի լեռը սուրբ։
«Ունի՞ բաներն այս՝ ձեր տուներուն մէջ։
«Թէ՝ ունիք միայն դիւրակեցութիւն,
կամ՝ մարմաջն անոր, արարածն այդ նենգ,
որ տուն կը մտնէ իբրեւ հիւր, յետոյ՝
կ՝ըլլայ հիւրընկալ ու կը դառնայ հուսկ
տէր ու տիրական»։

Ինքնաճանաչման մասին

...«Թող ոչ ոք ըսէ թէ ճշմարտութի՛ւնն
է յայտնագործած,
այլ՝ ըսէ միայն, թէ ճշմարտութեան
մէ՛ ծանօթ դարձած։
«Մի՞ ըսէք՝ «Գտայ ուղին հոգիին»,
այլ, նախընտրաբար՝ «Տեսայ հոգին որ
կը շրջագայէր իմ ճամբուս վրայ.»
«Վասնզի հոգին կը քալէ վրան
ամէն կածանի։
«Ցընթանար հոգին մէկ գիծի վրայ,
ու ոչ ալ կ՝ածի եղէգի նման.
«Կը բացուի հոգին՝ անթիւ թերթերով
լուսասի մը պէս։»

Խօսելու մասին

...«Կը խօսի՞ երբ հա՛շտ չէք այլեւս ձեր
մտածումին հետ։
«Երբ ա՛լ չէք կրնար բնակիլ սիրտին
ձեր մենութեան մէջ
կ՝ելլէք ադրելու ձեր շուրթին վրայ,
ու ձեզի համար՝ ձայնը կը դառնայ
զբօսանք, ժամանց,
«Ու մեծ մասին մէջ ձեր խօսակցութեան՝
կ՝ըլլայ մտածումն յաճախ կիսամահ։
«Զի մտածումն է երկնային թռչուն,
որ թէեւ կրնայ բառի վանդակին
մէջ թեւն իր բանալ,
սակայն սաւառնիլ չի կարողանար։

... «Կան ձեր մէջ մարդիկ, որ շաղակրատին
կ՝ըլլան հետամուտ՝
մինակ մնալու վախէ մը մղուած.
«Ամենայն ինչ ասեմ, Վահան ջան, հիմա քո
հազարն է» («Խորհրդային գրականություն», 1928, թիվ 2, փետրվար, էջ՝ 169)։

6. Ն. Զարյանն ուներ այն համոզումը, թե Մահարին նրան էր համարում իրեն բաժին ընկած փորձության մեղավորը։ Այդ ոգով էլ նա գրեց եւ տպագրեց իր «Խաչմերուկ» պատմվածքը։ Այնինչ Մահարու մեղադրանքները ոչ թե անձնական էին, այլ բարոյական-հասարակական։
7. Pro domo sua-ով - Բառացի՝ «ի պաշտպանություն յուր տան» (լաս.), օգտագործվում է «իր մասին», «սեփական անձնական հանգամանքների մասին», «սեփական անձի կամ սեփական շահերի պաշտպանության» իմաստներով։ Ասացվածքը գործածել էր Ե. Չարենցը՝ 1922թ. Մոսկվայում լույս տեսած երկհատորյակի առաջաբանում՝ «Այսմանը - Pro domo sua » եւ այլն։ Լատիներեն այդ բառերով է վերնագրված նաեւ նրա հոդվածներից մեկը (Երկեր, հ. 6, էջ՝ 36)։
8. Միայն Մահարին չէր, որ նման հատակ դիրքորոշում ուներ Հր. Քոչարի հանդեպ։ Վերջերս լույս տեսած Ս. Զորյանի հուշերում բավական ծավալուն տրված է Քոչարի նկարագիրը որպես մարդու եւ գրողի։ Ճիշտ է, Հր. Քոչարի անունը ծածկագրված է F տառով, սակայն օրագրի ամսաթվերը եւ անխաբ ակնարկները ոչ մի կասկած չեն թողնում, որ այստեղ մեզ գործ ունենք Պոլիսինեանի գաղտնիքի հետ։ Բերենք այնտեղից փոքր մի հատված.

«Մայիս 27. Մի քանի օր առաջ քաղեցին 37-38 թթ. «հեռու»-գրդարտիչ ու մատնիչ F-ին, որ տասնյակների գլուխ կերավ այդ թվերին։ Բայց քաղեցին որպես հասարակական գործիչ եւ անվանի գրող։ Չէ՞ որ շատերը գիտեն նրա անամոթ գործերը (կան ձեռքից ձեռք շրջող դոկումենտներ), ինչո՞ւ են դիմում ֆալսիֆիկացիայի - չեմ հասկանում։ Իսկ որպես գրող անարժեք էր, անարվեստ. սրա-նրա թեմաներն ու սյուժեները վերցնող-մշակող։

Հայտնի է նույնպես, որ 37-38 թթ.-ից հետո էլ շարունակում էր նույն «հերոսությունը». 2-րդ անգամ բռնել տվեց ախորից վերադարձած Մահարուն, Ալազանին եւ Նորենցին, իսկ «Գր. թերթ»-ի խմբագրին հեռացնել տվեց նրանց կազմած գրական անմեղ նյութերը տպելու համար, լուրեր, որ կազմել էին նրանք մի քանի կողմեկ ստանալու համար, եւ չէին ստորագրել (խոսքը Գ. Մահարու բանաստեղծական անստորագիր թարգմանությունների մասին է.-Գր. Ա.)։

Եվ մահազդի մեջ այս տիպին ներկայացրել են որպես **հասարակական գործիչ, որպես էնցիկլոպեդիստ, գրեթե մեծ գրող** եւ այլն։ Այսքան տարի լինելով Գրող. միության մեջ չեմ տեսել դրա նման խորամանկ, խարդախ ու կեղծ առարկա։ Այդպես էլ հայտնի էր մեծ մասին, եւ դրա համար վերջին տասնտասնութիւնգ տարում ընտրությունների ժամանակ նրան սեւացնում էին, իսկ եթե լինում էր խմբագրական կոլեգիաների մեջ - դա արդեն գալիս էր վերեւից » («Նորք», Եր., 2006, թիվ 4 էջ՝109-110)։

9. Մի խոսքով ... (որպես.)։
10. Խոսքը Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպի որպես հրատարակության մասին է, որը լույս էր տեսել Մոսկվայում՝ 70.000 տպաքանակով։
11. Երկու գրողների մասին Շ. Շահնուրի կարծիքը միաձայն էր. «Հրաչեայ Քոչար եւ Նայիրի Զարեան տեղ չունէին յիշողութեանս մէջ. այն պատճառով որ իրենցմէ արժէքաւոր գիրք մը չէի կարդացած» (25 մայիսի 1965 թ.)։ ◆

Դ էջից

մարդ, որ չունի ոչ խիղճ եւ ոչ իսկ ամոթ. գոնե տաղանդ ունենար. այդ էլ չկա. նստել է պատասխանատուների, Պետհրատի վզին (եւ ժողովրդի) ու... խոչում է...» (նույնին,11 փետրվարի 1964 թ.)։

Գրողի անգամ վերջին շրջանի գործերը, որոնցով նա մեր օրերում շարունակվում է պրոպագանդվել կինոյի լեզվով, չսիրեցին Մահարուն փոխել իր կարծիքը. «Վերջինս (Հր. Քոչարը- **Գր. Ա.**) սալինյան շրջանի կարկառուն չմշակներից էր, որը բավական չար սերմեր ցանելուց եւ հեղինակություն հնձելուց հետո, վերջին շրջանին կերպով մը ուզեց խավել իր մեղքերը (Ն. Զարյանը զլացավ այդ իսկ...) եւ գրեց մի քանի տանելի բաներ, որոնք սակայն չկարողացան բարձրանալ իսկական արվեստի պատվանդանին»[11] (Շ. Շահնուրին, 18 մայիսի 1965 թ.)։

Ցնծավալվենք: Ցխախտենք թերթային հրապարակման ծավալային սահմանները: Բայց չեմ կարող չխոստովանել, որ նյութի վրա աշխատելու ողջ միջոցին ինձ հանգիստ չէին տալիս նույն հարցերը՝ պե՞տք է արդյոք այս հրապարակումը, ինչի՞ է ծառայելու այն, ո՞ւմ է հետաքրքիր հեռավոր ժամանակների հին դարմանը կամ անցած տարիների ձմռան ձյունը: Մինչեւ անգամ խորհրդակցեցի մարդկանց հետ, ում կարծիքի հետ հաշվի եմ նստում...

Պատասխանը հստակ եւ որոշակի էր.

- Եթե մենք ուզում ենք ստեղծել առանց չափորոշների օրինաց երկիր կամ բարգավաճ Հայաստան (հասկացություններ, որոնք կաղապարավորվում են իրենց ծննդյան օրից...), ապա պետք է իրերը, մարդկանց եւ երեւույթները բարձրաձայն կոչենք իրենց անուններով, այլապես չի լինի ոչ մի երաշխիք, որ հեռու կամ մոտիկ ապագայում այս կամ այն ձեւով չենք սկսի նորից գործել պեսական կամ «մտավորական» պաշտիչ-վարչարարական մահակները, եւ որ նոր մատնիչները չեն ունենա իրենց անունը կրող լայնահուն փողոցներ Երեւանի կենտրոնում:

Հիշենք անցյալը՝ հանուն ապագայի:

Ծանոթագրություններ

1. Գրողների տանն ունեցած ելույթում Ն. Զարյանը բողոքել էր գրական կյանքում «մաքուր օդի» բացակայությունից եւ այդ ելույթի հիման վրա հետագայում տպագրել «Մաքուր օդ եւ գրականություն» հոդվածը: Նույն թեմայով մի քանի տարի անց գրված նրա հոդվածը խորագրված էր «Մթնոլորտային մտորումներ»:
2. Մահարին եւ Ն. Զարյանը տարբեր էին մոտենում Ա. Բակունցի «դասընկերական» խնդրին: Ն. Զարյանը փորձել էր արդարացնել իր մեղադրանքը՝ տալով Ա. Բակունցի կուսակցական երթեմնի պատկանելությանը «ծխականության» բնույթ, իբր դասընկերական են եղել մեր բոլոր մտավորականները, իսկ Մահարու համար դա գլխավոր պատճառն էր գրողի ողբերգության, քանի որ 1936 թվականին բոլորովին այլ հնչեղություն ու բովանդակություն ուներ «դասընկերական» մեղադրանքը:
3. Խոսքը Ռ. Իշխանյանի «Ակսել Բակունց. Կենսագրություն եւ մատենագիտություն», Եր., 1960, աշխատության մասին է:
4. Խոսքը Ն. Զարյանի մի շարք հոդվածների մասին է, որոնցում «մերկացվում» էին Ա. Բակունցի եւ այլն ձերբակալված այլ հայ գրողների գաղափարական սխալները՝ «Բարձրացնել բոլշեւիկյան զգաստությունը գրականության եւ արվեստի ֆրոնտում» («Խորհրդային արվեստ», 1936, թիվ 15-16, 1 սեպտ., էջ՝ 203-204), «Դեպի խորհրդային գրականության նոր վերելք» («Խորհրդային Հայաստան», 1936, 18 սեպտ.), «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների դեմ» («Խորհրդային գրականություն»,.1936, թիվ 3-4), «Ընդդեմ նացիոնալիզմի եւ տրոցկիզմի, հանուն սոցիալիստական մեծ գրականության» («Գրական սերունդ», 1936, թիվ 4, էջ՝ 15-19), «Կապը կտրած խմբագրեցը» («Գրական սերունդ», 1936, թիվ 5-6, էջ՝ 33-35), «Նացիոնալիստը խորհրդային գրողի դիմակով» («Գ. Թ.», 1936, թիվ 19, 25 օգոստոսի)։
5. **«Հիմա քո հազարն է»:** Այսինքն՝ քո ժամանակն է: Բառն այդ իմաստով օգտագործել է նաեւ Ավ. Իսահակյանը: 1911 թվականին, երբ նա գտնվել է Պոլսում, ստացել է Վ. Տերյանի գիրքը եւ խնդրանք՝ իր կարծիքը հայտնելու մասին: Իսահակյանը պատասխանել է՝ «Ի՞նչ ասեմ, Վահան ջան, հիմա քո հազարն է» («Խորհրդային գրականություն», 1928, թիվ 2, փետրվար, էջ՝ 169)։
6. Ն. Զարյանն ուներ այն համոզումը, թե Մահարին նրան էր համարում իրեն բաժին ընկած փորձության մեղավորը: Այդ ոգով էլ նա գրեց եւ տպագրեց իր «Խաչմերուկ» պատմվածքը: Այնինչ Մահարու մեղադրանքները ոչ թե անձնական էին, այլ բարոյական-հասարակական:
7. Pro domo sua-ով - Բառացի՝ «ի պաշտպանություն յուր տան» (լաս.), օգտագործվում է «իր մասին», «սեփական անձնական հանգամանքների մասին», «սեփական անձի կամ սեփական շահերի պաշտպանության» իմաստներով: Ասացվածքը գործածել էր Ե. Չարենցը՝ 1922թ. Մոսկվայում լույս տեսած երկհատորյակի առաջաբանում՝ «Այսմանը - Pro domo sua » եւ այլն: Լատիներեն այդ բառերով է վերնագրված նաեւ նրա հոդվածներից մեկը (Երկեր, հ. 6, էջ՝ 36)։
8. Միայն Մահարին չէր, որ նման հատակ դիրքորոշում ուներ Հր. Քոչարի հանդեպ: Վերջերս լույս տեսած Ս. Զորյանի հուշերում բավական ծավալուն տրված է Քոչարի նկարագիրը որպես մարդու եւ գրողի: Ճիշտ է, Հր. Քոչարի անունը ծածկագրված է F տառով, սակայն օրագրի ամսաթվերը եւ անխաբ ակնարկները ոչ մի կասկած չեն թողնում, որ այստեղ մեզ գործ ունենք Պոլիսինեանի գաղտնիքի հետ: Բերենք այնտեղից փոքր մի հատված.

«Մայիս 27. Մի քանի օր առաջ քաղեցին 37-38 թթ. «հեռու»-գրդարտիչ ու մատնիչ F-ին, որ տասնյակների գլուխ կերավ այդ թվերին: Բայց քաղեցին որպես հասարակական գործիչ եւ անվանի գրող: Չէ՞ որ շատերը գիտեն նրա անամոթ գործերը (կան ձեռքից ձեռք շրջող դոկումենտներ), ինչո՞ւ են դիմում ֆալսիֆիկացիայի - չեմ հասկանում: Իսկ որպես գրող անարժեք էր, անարվեստ. սրա-նրա թեմաներն ու սյուժեները վերցնող-մշակող:

Հայտնի է նույնպես, որ 37-38 թթ.-ից հետո էլ շարունակում էր նույն «հերոսությունը». 2-րդ անգամ բռնել տվեց ախորից վերադարձած Մահարուն, Ալազանին եւ Նորենցին, իսկ «Գր. թերթ»-ի խմբագրին հեռացնել տվեց նրանց կազմած գրական անմեղ նյութերը տպելու համար, լուրեր, որ կազմել էին նրանք մի քանի կողմեկ ստանալու համար, եւ չէին ստորագրել (խոսքը Գ. Մահարու բանաստեղծական անստորագիր թարգմանությունների մասին է.-Գր. Ա.)։

Եվ մահազդի մեջ այս տիպին ներկայացրել են որպես **հասարակական գործիչ, որպես էնցիկլոպեդիստ, գրեթե մեծ գրող** եւ այլն: Այսքան տարի լինելով Գրող. միության մեջ չեմ տեսել դրա նման խորամանկ, խարդախ ու կեղծ առարկա: Այդպես էլ հայտնի էր մեծ մասին, եւ դրա համար վերջին տասնտասնութիւնգ տարում ընտրությունների ժամանակ նրան սեւացնում էին, իսկ եթե լինում էր խմբագրական կոլեգիաների մեջ - դա արդեն գալիս էր վերեւից » («Նորք», Եր., 2006, թիվ 4 էջ՝109-110)։

9. Մի խոսքով ... (որպես.)։
10. Խոսքը Հր. Քոչարի «Մեծ տան զավակները» վեպի որպես հրատարակության մասին է, որը լույս էր տեսել Մոսկվայում՝ 70.000 տպաքանակով։
11. Երկու գրողների մասին Շ. Շահնուրի կարծիքը միաձայն էր. «Հրաչեայ Քոչար եւ Նայիրի Զարեան տեղ չունէին յիշողութեանս մէջ. այն պատճառով որ իրենցմէ արժէքաւոր գիրք մը չէի կարդացած» (25 մայիսի 1965 թ.)։ ◆

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

Հայաստանն ընտրում է

Հայաստանի քաղաքական ղեկավարներից մեկի՝ յոթ տարի վարչապետի պաշտոնն զբաղեցրած Անդրանիկ Մարգարյանի անսպասելի մահը ծանր կորուստ դարձավ հանրապետության համար:

Ներկայումս Հայաստանում ծավալվում է հերթական տարածքի 2007 թ. առավել նշանակալի ընտրարշավներից մեկը: Եվ մեր երկրի համար քաղաքական այդ ընտրարշավն ունի հսկայական կարեւորություն:

Հայաստանը մեր ամենահուսալի գործընկերն է Անդրկովկասում: Տարածաշրջանը միակ երկիրն է, որը չի մտնում Եվրասիայում Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակող նախագծի՝ ՎՈՒԱՄ-ի մեջ: Հայաստանն ամբողջ հետխորհրդային տարածում Ռուսաստանի ամենահուսալի դաշնակիցներից մեկն է, մտնում է ԱՊՀ միջուկի, Եվրասիական տնտեսական համագործակցության, Հավաքական անվտանգության պայմանագրի մեջ: Ընդսմին նա անկեղծ գործընկեր ու դաշնակից է, որի հասարակական գիտակցության մեջ հակառուսական տրամադրությունները երբեք լուրջ արձագանք չեն գտել: Թվով Հայաստանի բնակչությանը գերազանցող հայկական սփյուռքն ազդեցիկ գործոն է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ շատ ուրիշ կարեւոր երկրներում՝ Իրանից մինչեւ ԱՄՆ:

Գաղտնիք չէ, որ վերջերս Անդրկովկասն ավելի ու ավելի մեծ չափով դառնում է մեծ տերությունների աշխարհաքաղաքական մրցակցության ասպարեզ: ԱՄՆ-ն առավելագույնս ամրապնդել է դիրքերը Վրաստանում, ամրանում է Ադրբեջանում, նշանակալի գործոն դառնալով նաեւ Հայաստանի քաղաքական բեմում: Որոշակի դեր են խաղում Իրաքի եւ Իրանի խնդիրները: Եվրամիությունը եւս կարեւորում է Անդրկովկասի դերը:

Նման բարդ իրավիճակում Ռուսաստանի համար շատ կարեւոր է Անդրկովկասում իշխանություններին տեսնել իր հետ կառուցողական փոխգործողության հակված քաղաքական ուժերի: Հայաստանում մայիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին կհաջորդեն նախագահական ընտրությունները: Ռուսաստանի հետ դրական հարաբերությունների անկեղծ կողմնակից Ռոբերտ Քոչարյանը, ինչպես եւ Վլադիմիր Պուտինը, չի կարող հաջորդ ժամկետով վերընտրվել: Թե շարքային քաղաքացիները եւ թե ընտրախավը որպես նրա իրավահաջորդ են ընկալում Սերժ Սարգսյանին: Նա կրթությամբ բանաստեղծ է, բայց ճակատագրի կամքով դարձավ Ղարաբաղի բանակի հրամանատարներից մեկը, իսկ վերջին տարիներին գլխավորել է ՀՀ պաշտպանության նախարարությունը եւ անվտանգության խորհուրդը: Սարգսյանին կողմ է նաեւ Ռուսաստանը: Այդ ուժեղ եւ ճկուն քաղաքական գործիչը կայուն կապեր է հաստատել ՌԴ ղեկավար շրջանակների հետ: Ընդսմին նա լուրջ հակակրանք չի առաջացնում նաեւ Արեւմուտքում: Բայց նախ եւ առաջ ընտրություններում պետք է հաջողության հասնի «Հանրապետական» կուսակցությունը:

Ինչո՞վ կարող ենք օգնել Հայաստանին: Նախ եւ առաջ՝ մեր գործընկերոջ հանդեպ պատասխանատու եւ ուշադիր վերաբերմունքով, հաշվի առնելով հայկական կողմի քաղաքական եւ նույնիսկ կենցաղային մտահոգությունները: Ռուսաստանից են կախված իր տարածքում ապրող եւ աշխատող հայերի իրավունքների պահպանությունը, ազգային կամ քաղաքացիական խտրականության կանխումը, նրանց անվտանգության ապահովումը: Էթնիկական հողի վրա կատարվող հանցագործությունները պետք է միանշանակ կերպով դատապարտվեն:

Կարեւոր է հնարավորինս արագ ներդրումներ կատարել եւ գործարկել այն ձեռնարկությունները, որոնք ՌԴ իրավաբանական անձանց սեփականությունն են դարձել արտաքին պարտքի մարման հաշվին եւ մասնավորեցման ընթացքում: Հակառակ դեպքում հնարավոր է ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական բացասական արդյունք:

Հայաստանում ակնհայտ դժգոհություն են առաջացրել բնական գազի թանկացման քայլերը: Անշուշտ, շուկայական գնագոյացմանն անցնելը անխուսափելի է, բայց Ռուսաստանը կարող է ննջարկել դաշնակից երկրներին որոշակի փոխհատուցում տալու հնարավորության հարցը: Այս տարի առաջին անգամ միջոցներ են հատկացվում արտասահմանին օգնելու ծրագրին, եւ Հայաստանը պետք է համարվի նման օգնություն ստացողներից մեկը:

Եթե դա արվի, ապա մենք կօգնենք Հայաստանի ռուսամետ ուժերին, հետեւաբար՝ նաեւ ինքներս մեզ:

ՎԱՅՍԵՆԼԻԵՎ ՆԻԿՈՆՈՎ
«Իզվեստիա»
04.04.2007 թ.

Մոլորակի կլիմայի փոփոխությունները տեսանելի են արդեն այսօր

Կլիմայի փոփոխություններով զբաղվող ՄԱԿ-ի միջկառավարական խմբի փորձագետները երեկ հրապարակած 21 էջանոց զեկուցագրում նշում են, որ մոլորակի կլիմայական փոփոխությունները արդեն այսօր էական ազդեցություն են գործում բնության վրա: Նկատելի են նաեւ մարդկային հասարակության վրա այդ փոփոխությունների ազդեցության որոշ նշաններ:

Զեկուցագրում ընդգծվում է, որ մոլորակի բնության եւ մարդկանց համար բավական դժվար կլինի հարմարվել համընդհանուր ջերմացման առաջացրած բոլոր փոփոխություններին: Այսպես, 1990 թ. մակարդակի համեմատությամբ 1,5 աստիճանով ջերմաստիճանի բարձրացումը մոլորակի վրա ապրող բոլոր կենդանական ու բուսական տեսակների 1/3-ին ենթակա կդարձնի ոչնչացման վտանգին: Ընդսմին ավելի քան 1 մլրդ մարդ կստանա ջրի պակասից, որի հիմնական պատճառն է լեռնային սառցադաշտերի հալոցքը: Հայտնի է, որ այդ սառցադաշտերը ջրի բնական պահեստարանների դեր են կատարում:

Միջկառավարական խմբի փորձագետները իրենց եզրակացություններն արել են, վերլուծելով բնության մեջ տեղի ունեցող ֆիզիկական եւ կենսաբանական դիտարկումներին առնչվող 29 հազար միավոր գիտական տեղեկատվություն: ՄԱԿ-ի փորձագետները նշում են, որ այդ տվյալների 85 տոկոսը համապատասխանում է մոլորակի ջերմացման հետեւանքներին:

Սա կլիմայական փոփոխություններով զբաղվող խմբի արդեն 2-րդ զեկուցագիրն է այս տարի: Առաջինը հրապարակվել էր փետրվարին: Այնտեղ ընդվում էր, որ 1950 թ. ի վեր դիտվող ջերմոցային էֆեկտի գլխավոր պատասխանատուն մարդն է:

Սպասվում է, որ 3-րդ փաստաթուղթը կհրապարակվի մայիսին: Դրա գլխավոր թեմաները կդառնան, այսպես կոչված, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման եւ ջերմաստիճանի բարձրացման խնդիրները:

Բազմաթիվ դիտարկումների համադրությունը եւ համակարգչային մոդելավորումը գիտնականներին թույլ են տալիս ավելի լավ ըմռնել, թե աշխարհի տարբեր շրջաններում ինչ տեղի կունենա մոտ ապագայում: Միջկառավարական խմբի նախագահ Ռաջենդրա Պաչաուրին ասում է, որ հետազոտությունների համաձայն, ապագայում կլիմայական փոփոխություններից առավել շատ տուժելու են ամենաաղքատ երկրները:

Մարդկության համար ամենաբարդ հարցը թերեւս կդառնա խմելու ջրի խնդիրը: Հիմալայները, Ժայռոտ Լեռները, Անդերը եւ Ալպերը իրենցից ներկայացնում են ջրի բնական պահեստարաններ: Ջրառանը այնտեղ ջուր է կուտակվում, իսկ ամռանը աստիճանաբար հոսում է այնտեղից: Ներկայումս զգացվում է, որ այդ բոլոր շրջաններում սառցադաշտերի ծավալները կրճատվում են: Հետազոտությունների մեկի տվյալների համաձայն, արդեն մինչեւ 21-րդ դարի վերջը, Ալպյան բոլոր սառցադաշտերի 75 տոկոսը կվերանա:

Սառույցների հալչելը կմեծացնի ամառային եւ աշնանային հեղեղումների հավանականությունը: Իսկ ամռանը կածի երաշտի վտանգը: Զեկուցագրում նշվում է, որ այդ երեւույթի նշաններն առկա են արդեն հիմա:

Բացի դրանից, ՄԱԿ-ի փորձագետները հեղեղումների վտանգ են կանխատեսում աշխարհի տարբեր շրջաններում գտնվող խոշոր քաղաքների եւ ափամերձ գոտիների համար: Փորձագետները կարծում են, որ միայն կլիմայական փոփոխություններին հարմարվելը բավարար չի լինի դրանց բոլոր հետեւանքները հաղթահարելու համար, քանի որ վերջիններիս ծավալներն անընդհատ աճելու են:

Կլիմայական փոփոխությունների հետեւանքներն ամենից շատ կզգան աղքատ երկրներն ու տարածաշրջանները, քանի որ պաշտպանական միջոցներ ձեռնարկելու բավարար միջոցներ չունեն: Ոմանք առաջարկվում է նոր պայմաններին հարմարվելուն զուգընթաց կրճատել վնասակար արտանետումների ծավալները:

ՀԱԿԻՐՔ

Թուրք պատգամավորների նամակը ԱՄՆ Կոնգրեսին

Երեկ Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության 30 պատգամավորներ Հայոց ցեղասպանության բանաձեւի առնչությամբ նամակ են հղել ԱՄՆ-ի Կոնգրեսին: Նրանք, ըստ CNN-Turk-ի, կոնգրեսականներից պահանջել են չխաբվել հայերի անհիմն պնդումներով: Պարզվում է, թուրք պատգամավորները ցեղասպանության բանաձեւի 30 պնդումների դիմաց կոնգրեսականներին են ներկայացրել թուրքական պատմական ընկերության 30 «հակափաստարկները»:

Մութաֆյան պատրիարքը պահանջում է տեղադրել Սբ. Խաչ եկեղեցու խաչը

Պոլսո հայոց Մեսրոպ Բ Մութաֆյան պատրիարքը, գրավոր դիմելով Թուրքիայի վարչապետ Էրդողանին եւ մշակույթի նախարար Քոչին, Վանա լճի Աղթամար կղզու Սբ. Խաչ եկեղեցու գմբեթին խաչ տեղադրելու թույլտվություն է խնդրել: Նա ընդգծել է, որ եկեղեցու համար նախատեսված մետաղյա խաչն իրենք արդեն պատրաստել են:

Այդ մասին ապրիլի 5-ի համարում նշել է «Հուրիեթը»: «Գորշ գայլերի» խոսափող «Ենիչաղ» թերթն էլ նույն օրվա համարում նշում է, որ Մութաֆյան պատրիարքը նամակում Թուրքիայի վարչապետից եւ մշակույթի նախարարից պահանջել է նաեւ Սբ. Խաչվերաց տոնին, որն այս տարի նշվելու է սեպտեմբերի 16-ին, ժամերգություն կատարել Աղթամարի՝ տոնի հետ համանուն եկեղեցում: Այս թերթը միաժամանակ «հիշեցնում» է, որ հայերը Վանի ապստամբության օրերին, երբ անխնա կոտորում էին մահմեդականներին, Աղթամար եկեղեցին օգտագործել են որպես զինանոց: Հ. Ծ.

Իրաք եւ Աֆղանստան կուղարկվեն ամերիկացի 12 հազար պահեստայիններ

ԱՄՆ-ի իշխանությունները մտադիր են Իրաք եւ Աֆղանստան ուղարկել ազգային գվարդիայի 12 հազար պահեստայիններ: Այս մասին հաղորդում է NBC հեռուստաընկերությունը, վկայակոչելով Պենտագոնի աղբյուրներ: Հրամանն արդեն պատրաստ է, մնում է, որ այն ստորագրի ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը:

Մասնագետների կարծիքով, այդ որոշումը մեծ դժգոհություն կառաջացնի Կոնգրեսում մեծամասնություն կազմող դեմոկրատների շրջանում: Ավելի վաղ՝ 2007 թ. սկզբներին իշխանություններն իրաքյան նոր քաղաքականության շրջանակներում արդեն որոշել էին Իրաքում 20 հազարով ավելացնել ամերիկացի զինծառայողների թիվը: Իսկ մարտի 29-ին Կոնգրեսի Վերին պալատը հավանություն էր տվել Աֆղանստանի եւ Իրաքի պատերազմներին հավելյալ 121 մլրդ դոլար հատկացնելու Բուշի պահանջին, այն շաղկապելով 2008 թ. Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերման հետ:

Թուրքիան «Գազ դը Ֆրանսի» հետ բանակցություն ընդհատեց Ցեղասպանության պատճառով



Թուրքիայի, ինչպես նաեւ Բուլղարիայի, Ռումինիայի եւ Հունգարիայի տարածքներում կառուցվելիք «Նաբուկո» գազամուղի ապագան հարցականի տակ է հայտնվել քաղաքական տարաձայնությունների պատճառով: Ապրիլի 5-ին թուրքական պետական «Բոքաս» ընկերությունը ընդհատել է բանակցությունները Թուրքիայի տարածքում խողովակաշարի անցկացումն ստանձնած ֆրանսիական «Գազ դը Ֆրանս» ընկերության հետ:

Թուրք պաշտոնյաների խոսքերով, բանակցությունների վերսկսումը կախված է Հայոց ցեղասպանության հարցում Փարիզի դիրքորոշումից:

2006 թ. հոկտեմբերին Ֆրանսիայի Ազգային ժողովի ընդունած օրինագծի համաձայն, Հայոց ցեղասպանության ուրացումը քրեական պատժելի հանցագործություն է: Վերջնականապես հաստատվելու համար օրինագիծը պետք է ընդունվի նաեւ Սենատում եւ ստանա երկրի նախագահի հավանությունը:

Այս օրենքի ընդունման դեպքում ԵՄ-ին Թուրքիայի անդամակցությունը կերջափակվի:

Բանակցության ընդհատումից 3 օր առաջ «Նուվել դ'Արմենի» հանդեսում տպագրվել էր Ֆրանսիայի նախագահության սոցիալիստ թեկնածու Սեգոլեն Ռուայալի այն հայտարարությունը, որ նախագահ ընտրվելու դեպքում ինքը հավանություն կտա ցեղասպանության ուրացումը պատժող օրենքին:

«Նաբուկո» խողովակաշարը մի քանի երկրների համատեղ նախագիծն է 4,6 մլրդ դոլար ընդհանուր արժողությամբ: Դրա նպատակն է ադրբեջանական գազը եվրոպա հասցնել՝ շրջանցելով Ռուսաստանի տարածքը: Այդ ձեւով պետք է նվազի եվրոպայի կախվածությունը ռուսական գազի մատակարարումից:

«Գազ դը Ֆրանսը» արդեն համաձայնության էր եկել նախագծի մյուս մասնակիցների հետ, եւ ահա Թուրքիան արհեստական խոչընդոտներ է հարուցում: Ընկերության բաժնետոմսերի 80 տոկոսը պատկանում է Ֆրանսիայի կառավարությանը:

«Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ 2006 թ. աշնանը՝ հիշյալ օրինագծի ընդունումից հետո, ֆրանսիական մի շարք ընկերություններ ժամանակավոր վնասներ են կրել Թուրքիայում: Խոսքը մասնավորապես «Կարֆուր» հանրախանութների ցանցի եւ «Տոտալ» նավթային ընկերության մասին է: Իսկ «Կրեդի ագրիկոլ» բանկը հեռացվել է թուրքական բանկի հետ կապված «Օյակ» բանկի ձեռքբերման մրցույթից:

Ֆրանսիական ընկերությունները ներկայումս Թուրքիայում ենթակա են վարչարարական եւ մաքսային քաշքշուկների: Այդտեղ գտնվող Ֆրանսիայի տրանսպորտի նախարարությունը Բոսֆորի նեղուցի տակով Ստամբուլի ասիական ու եվրոպական մասերը երկաթուղով միացնելու խոշոր պայմանագիր է կնքել:

Չնայած թուրքական կողմի սպառնալիքներին, 2006 թ. ընդհանուր առմամբ թուրք-ֆրանսիական առեւտրաշրջանառության ծավալն աճել է 15 տոկոսով, կազմելով 9,4 մլրդ եվրո: Պ. Ա.

Մշակույթ

Հեռավորության զգողականությունը

Երկու աշխարհների միջև

Հակոբ Սարգիսյանի բանաստեղծական աշխարհին պատկերային մտածողությունն է բնորոշ՝ բառի թեթև գծագրումներով ու զգացմունքային-ներաշխարհային մակարդակով: Բանաստեղծությունների ներքին տրամաբանությունը ներաշխարհի մի ուրույն կենսագրություն է ուրվագծում: Բնությանը ներդաշնության ձեռք մեկնած ներքին հավասարակշռությամբ՝ բանաստեղծը թեև իր բազմաթիվ անհանգստություններին, թեթևություն ու անդորրություն է ստեղծում բառերի տարածքներում:

Ժնեւաբնակ մեր հայրենակցի՝ Հակոբ Սարգիսյանի բանաստեղծությունների երրորդ ժողովածուն՝ «Բողբոջին կայծը», լույս տեսավ 2006-ին Անթիլիասում (Բեյրութ)՝ արժանանալով Տանն Կիլիկիո կաթողիկոսության «Գէորգ Մելիքինեցի» գրական մրցանակային հրատարակության: Գիրքը պատվավոր այս մրցանակաբաշխության թվով 66-րդ տպագրությունն է:

Ժողովածուի խորագիրը գեղարվեստական այս նոր հղացումների բանալին է թերեւս. բողբոջի կայծը՝ կյանքի մեջ կյանք վերստեղծելու-վերընձյուղելու մի փորձ է, որն արված է բառի գեղագիտական արժեքի նուրբ զգացողությամբ, դրա իմաստային ներքին շերտերի ճանաչողությամբ եւ գեղարվեստական պատկերաստեղծման վարպետ համադրությամբ: Կյանքը (առօրեականությունը) այնպես գեղեցկորեն է շաղախված աշխարհի էսթետիկ ընկալումներին, որ դժվարանում ես հավատալ, թե հեղինակը մասնագիտությամբ, զբաղմունքով ու հասարակական գործունեությամբ գրական բուն կյանքի մեջ չէ, թեեւ հայտնի են իր մտավորական հետաքրքրությունները, մշակութային, գրական իրողությունների ու երեւույթների նկատմամբ իր վերաբերմունքն ու իմացությունները: (Նա պարբերաբար աշխատակցել է Հայաստանի եւ սփյուռքի մամուլին՝ «Շիրակ», «Առագաստ», «Կամար», «Գարուն», «Զարթօնք», «Գրական թերթ», «Պայքար», «Նոր օր»... Այժմ ղեկավարում է շվեյցարական առեւտրային մի հաստատություն, միաժամանակ վարում է Իզմիրլյան հիմնադրամը, որի ավագ փոխնախագահն է):

Հայերենով ստեղծագործելը բանաստեղծի համար կենսականորեն անհրաժեշտ ներքին մթնոլորտ է: Այդ մենախոսություններն օտար լեզվական միջավայրում մայրենիով շփման եզրեր չունեցող հայ մարդու համար մարմնավորում ստանում են բանաստեղծական մտածելաձեւում ու գունալեցուն պատկերակառույցներում: Իր հարցազրույցներից մեկում տաղանդավոր գրող Կարիկ Պասմաճյանն ասում էր. «Հայ գրողն այն հազվագյուտ թռչունն է, որ օր մը պիտի սպառի, պետք է այժմեն գուրգուրանք անոր վերջին ներկայացուցիչներուն վրա: ... Ամիսներով կը նստեի ու գրաստային աշխատանքի կլծվեի մեկ գրի համար, որպեսզի ամսվան վերջը տան վարձն ալ չկարենայի տալ: Կըլլա՞յ, ըլլալիք բա՞ն է: Ինչո՞ւ: Որովհետեւ հայ գրող էի: Որովհետեւ հայառ էի, կուզեի մայրենի լեզվով գրել»:

Հայերենով խոսելն ու մտածելը լռեցնելու պարտադրված հոգեվիճակ. դժվար է հասկանալ: Հայրենիք ամեն անգամ վերադարձին Հակոբ Սարգիսյանն էլ նման խոստովանություններ հաճախ է անում: Սակայն բանաստեղծական ինքնադրսեւորումները միայն հարազատ լեզվական միջավայր ստեղծելու անհրաժեշտությունից չեն, այլեւ աշխարհին ու կյանքին գեղարվեստորեն արձագանքելու մտածողությունից ու պահանջից: Նրա գրելաոճը, արտահայտչաձեւերը միանգամայն հարազատ են ժամանակակից պոեզիային: Շատ հետաքրքրականորեն զուգակցված ու լրացնում են միմյանց միտքն ու զգացմունքը, փիլիսոփայությունն ու աղերումը, կյանքն ու գեղագիտությունը, տիեզերքի ամբողջությունն ու մարդկային «ես»-ի մասնիկը. **«Տիեզերքին պատշաճը չէ երկրագունտին ընթացքը փոխել/ այդ կը պատկանի մարդուն մէջ աղրող կաթիլ մը յոյսին»: Վերջալույսի մակույկի տխուր գոյների փոխարեն նա ակնկալում է «մէկ հատ բառէն ծլող բողբոջը/ պոռթկացող բոյրը/ բողբոջին կայծը»:**

Բանաստեղծությունների զգալի մասը հայաստանյան արձագանքներ են, որոնցում հայրենիքի ներկայությունը հուշի ձեւով վերարտվում, վերակենդանանում է. ահա «Քարերու երկիր»-ը՝ սմանչելի մի բառաանդակ, որ թեեւ թվագրված չէ, բայց Մեղրիի ուղեւորության տպավորությամբ է ասես գրվել՝ մոխրագույն սրածայր ժայռերի մտազբաղ, խստահայաց արտահայտություններով: **«Քարերը իմ տունս են/ իմ օդա/ շիրիմս/երբ աշխարհը լքեմ քարերու հրաւէր կը սանամ»:** Երկիրը քարերի հետ ասոցացվում է նաեւ «Կը պակսիմ» բանաստեղծության մեջ. քարի հետ զրույցի բռնված բանաստեղծը նրա անշարժ ձեւերում տկունության ջիղ է որոնում, իրեն չլքող մշտական տագնապով՝ **«թէ ինչո՞ւ/ նոյն հինաւուրց հողին վրայ/ նոյն կաղտաւուն երկինքին տակ/ քարերը շարունակ կ՚աւելնան/ իսկ մենք... կը պակսինք»:**

Հայրենիքի ներկան ու ապագան խորապես ապրողի, հոգու զինվորի լուռ աղոթք է «Այցելութիւն Եռաբլուր» բանաստեղծությունը՝ ժողովրդի պատմության ու նախնիների կենսագրության մեր ժամանակակցի մի վերագնահատում: Այնտեղ հանգչող մահն իմաստավորում է ապրողների երազը, բայց սթափությունն իրականության է կոչում. **«Գիտցի՛ր որ գերեզմաններդ լայնցան բայց ոչ երկիրդ/ գիտցի՛ր, որ դրօշակներու գոյները կը փոխուին/ ոչ թշնամիդ/ բարեկամներդ համակրութիւն ղրկեցին քեզի/փոխան փամփուշտի/ գիտցի՛ր թէ դուն բարեկամն ես/ միայն դուն քեզի»:** Ահավասիկ պատգամ հարուստ կենսագրության փորձառությունից:

Ահա Արարատի առեղծվածային կերպափոխումների խորհուրդ- ժամանակի մեր ճանապարհը եւ նրա լանջերին ու շուրջը ժողովվածներիս սարսուռը. **«անյուսութեան ձորին մէջ առանձին չեմ/ դեռ սաւառնելու տենչ մը կայ/ որ քեզմէ մեծ է/ քեզ դիտելով գրի կ՚առնեմ յաւերժին գիծերը/ քեզ կը գծեմ ցաւի շուքերով»:**

Հայրենակարոտությունը հեռավորության պատատառներին ստեղծում է Հայաստան երկրի ճշմարտակերտ մի համապատկեր, որ իբրեւ բառաանդակ ու խոսմանկար գունագեղվում է Հ. Սարգիսյանի հայրենիքը, որի լեռներն ու լեռնագագաթը հաճախ հիշեցնում են իր բնակավայրի՝ շվեյցարական բնությունը: Ահա ինչպես է «նկարում» Մեղրին, որտեղ քարերն անձրեւի պես են կաթկթում. **«Եկեղեցին ժայռերու վրայ ժամանակի պահակն է/ իր գմբէթը կը նոյնանայ ասուռնոյ հետ»,** իսկ Արագածը «սառած երաժշտություն է», որի «եռացող սրտի» ունկնդիրն է ինքը:

Բազմաճառագայթ կյանքը մայրամուտի մակույկին է հասնում ու հետ դառնում, զգում բողբոջի կայծն-ու բույրը, հետո նիրհում իր պատյանի մեջ, որովհետեւ միեւնույն է, անխուսափելիորեն իջնելու է առօրեականության ձանձրույթը, որն, ասես, դանդաղ մահ է, անշարժություն, որտեղ իրերի լռությունը՝ ներքին ամլության է դատապարտում. **«արեւի մեկնումէն եւ ծերացած մայթին միջեւ բնակարան/ ծեփի փոխան պատերուն մէջ զայրոյթ բողոք եւ սէր/ երակներու պէս/ հոսող/ յորդող/ անընդմէջ գոյութիւն/ երազի պէս հեղասահ/ սրտին արձակուած գնդակի պէս ճանդիչ առօրեայ»:**

Բանաստեղծի գտած իրականությունը ճանաչողության ներքին կտավներին այլ նշանագրեր ու հետքեր է թողնում, ստեղծում բացակա ու ներկա մի աշխարհ՝ նույնքան իրական ու մտացածին, հեշտանում է բանաստեղծելը, որովհետեւ **«թուղթի բարիքին պէտք չունիս/ օդին մէջ ամպերու մելանով կը գրես»,** եւ դյուրացնում է ապրելը, որովհետեւ **«լոյսին ձեռքը մեզ վերսին ստեղծեց»:**

Երկարատեւ ներսուզումներն ու խոկումները գերիրապաշտական տրամադրություններ ու վիճակներ են արձանագրում. այստեղ բանաստեղծական պատկերները տարածաչափական այլ բնույթ են ձեռք բերում, իմաստային նոր երանգներն ավելի բազմաշերտ են դառնում: Դրա լավագույն արտահայտություններից է «Գերիրապաշտը», երբ քայլերի արձագանքն իր ընկալումից հեռանում է այնքան, որ արեւի սրինգով է հմայում իր ներկայությունը հանդուրժողներին. **«Դուն ժամանակի տան մէջն ես միայն դուն քեզի հետ/ բայց իրերը լքեցին իրենց մարմինը»:**

Իրավիճակ. կյանք, ժամանակի ավերակների մեջ հին ժամացույցի ճռինչ. **«Ծառերուն աւունը բանտարկած է յառաջիկայ կանաչը/ եւ հողէ երկինքը ճակատագրին քրիջն է/ քնթիծաղը պատանդ կ՚առնեմ որքէս ապրելու ոճ/:** Շատ հարազատ է ինքն իրեն, իր պահվածքին, ներաշխարհին, իր մտածումներին: Հ. Սարգիսյանին բնորոշ խոսքի լրջախոհությունն ու ինքնահատուկ լռությունը հավասարակշիռ բառի բանաստեղծական դրսեւորումներում գեղարվեստական արժեք են ստանում: Իր բանաստեղծությունների արդեն երեք ժողովածուները՝ «Մկրատի շեղբին վրայ» (Բեյրութ, 1995), «Անկշռելին» (Երեւան, 2004) եւ «Բողբոջին կայծը» (Անթիլիաս, 2006) վստահաբար հարուցանում են ժամանակակից հայ պոեզիան նոր եւ թարմ մտածողությամբ:

ՄԵԼԻՆԱ ԲԱԳԱԼՅԱՆ

ՍԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Բացահայտեմ կնոջ առեղծվածը

Մենք հիանում ենք երկնային աստղերով ու լուսատուներով, որովհետեւ նրանք փայլուն են ու անհասանելի են: Սակայն երկրագնդի վրա կա ավելի ճնշուած փայլ եւ ավելի խորունկ գաղտնիք: Դա կին արարածն է: Հաճախ կնոջ սիրտը նմանեցնում են բյուրեղապակյա բաժակի: Ասում են՝ **եթե այն փշրես, երբեք չես վերականգնի: Իսկ նրա հոգին հանելուկ է, որի պատասխանը գտնելը շատ դժվար է:**

«Կնոջ ներաշխարհը անչափ բարդ է եւ հակասական: Կինը ունի պատկերավոր մտածողություն եւ գունեղ երեւակայություն: Նա ավելի զգացմունքային է, ավելի հուզական: Կինը ունի շնորհ, որը հատուկ է բացառապես իրեն. դա սուր արտահայտված նախազգացումն է»:

Կնոջ ամենամեծ եւ ամենագեղեցիկ առաքելությունը կյանքում մայրանալն է: Նա երազային եւ նուրբ էակ է: Կնոջը հաճույք են պատճառում ուշադրության փոքրիկ ակնարկները, սիրո ամենատարբեր դրսեւորումներն ու ռոմանտիկ խոսքերը:

«Տարբեր են կանանց եւ տղամարդկանց երազանքները: Տղամարդկանց երազանքները գրեթե միշտ նյութական են, կանանցը՝ իդեալիստական եւ հուզական: Յուրաքանչյուր կին սրտի խորքում ունի մեծ ու նվիրական երազանք՝ սիրելի տղամարդու համար լինել անսահման-սիրելի, միակ ու անփոխարինելի»:

Կինը թերեւս բնությունից ստեղծված ամենահմայիչ ու յուրահատուկ առեղծվածն է: Նրանցից յուրաքանչյուրը անհասականություն է եւ մյուսին չի կրկնում: «Կնոջ առեղծվածը հնարավոր չէ բացահայտել, քանի որ հենց այդ առեղծվածի բացահայտման նպատակն է այդպես ձգում դեպի կանանց հակառակ սեռի ներկայացուցիչներին»:

Ժամանակակից կնոջ կյանքը նման չէ մոխրագույն ու տաղտկալի ֆիլմի: Այն ավելի գունեղ է, լուսավոր ու հետաքրքրական:

«Ժամանակակից կինը ավելի կայացած է, ավելի անկաշկանդ իր որոշումների, վարքի դրսեւորման ձեւերի ու հարաբերությունների մեջ: Նա ազատ է բարդույթներից, ունի ավելի լայն հնարավորություններ կատարելագործման, ինքնադրսեւորման եւ ինքնահաստատման սոցիալական հասարակության մեջ»:

Թվում է, թե կինը ունի կատարյալ երջանկության բոլոր նախադրյալները, սակայն...

«Կատարյալ երջանկության համար յուրաքանչյուր կնոջը խանգարում է մեկ այլ կնոջ առկայությունը, եւ պակասում է միակը լինելու համոզմունքը»:

Հայտնիներից մեկը մի առիթով նշել է. «Կանայք տարօրինակ էակներ են»: Պետք չէ նրանց հասկանալ, պետք է սիրել ու գնահատել:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«21-րդ դարի հայ կնոջ կերպարը»

Վճռական, ինքնուրույն, ազատ ու անկախ եւ միաժամանակ հմայիչ ու հրապուրիչ հայ կինը, ահա այսպես էր պատկերված «21-րդ դարի հայ կնոջ կերպարը» ցուցահանդես-մրցույթում: Այն կազմակերպվել էր Ռուսական արվեստի թանգարանում Կանանց դաշինքի եւ Հայաստանի նկարիչների միության նախաձեռնությամբ:

Դեռ 4 ամիս առաջ կազմակերպիչները հայտարարեցին պլակատի, ծաղրանկարի եւ լուսանկարի երջանկներում մրցույթ-ցուցահանդես: Յուրաքանչյուր ոլորտում սահմանված էր երեք նոմինացիա.

Առաջին նոմինացիան որոշում էր ժյուրին, երկրորդը՝ այցելուները, որոնք քվեարկելու էին իրենց նախընտրած արվեստագետի օգտին: Իսկ երրորդ նոմինացիայում հանձնվում էր 2-ական խրախուսական մրցանակ:

«Սովորաբար նկարիչների միությունը նախապես ընտրում է լավագույն աշխատանքները, բայց այսօր ներկայացված են պրոֆեսիոնալ նկարիչների, եւ սկսնակների, եւ ինքնուս նկարիչների աշխատանքներ: Ստացվել է բավականին խայտաբղետ, բայց այնուամենայնիվ չափազանց հետաքրքրական մի ցուցահանդես», ասում է Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը:

Ինչպե՞ս է պատկերացնում «21-րդ դարի հայ կնոջ կերպարը» հարցին ԱԺ պատգամավոր Շավարշ Քոչարյանը պատասխանեց, որ կինը իրավահավասար է տղամարդուն, լինի քաղաքական եւ թե իրավական հարցերում: Իսկ ինչ վերաբերում է ցուցահանդեսին, պատգամավորն ավելացրեց. «Բավականին հուզող ցուցահանդես էր՝ ե՛ւ հումորն է տեղը, ե՛ւ արվեստը»:

ԼՈՒԻԶ ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ

Փայտի սիմֆոնիա Սուրբ Զատկի նախօրյակին

Ապրիլի 6-ին Նարեկացի արվեստի միության ցուցասրահում տեղի ունեցավ հայր եւ դուստր Սաֆարյանների ստեղծագործությունների ցուցահանդեսը: Թեմատիկան հետաքրքրական էր ու յուրատիպ՝ փայտի սիմֆոնիա եւ Զատիկ:

Նարեկ Սաֆարյանը փայտագործությամբ զբաղվում է երկար ժամանակ: Սկզբում դա նման էր հոբբիի, իսկ այսօր այն դարձել է արդեւակերպ: «Փայտի հետ աշխատելը շատ հետաքրքիր է եւ հաճելի: Եթե մի օր չեմ աշխատում, օրս կորած եմ համարում»:

Նարեկ Սաֆարյանի աշխատանքներում հատկապես աչքի է ընկնում խաղողի ողկույզներով զարդարված կոմպոզիցիան, որի վրա աշխատել է 8 ամիս: Երկարատեւ աշխատանքն ու համբերությունը բերել է նրան հաղթանակի բերկրանքը: ԱՄՆ-ում տեղի ունեցող միջազգային փառատոնի ժամանակ Նարեկի կոմպոզիցիան գրավել է առաջին տեղը:

Լարիսա Սաֆարյանը ավելի քան 4 տարի ձվերի վրա փորագրում է տարբեր պատկերներ, ստեղծում կոմպոզիցիաներ, որոնք հաճույք են պատճառում ե՛ւ իրեն, ե՛ւ հանդիսատեսին:

Լարիսայի կոմպոզիցիաները նրբության, մտքի խորաթափանցության ու համբերության արդյունք են: «Ստեղծագործում եմ, որպեսզի մարդկանց հաճելի պահեր եւ ժպիտ պարգեւեմ: Եվ երբ հանդիսատեսը դիտում ու գնահատում է իմ աշխատանքները, ես դառնում եմ ամենաերջանիկ մարդը»:

Հ. Հ.

ԾԱՂՐԱՆԿԱՐԳԻ ԱՅՔԵՐՈՎ

Հիմնվեց արագավազքի Հայաստանի ֆեդերացիա

Այն եւս գլխավորում է ձիասպորտի ավիրյալ Հայրապետ Հայրապետյանը

Երեկ «Արարատ» հյուրանոցում ձիասպորտի հանրապետական ֆեդերացիայի ղեկավարությունը մամուլի ասուլիս էր կազմակերպել: Առիթը նոր՝ արագավազքի Հայաստանի ֆեդերացիայի ստեղծումն էր: Ֆեդերացիայի հիմնադիր նիստում կազմակերպության ղեկավար էր ընտրվել ձիասպորտի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Հայրապետ Հայրապետյանը, փոխնախագահ՝ Արմեն Քալանթարյանը, պատասխանատու քարտուղար՝ Գագիկ Վարադյանը: Նաեւ ընտրվել էր 9 հոգուց բաղկացած գործկոմի կազմ:

Ինչպես տեղեկացրեց նորընտիր ֆեդերացիայի նախագահ Հայրապետ Հայրապետյանը, արագավազքը ձիասպորտի չորս մրցաձեւերից մեկն է եւ մեծ մասսայականություն է վայելում աշխարհում: Հայաստանում այս մրցաձեւից մրցումներ են անցկացվել նախորդ դարում՝ 1949-1959 թթ.: Հետագայում ձիարշավարանում ծագած հրդեհը պատճառ դարձավ, որ մարզաձեւը մոռացության տվի անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով: Չնայած բուն պատճառն այլ էր: Սովորդային տարիներին սովորաբար էլիտար մարզաձեւերը բուրժուական էին համարվում եւ ամեն կերպ խոչընդոտում էին դրանց զարգացմանը:

Նշենք, որ արագավազքը զգալիորեն տարբերվում է արգելքների հաղթահարում մրցաձեւից: Երկու մրցաձեւում սովորաբար տարբեր ձիեր են օգտագործվում: Արագավազքում օգտագործվող ձիերի տարիքը տատանվում է 2-5 տարեկանների սահմանում: Իսկ նժույգավարներն էլ որպես կանոն թեթեւ քաշային մրցեր լինեն, ինչը եւս նպաստում է արագությանը:

Ի դեպ, արագավազքից այսօր ձիարշավարանում անդրանիկ մրցումներն են անցկացվելու: Կտրվի երեք մեկնարկ: Մարզիկները կմրցեն 1000, 1200 եւ 1400 մ մրցատարածություններում: Նշենք, որ մեր ձիարշավարանի վազքուղին համապատասխանում է միջազգային չափանիշներին. երկարությունը 1800 մետր է, լայնությունը՝ 16 մետր: Առայժմ հանդիսակաների համար նախատեսված տրիբունան պատրաստ չէ: Մինչեւ սեպտեմբեր շահագործման կհանձնվի 1500 տեղանոց տրիբունան:

Թեեւ արագավազությունն օլիմպիական մարզաձեւ չէ, սակայն հետաքրքրասիրությունը դրա նկատմամբ աշխարհում շատ մեծ է: Սովորաբար նման մրցումներում խաղադրույքներ են կատարվում, ինչը Հայաստանում դեռեւս ընդունված չէ: Արագավազության մրցումներն անցկացվելու են միջազգային ֆեդերացիայի կանոններով, տարիքային տարբեր խմբերով եւ տարբեր ցեղատեսակներով: Ակումբներն իրենք են մրցումներին ներկայանալու ձիերով:

Նորաստեղծ ֆեդերացիայի առաջնահերթ խնդիրը մարզաձեւը Հայաստանում արմատավորելն ու դրա մասսայականացումն է: Արդեն այժմ ձիասպորտի գործող ակումբներում այդ մարզաձեւով սկսվելու են պարապմունքները եւ երեխաները հնարավորություն կունենան ընտրություն կատարելու: Ֆեդերացիան նաեւ հայտ է ներկայացնելու մարզաձեւի միջազգային ֆեդերացիային անդամագրվելու:

ՖՈՏՈԼՈՒՐ

Ասուլիսում խոսք գնաց նաեւ ձիասպորտի ֆեդերացիայի, մեր մարզիկների առաջիկա խնդիրների մասին: Նշվեց, որ այժմ ձիասպորտի Հայաստանի ֆեդերացիան մարզաձեւի ասիական միջազգային ֆեդերացիայի անդամ է, որի նախագահն է Ղազախստանի ներկայացուցիչը: Սակայն ինչպես նշեց Հայրապետ Հայրապետյանը, այս չորս տարիների ընթացքում ինքը դեռեւս չի հանդիպել միջազգային ֆեդերացիայի նախագահի հետ եւ անձամբ չի էլ ճանաչում նրան: Ասիայում կազմակերպվելիք մրցումներին մեր մարզիկների մասնակցությունը նպատակահարմար չէ: Ուստի մեր ֆեդերացիան ցանկանում է անդամագրվել եվրոպական ֆեդերացիային: Շուտով կայանալու է եվրոպական ֆեդերացիայի համաժողովը, որին մասնակցելու է նաեւ մեր ֆեդերացիայի պատվիրակությունը, որը դիմելու է եվրոպական ֆեդերացիային անդամակցելու խնդրանքով: Մանավանդ, որ Փարիզում մենք ունենք մարզաբազա, հիմնվել է «Արարատ» ակումբը, որտեղ մարզվում են մարզիկներն ու նախապատրաստվում մրցումների: Ըստ Հայրապետ Հայրապետյանի, ունենք պրոֆեսիոնալ լավ մարզիկներ, որոնցից լավագույնները կընդգրկվեն Հայաստանի հավաքականում: Մեզ մնում է հաջողություն ցանկանալ նորաստեղծ ֆեդերացիային իր նոր ձեռնարկումներում: Ջիասպորտը շնորհիվ գործարար Հայրապետ Հայրապետյանի հանրապետությունում նոր զարթոնք է ապրում եւ ասիճանաբար վերականգնվում են բարի ավանդույթները: Կասկած չկա, որ նրա ղեկավարած նոր ֆեդերացիան էլ կնպաստի արագավազության զարգացմանը:

Իսպանական թիմերի հաջողությունը

ՈՒԵՖԱ-ի գավաթի քառորդ եզրափակիչ առաջին հանդիպումներում բավական հաջող հանդես եկան իսպանական թիմերը: ՈՒԵՖԱ-ի ներկայիս գավաթակիր «Սեւիլիան» սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնեց «Տոտենհեմին»: Խաղասկիզբն անհաջող էր դաշտի տերերի համար, որոնք արդեն 2-րդ րոպեին գոլ բաց թողեցին: Սակայն հետագայում Կանուտեն ու Կերժակովը գրավեցին «Տոտենհեմի» դարպասը:

Ամենամեծ անակնկալը մատուցեց «Օսասունան», որը հյուրընկալվելիս 3 անպատասխան գնդակ խփեց «Բայերի» դարպասը եւ գործնականում ապահովեց հաջորդ փուլի ուղեգիրը:

Իսպանական երրորդ ակումբն էլ՝ «Էսպանյոլը» սեփական հարկի տակ 3-2 հաշվով առավելության հասավ «Բենֆիկայի» նկատմամբ: Միակ ոչ-ոքին գրանցվեց «Ալկմաարի» եւ «Վերդերի» մրցավեճում:

Բրայանտը գերազանցեց Ջորդանի ցուցանիշը

Բասկետբոլի ազգային ընկերակցության «Լեյկերս» թիմի հարձակվող Կոբի Բրայանտը դարձավ լիգայի պատմության մեջ ամենաերիտասարդ բասկետբոլիստը, որը հասել է 19 հազար միավորի սահմանագիծը: «Դենվերի» հետ խաղում նա վաստակեց 39 միավոր եւ մարզական իր կարիերայում վաստակած միավորների քանակը հասցրեց 19013-ի: Բրայանտը խաղի օրը 28 տարեկան 223 օրական էր: Նախկին ռեկորդը պատկանում էր հանրահայտ Մայքլ Ջորդանին, որը 19 հազար միավորի սահմանագիծը հասել էր 29 տարեկան 62 օրականում: Իսկ ընդհանրապես բասկետբոլի ազգային ընկերակցության հանդիպումներում առաջինը 19 հազար միավոր է վաստակել լեգենդար բասկետբոլիստ Ուիլտ Չեմբերլենը: Ընդհանուր առմամբ 42 բասկետբոլիստի է հաջողվել մարզական կարիերայում վաստակել 19 հազարից ավելի միավոր:

Մերգո Չախոյանը ցմահ որակազրկվեց

Գյումրեցի անվանի ծանրորդ, մինչեւ 85 կգ քաշային կարգում 2003 թ. աշխարհի չեմպիոն Սերգո Չախոյանը, որ ներկայում բնակվում եւ հանդես է գալիս Ավստրալիայում, ցմահ որակազրկվել է: Նրա արյան անալիզի «Բ» փորձանմուշում հայտնաբերվել է բենզիլպիպերազին արգելված խթանիչի քանակություն: 37-ամյա ծանրորդը դոպինգ սուգման ենթարկվեց 2005 թ. Մելբուռնում կայացած «Համագործակցության խաղերում»:

Սերգո Չախոյանն արդեն 2-րդ անգամ է մեղադրվում արգելված խթանիչներ օգտագործելու համար: Նա մեկ անգամ արդեն որակազրկվել էր երկու տարով 2001 թ. Բրիսբենում կայացած Բարի կամքի խաղերի ժամանակ արգելված խթանիչ օգտագործելու համար: Հակադոպինգային համաշխարհային գործակալության գործող կարգի համաձայն, երկրորդ անգամ արգելված խթանիչ օգտագործելու դեպքում մարզիկը մեխանիկորեն որակազրկվում է ցմահ:

ՖՈՒՏԲՈԼ

«Բենսոնիսը» չդիմացավ չեմպիոնի ճնշմանը

Երկու հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Հայաստանի գավաթի խաղարկության քառորդ եզրափակիչ փուլը: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Իջեւանի նորաստեղծ «Բենսոնիսի» մրցավեճը երկրի չեմպիոն «Փյունիկի» հետ: Բանն այն է, որ նախորդ փուլում «Բենսոնիսը» պայքարից դուրս էր մղել բարձրագույն խմբի ներկայացուցիչ «Գանձասարին» (0-1, 2-0): Սակայն չեմպիոնին արժանի դիմադրություն չհաջողվեց ցույց տալ: Արդեն 12-րդ րոպեին «Փյունիկի» նորեկ Կարեն Դոխոյանը, որը 7 տարի «Կոիլյա Սովետովում» խաղալուց հետո վերադարձել է հայրենիք, բացեց հաշիվը: Ընդմիջումից հետո փյունիկցիները եւս երեք գոլ խփեցին ու խոշոր հաշվով (4-0) հաղթանակ տարան՝ գործնականում լուծելով հաջորդ փուլ մտնելու խնդիրը: Գոլերի հեղինակներ դարձան Ալեքսանդր Պետրոսյանը, Տիգրան Ղարաբաղյանն ու Լեւոն Փաչաջյանը:

Քառորդ եզրափակիչ մյուս խաղում «Արարատը» Արարատի «Արմֆ» մարզադաշտում հյուրընկալել էր «Ուլիսին»: Արարատցիների կազմում, որակազրկումից հետո նոր մրցաշրջանում իր անդրանիկ խաղն անցկացրեց թիմի ռմբարկու Նշան Երզրումյանը: Հենց նա էլ դարձավ հանդիպման հերոսը: Նշանը 29-րդ րոպեին իրացրեց 11 մ հարվածը՝ բացելով խաղի հաշիվը: 74-րդ րոպեին նա 2-րդ գոլը խփեց՝ ամրապնդելով «Արարատի» հաղթանակը: «Արարատը» եւս հաջորդ փուլ դուրս գալու լուրջ հայտ ներկայացրեց: Պատասխան հանդիպումները կկայանան ապրիլի 10-ին: Հիշեցնենք, որ նախորդ օրը կայացած երկու հանդիպումներն էլ ավարտվել էին խոշոր հաշիվներով. «Միկա»-«Շիրակ»՝ 4-1, «Բանանց»-«Կիլիկիա»՝ 5-1:

Էլինա Դանիելյանը շարունակում է հաղթարշավը

Դրեզդենում ընթացող շախմատի Եվրոպայի անհատական առաջնությունում հաղթարշավն է շարունակում Էլինա Դանիելյանը: Երրորդ տուրում նա նոր հաղթանակ տարավ՝ առավելության հասնելով Օկսաննա Վոզովիչի նկատմամբ: Այժմ Դանիելյանը 3 միավորով Տատյանա Կոսինցեւայի, Զեյնաբ Մամեդյարովայի, Կարմեն Վոիչուի, Անտոնետա Ստեֆանովայի, Աննա Մուզիչուկի, Եկատերինա Աթալիկի հետ գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

Կանանց մրցաշարի մեր մյուս երկու մասնակիցները միասին ընդամենը կես միավոր վաստակեցին: Այն իր օգտին գրանցեց Լիլիթ Մկրտչյանը՝ ոչ-ոքի խաղալով Թուրկան Մամեդյարովայի հետ: Իսկ ահա Սիրանուշ Անդրեասյանը սպիտակներով զիջեց Էլիզաբեթ Պյոտչին: Լիլիթն իր օգտին 2 միավոր է գրանցել, իսկ Սիրանուշն ունի մեկ միավոր:

Տղամարդկանց մրցաշարում հայ շախմատիստներից առավել հաջող են խաղում Ռաֆայել Վահանյանը, Արտաշես Մինասյանն ու Սերգեյ Մովսիսյանը, որոնք վաստակել են 2,5-ական միավոր: Վահանյանը ոչ-ոքի խաղաց Տիգեր Հիլարդի հետ, իսկ Մինասյանը հաղթեց Էդուարդ Պորոխին: Սերգեյ Մովսիսյանն էլ իր պարտիան ավարտեց ոչ-ոքի:

Երրորդ տուրը հաջող էր նաեւ Արման Փաշիկյանի համար, որը սպիտակներով հաղթեց 3ակուտ Էրթուրանին: Անդրեասյան-Լազնիկա, Լանդենբերգուե-Սարգսյան, Սանիկիձե-Ասրյան, Անտասյան-Ռոչա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Անհաջողության մատնվեցին Տիգրան Պետրոսյանն ու Տիգրան Քոթանջյանը, որոնք զիջեցին համապատասխանաբար Անդրեյ Վոլոկիտինին ու Ալեքսանդր Մոիսեենկոյին:

Տղամարդկանց մրցաշարում աղյուսակը 3-ական միավորով գլխավորում են հինգ շախմատիստներ՝ ուկրաինացիներ Անդրեյ Վոլոկիտինը, Ալեքսանդր Մոիսեենկոն, Ալեքսանդր Բերելովիչը, ռուսաստանցի Ալեքսանդր Գալկինն ու ռումինացի Քրիստիան Ժիանուն: 56 շախմատիստներ, որոնց թվում են Վահանյանը, Մինասյանը, Մովսիսյանը, վաստակել են 2,5-ական միավոր: Պետրոսյանը, Անդրեասյանը, Քոթանջյանն ու Փաշիկյանը ունեն 2-ական միավոր: Նրանցից կես միավոր պակաս են վաստակել Ասրյանը, Սարգսյանն ու Անտասյանը:

Մրցաշրջանի շեմին Տալլինի «Արարատը» հանդիպեց երկրպագուների հետ

«Ազգը» մեկ անգամ չէ, որ անդրադարձել է Տալլինի «Արարատ» ֆուտբոլային թիմի հաջողություններին: Հիշեցնենք, որ անցած մրցաշրջանում հանդես գալով Էստոնիայի ֆուտբոլի առաջնության 3-րդ խմբում, Ավետիք Հայրապետյանի սաները մեծ վերելքով անցկացրին հանդիպումները եւ նվաճեցին 2-րդ խմբում հանդես գալու իրավունք:

Եվ ահա նոր մրցաշրջանի շեմին ակումբի ղեկավարությունը հանդիպում էր կազմակերպել թիմի երկրպագուների հետ: Այն սկսվեց ֆուտբոլային մրցախաղով, որում «Արարատը» մրցեց իր երկրպագուներից կազմավորած թիմի հետ: Հանդիպումն անցկացվեց 5 ասողանի «Կոտկա» ծածկած մարզադաշտում, որի սեփականատերն է Գարիկ Իկոնյանը: Հետաքրքրական մրցապայքարում անցած խաղում 12-9 հաշվով հաղթեցին արարատցիները: Հանդիպման լավագույն խաղացողներ ճանաչվեցին Միխայիլ Բելովը («Արարատ») եւ Հարությունյանը (երկրպագուների թիմից):

Խաղից հետո կայացավ թիմի երկրպագուների հետ «Արարատի» ֆուտբոլիստների հանդիպումը, որի ժամանակ ակումբի նախագահ Ալբերտ Ստեփանյանն ու գլխավոր մարզիչ Ավետիք Հայրապետյանը ծանոթացրին նոր մրցաշրջանում թիմի ծրագրերին ու խնդիրներին: Արարատցիներին ողջունեցին եւ նոր մրցաշրջանում հաջողություններ մաղթեցին Էստոնիայում Հայ առաքելական եկեղեցու հոգեւոր առաջնորդ տեր Գառնիկը, Տալլինի հայ համայնքի ղեկավար Ռազմիկ Իվանյանը, «Նաիրի» հայկական ընկերության անդամ Վալենտինա Ազարումյանը: Էստոնիայի հայերի ընկերության նախագահ Գարիկ Իկոնյանն «Արարատ» ակումբին պարգեւատրեց հուշադիպլոմով, իսկ «Արարատ» ընկերությունը ոսկե կրծքանշաններ հանձնեց ակումբի նախագահ Ալբերտ Ստեփանյանին ու գլխավոր մարզիչ Ավետիք Հայրապետյանին:

Ապրիլի 7-ին մեկնարկում է ֆուտբոլի Էստոնիայի 2-րդ խմբի առաջնությունը: Այսօր անդրանիկ խաղում Տալլինի «Արարատը» հյուրընկալվելիս կմրցի «Նիմմե Կալյու-2» թիմի հետ: Ապրիլի 15-ին արարատցիները սեփական հարկի տակ կհյուրընկալեն Տալլինի «Դինամոյին», ապա ապրիլի 22-ին մրցակցի դաշտում կմրցեն «Կալեւի» հետ: Ապրիլի վերջին հանդիպումն «Արարատը» կանցկացնի «Կիվիլի Տամե» թիմի հետ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

Երեւանի քաղաքապետարանը առարկում է

Ոաումնասիրելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության 2006թ. արդյունքների ամփոփման պաշտոնական զեկույցում բերված տվյալները, չենք կարող համաձայնել այնտեղ կատարված եզրակացությունների, օգտագործված որակումների, կատարված ընդհանրացումների եւ մանավանդ այն խորագչական ձեռագրի հետ, որ կիրառվում էր այդ կաղակցությամբ սույն թվականի ապրիլի 4-ին հրավիրված մամուլի ասուլիսում:

Այսօր Հայաստանի մայրաքաղաքում ընթանում է վերականգնման եւ զարգացման աննախադեպ գործընթաց: Կիսակիր դարձած բազմաբնակարան շենքերի ամրացումը տասնամյակներ շարունակ չէր իրագործվում, եւ միայն վերջին տարիներին, երկրի տնտեսական աճին զուգընթաց, կառավարության կողմից հատկացված եւ հեռանկարային ծրագրերին համապատասխան այն իրականություն դարձավ եւ զարգանում է տարեցտարի աճող թափով: Սա խոշոր եւ ծախսատար սոցիալական ծրագիր է, որի միակ ուղղվածությունը բնակչության ամենաանհրաժեշտ՝ բնակարանային անվտանգության եւ ապահովվածության խնդիրն է: Մյուսը՝ քաղաքի կենտրոնի խարխուլ թաղամասերի իրացման եւ վերակառուցման ծրագրերն են, որոնց շնորհիվ այսօրվա դրությամբ արդեն շուրջ 1500 ընտանիք բարելավել է բնակարանային պայմանները: Նրանց մեջ բողոքողների քանակը կազմում է 1-2%: Շահերի բախում եւ դժվարություններ միշտ լինում են ցանկացած խոշոր իրագործումների գործընթացում: Իհարկե, դա եւս պետք է բացառել, որովհետեւ խոսքը մեր քաղաքացիներին է վերաբերում: Եվ մենք պատրաստ ենք համագործակցելու այս հարցում շահագրգիռ բոլոր կազմակերպությունների հետ: Խնդիրը դրանք հավասարակշիռ կերպով ճնշարկելու եւ ճիշտ որակումներ տալու մեջ է:՝

Զեկույցում տեղ են գտել անհիմն ենթադրություններ ՀՀ սահմանադրական դատարանի 18. 04. 2006 թ. որոշման պահանջների կատարման ուղղությամբ, առանց նկատի առնելու, որ այդ որոշումից հետո ընդունվել են նոր իրավական ակտեր, որոնցով կարգավորվում եւ իրականացվում է իրացման գոտիներում օտարման գործընթացը, եւ պետբյուջեից վերադարձվել է բնակիչներից պահված եկամտահարկի գումարը:

Մենք օմբուդսմենի կոչումը պատկերացնում ենք ոչ թե քարոզչության, ոչ թե լրացուցիչ երկրորդ դատական համակարգի կամ դատական բարձրագույն ատյանի, այլ յուրաքանչյուր մարդու իրավունքների լրացուցիչ պաշտպանի, օրինական հարաբերությունները կարգավորողի դերում: Այդ դերում նրա գործունեությունը առավել օգտակար կլինի ընդհանրապես հասարակության համար:

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն

ԿԱՐԳ

«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով ուսանողների եւ աշակերտների համար անցկացվող «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» թեմայով լավագույն գրական ստեղծագործության ամենամյա միջազգային մրցույթի

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 Ներկա դրույթները որոշում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» թեմայով անցկացվող ամենամյա միջազգային գրական մրցույթի կարգավիճակը, նպատակները, խնդիրներն ու անցկացման կարգը:

1.2 Մրցույթի հիմնական նպատակն է Հայաստանի, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներին ու աշակերտներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի պատմական անցյալին, հավատ սերմանել նրա արյունոտ հանդեպ: Մրցույթը կնպաստի Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացմանը, ազգային միասնության ամրապնդմանը, խթան կհանդիսանա հայապահպանման գործին, կոչանդակի հայ մշակույթի, հայոց լեզվի եւ հայ գրականության ճանաչմանն ու տարածմանը:

1.3 Մրցույթն անցկացվում է Համաշխարհային հայկական կոնգրեսի կողմից՝ ՀՀ գիտության եւ կրթության նախարարության աջակցությամբ:

1.4 Մրցույթն անցկացվում է 2007 թվականի ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 1-ը:

2. Մրցույթի պայմանները

2.1 Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Արցախի եւ հայկական սփյուռքի ուսանողներն ու բարձր դասարանների աշակերտները:

2.2 Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ՝ շարադրությամբ, բանաստեղծությամբ, պատմվածքով, ակնարկով, հրապարակախոսությամբ եւ այլն:

2.3 Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում միայն նշված ժամկետում ուղարկված, թեմային ներկայացվող պահանջներին համապատասխանող, համակարգչով հավաքված աշխատանքները:

2.4. «Հայաստանը բոլոր հայերի հայրենիքն է» մրցույթին ուղարկված աշխատանքներում պետք է ներկայացվի, թե ինչու է այս կարգախոսը հայերիս համար սրտամոտ, հոգեհարազատ գաղափար, որի շուրջն էլ պետք է միավորվեն աշխարհով մեկ սփռված հայերը:

Միաժամանակ ցանկալի է, որ մրցույթի յուրաքանչյուր մասնակից իր ներկայացրած աշխատանքում փորձի տեսնել իր տեղն ու դերը հայ պետականության վերելքին, բարգավաճմանը ծառայելու, ազգային վերազարթոնքին իր անվերապահ մասնակցությունը բերելու գործում:

3. Մրցույթի կազմակերպման եւ անցկացման կարգը

3.1 Մրցույթն անցկացնելու նպատակով ձեւավորվում է կազմկոմիտե:

3.2 Կազմկոմիտեն ձեւավորում է աշխատանքային հանձնախումբ, հաստատում կազմը, ամփոփում մրցույթի արդյունքները:

3.3 Աշխատանքային հանձնախումբը.

մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները,

սահմանում է մրցանակային տեղերը եւ անվանակարգերը,

ստուգում եւ գնահատում է աշխատանքները,

որոշում է հաղթողներին եւ ներկայացնում կազմկոմիտեի քննարկմանը:

3.4 Ուղարկված աշխատանքները հետ չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում:

3.5 Մրցույթի կազմակերպիչներն իրենց իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում:

3.6 Մրցույթի արդյունքները ուսանողների եւ աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին:

4. Հաղթողների պարգեւատրումը

4.1 Մրցույթում առաջին երեք տեղերը շահած ուսանողները, ինչպես նաեւ աշակերտները կպարգեւատրվեն համակարգիչներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողները՝ արժեքավոր նվերներով, պատվոգրերով:

4.2 Մրցույթի արդյունքների ամփոփման եւ հաղթողների պարգեւատրման արարողությունը տեղի կունենա Երեւանում, 2007 թվականի հոկտեմբերին, «Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի Հայերի միության օրերը Հայաստանում եւ Արցախում» ծրագրի շրջանակներում:

5. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները

5.1 Ներկայացվող աշխատանքները պետք է լինեն գրագետ, հստակ, տրված թեմային համապատասխան:

5.2 Մրցութային աշխատանքները կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն եւ անգլերեն, մինչեւ 2007 թվականի հունիսի 15-ը (Հայաստանից, Արցախից եւ ԱՊՀ երկրներից ներկայացված աշխատանքներն ընդունվում են միայն հայերեն եւ ռուսերեն, անգլերեն աշխատանքներ ընդունվում են միայն հեռավոր արտերկրից):

5.3 Ներկայացված աշխատանքների ծավալը չպետք է գերազանցի 3 համակարգչային էջը:

5.4 Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային տարբերակով (Word ֆորմատով (*.doc, *.rtf) Windows-ի համար), վերին եւ ստորին լուսանցքները՝ 2, աջ եւ ձախ լուսանցքները՝ 2.5, կառուցիր տողը՝ 1.25, տպատառի չափը՝ 14 pt, ինտերվալը՝ 1: Աշխատանքները կարող են ներկայացվել նաեւ անձամբ կամ ուղարկվել փոստով:

5.5 Պարտադիր է ունենալ տիտղոսաթերթ, որտեղ պետք է նշված լինի.

- ազգանուն
- անուն
- հայրանուն
- ծննդյան թիվ
- հասցե
- հեռախոս
- էլեկտրոնային փոստի հասցեն

Ոաումնական հաստատության անվանումը եւ վայրը

6. Աշխատանքները կարող են ուղարկվել հետեւյալ հասցեներով

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Գլխավոր փողոց, Կառավարության 3-րդ շենք, 611 սենյակ

Հայաստանի Հանրապետություն, Երեւան, Տերյանի 69, 4 հարկ

Հեռ./Ֆաքս (37410) 522792
E-mail: mrcuyt2007@yahoo.com

ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

ՏԵՍՈՒՅՈՒՄ

Հայտարարություն «ՀՀՈՑ 03/01» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին

Գնման պահանջի դադարեցման պատճառով պատվիրատուն՝ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, հասցեն՝ ք. Երեւան, Հովսեփյան 95, չեղյալ է հայտարարում սույն թվականի մարտի 21-ին հայտարարված՝

ԼՈՏ1. Վայոց Ձորի տարածաշրջանային արտադրամասի (ՏԱ),

ԼՈՏ2. Գեղարքունիքի ՏԱ-ի,

ԼՈՏ3. Տավուշի ՏԱ-ի,

ԼՈՏ4. Լոռու ՏԱ-ի

«հեռուստակայանների մեծաքաշ ավտոճանապարհների քանուց եւ ջրհեղեղից վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ» գնման նպատակով հայտարարված բաց մրցույթը (ծածկագիր՝ «ՀՀՈՑ 03/01»), հիմք՝ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 38, կետ 1, «բ» ենթակետ:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ 2006 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրականացված ծրագրեր	Ֆինանսավորման աղբյուրներ	Ֆին. տարում օգտագործված միջոցների ընդհ. չափը	Վարչական-վարչական ծախսերի չափը	Ընդհանուր ծախսեր
1. Ծրագիր՝ գանձ է՝ համերգներկայացում նախագծի իրականացում	ա) Ուսանողական խտասալիկների օրինակներից իրացում	1737,0 դրամ	-	1057,0 դրամ (Ծառայությունների մատուցում, հոնորարներ)
2. Կենտրոնի համար նոր զգեստների պատվիրումձեռքբերում, բարեգործ. համերգների կազմակերպում	Ուսանողական խտասալիկների օրինակներից իրացում			680,0 դրամ (Կոտրեղենի, նյութերի, բեմինվի, ադրանքի ձեռքբերում)
				Ընդամենը՝ 1737,0 դրամ

ԿԵՆՏՐՈՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԻՄՆԱԴՐԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/69 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար «Տպագրական աշխատանքների» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 750 ՀՀ դրամ փոխանցել «Կոմունալ-նախագիծ» ՓԲԸ-ի «Արդշինվեստբանկ» Հ/Հ 247010010343 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ.՝ 28-93-25, Վ.Հովհաննիսյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրվա ժամը 10.00-ն:

Նորարար փորձառական արվեստի կենտրոնը
ներկայացնում է
9-րդ այլընտրանքային արվեստի փառատոն

ԻՄ ԱՉՔԵՐՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

Համադրողներ՝ **Ծոմակ եւ Ելիզավետա Շիրինյան**
Բացումը՝ ապրիլի 10-ին, ժ. 17-00
դիտման ժամերը. երկուշաբթի-ուրբաթ՝ 11:00-17:00,
շաբաթ՝ 11:00-15:00

Հայտարարություն

Սույն թվականի ապրիլի 26-ին, ժամը 14-00 ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ն կազմակերպում են հասարակական լսումներ ք. Քաջարանում հարստացուցիչ ֆաբրիկայի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Կոմիտասի 29 հասցեում:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

2 սեն. բնակարան Կիեւյան փողոցում: 63 քմ, 2-րդ հարկ, քարե շենք: 27-01-02, 093062061

www.azg.am
www.azgdaily.com

ՏՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՑՔԱՐԵԼ՝ 58-28-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 6.04.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: